

ԼՐԱՏՈՒ
ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԳԻՆԲԱՆԱԿՆԵՐԻՆ
ԼՍՈՑԻԼՑԻԼՑԻ

2 (4)



2024

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ARMENIAN LIBRARY ASSOCIATION

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

Կիսամյա գիտա-տեղեկատվական հանդես

HERALD

OF THE ARMENIAN LIBRARY ASSOCIATION

A Biannual Scientific-Informative Journal

2024

2(4)

ԵՐԵՎԱՆ- YEREVAN

2024

Հանդեսը լույս է տեսնում 2023 թվականից
տարին երկու անգամ (էլեկտրոնային)
The journal has been published since 2023
twice a year (electronic)

Հրատարակումը երաշխավորված է
Հայկական գրադարանային ասոցիացիայի կողմից
Publication is recommended by
Armenian Library Association

Խ մ ք ա գ ռ ա կ ա ն խ ո ղ ո Ւ Ր Ղ

Նախագահ՝ *Ռուզան Տոնոյան*

Գլխավոր խմբագիր՝ *Մայա Գրիգորյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Արմինե Հովհաննիսյան*

Անդամներ՝ *Գևորգ Բարդակչյան, Լևոն Ավդոյան, Արա Ղազարյան,*

Ալբերտ Խատատյան, Տիգրան Զարգարյան, Վահե

Թորոսյան, Գագիկ Սուքիասյան, Վիկտորիա Խուրշուդյան,

Արարատ քին. Պողոսյան, Ավագ Հարությունյան,

Համո Սուքիասյան, Միհրան Մինասյան, Ռաֆիկ Ղազարյան

Editorial Board

Chair: Ruzan Tonoyan

Editor-in-Chief: Maya Grigoryan

Executive Secretary: Armine Hovhannisyan

Members: Gevorg Bardakchyan, Levon Avdoyan, Ara Ghazaryan, Albert
Kharatyan, Tigran Zargaryan, Vahe Torosyan, Gagik Sukiasyan,
Viktoria Khurshudyan, Priest Ararat Poghosyan, Avag Harutyunyan,
Hamo Sukiasyan, Mihran Minasyan, Rafik Ghazaryan

e-ISSN 2953-8092

DOI: 10.54503/2953-8092

ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Հարգելի՛ ընթերցողներ

2023 թվականից Հայկական գրադարանային ասոցիացիան սկսեց հրատարակել «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» գիտա-տեղեկատվական հանդեսը՝ ձևավորելով ոլորտի խնդիրների ու ձեռքբերումների քննարկման յուրատեսակ մի հարթակ: Ձեզ ենք ներկայացնում հանդեսի 2024 թ. երկրորդ համարը, ուր ներառված հոդվածները խմբավորված են «Տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Մանկական գրադարաններ», «Մշակութային ժառանգություն», «Կրթական հաստատությունների գրադարաններ», «Հայկական գրադարանային ասոցիացիա» խորագրերի ներքո:

Գրադարանային ոլորտում օգտագործվում են բազմաթիվ տերմիններ, որոնցից շատերի կիրառումը հայ իրականության մեջ նորություն է: Գրադարաններում «մենթորություն» հասկացությունը դեռևս ամբողջապես չի ընկալվում, քանի որ շատերի համար անհասկանալի են գործառույթներն ու նպատակները: Մինչդեռ այս հասկացության ճիշտ ըմբռնումն ու կիրառումը հնարավորություն է տալիս ընդլայնել գրադարաններում վերապատրաստման ծրագրերն ու թիրախները:

Մեկ այլ կարևոր խնդիր է գրադարաններում էլեկտրոնային ծառայությունների մատուցումը, ընթերցողների հետ առցանց շփվելու հնարավորությունների ընդլայնումը: Որոշ գրադարաններ արդեն ձեռքբերումներ ունեն այս ոլորտում և կարող են կիսվել դրանցով: Փորձի փոխանակումն անպայման ուղեկցվում է հարցումների արդ-

ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

յունքում հավաքված արդյունքների վերլուծությամբ, ինչը հավաստում է կատարված աշխատանքի արդյունավետությունը:

21-րդ դարի գրադարանն անհնար է պատկերացնել առանց հեղինակավոր գրառումների համակարգի: Սա պահանջում է համապատասխան գիտելիքների և գրագետ մուտքագրման հմտությունների առկայություն: Յուրաքանչյուր շտեմարան պետք է ունենա որոնման ճկուն համակարգը, այլապես չի ծառայի իր նպատակին: Հեղինակավոր գրառումներն այդ համակարգի առանցքն են:

Այսօր, առավել քան երբևէ, ուշադրության կենտրոնում են մանկական գրադարանները, ուր բարեփոխման աշխատանքներ պետք է կատարել յուրաքանչյուր օր: Մանուկների հետ աշխատանքը, բացի գրադարանային մասնագիտական հմտություններից, պահանջում է նաև հոգեբանական ու մանկավարժական մոտեցում: Բնականաբար, մանկական գրադարանների նոր ձեռքբերումները մեր ուշադրության կենտրոնում են: Զուգահեռ ներկայացրել ենք նաև դպրոցական գրադարանի խնդիրները, որոնց լուծումը կախված է ինչպես գրադարանավարի, այնպես էլ կազմակերպության ղեկավարների ճիշտ աշխատանքից:

Ամսագրի առանցքային խնդիրներից է մնում հայ տպագիր մշակութային ժառանգության վերհանումը: Եղիշե Չարենցի անձնական գրադարանը և հայերեն արժեքավոր տպագրությունների մասնավոր հավաքածուն այդ ժառանգության մի մասն են: Արժևորելով այս հավաքածուները՝ մեկ անգամ ևս շեշտում ենք, որ հայկական գրատպությունն ուսումնասիրության անսպառ աղբյուր է:

Ներկայացնելով ամսագրի հերթական համարը՝ ակնկալում ենք ստանալ մեր ընթերցողների և ոլորտի մասնագետների ակտիվ արձագանքները:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՄԵՆԹՈՐՈՒԹՅՈՒՆ

**Գրադարանային մենթորությունը՝ որպես մասնագիտական
առաջընթացի գործիքակազմ***

ՀՏԴ: 02

DOI: 10.54503/2953-8092.2024.2(4)-5

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի գիտական գրադարան**

ORCID: [0009-0007-2579-1346](https://orcid.org/0009-0007-2579-1346)

Հոդվածի նպատակն է պարզաբանել մենթորային հարաբերությունները, նպաստել գրադարանային ոլորտում դրա կիրառելիության մեծացմանը՝ գիտական գրադարաններում աշխատող մասնագետների վերապատրաստման համատեքստում: Ներկայացրել ենք մենթորության հիմնական նպատակները, քուլիինգի հետ նմանությունները և տարբերությունները, գրադարանային մենթորության նպատակները և տեսակները:

The article aims to enhance understanding of mentoring relationships and promote their practical application in the library sector, specifically for training specialists in academic libraries. It outlines the primary objectives of mentoring, distinguishes it from coaching, and explores the goals and various types of mentoring within the library context.

Բանալի բառեր՝ Մենթոր, մենթի, մենթորությունը կրթական միջավայրում, գրադարանային մենթոր, գիտական գրադարանների մենթոր, մասնագիտական վերապատրաստում, մենթորային փոխհարաբերություններ, քուլիինգ:

* Հոդվածը ներկայացվել է 08.11.2024, գրախոսվել է 29.11.2024, ընդունվել է տպագրության 02.12.2024:

The article was submitted on 08.11.2024, reviewed on 29.11.2024 accepted for publication on 02.12.2024.

Ինչպես հղել՝ Հովհաննիսյան, Ա. (2024), Մենթորություն: Գրադարանային մենթորությունը՝ որպես մասնագիտական առաջընթացի գործիքակազմ, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(4), 5-20.

[https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-5)

How to cite (APA style): Hovhannisyan, A. (2024). Mentoring: Library Mentoring as a Toolkit for Professional Progress, *Herald of the Armenian Library Association*, 2(4), 5-20. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-5)

Ներածություն

Մենթորության գաղափարի ձևավորումը իրականացվել է Հին Հռոմում: Հին հունական դիցաբանության մեջ Ալկիմոսի որդին՝ Մենտորը (հին հունարեն՝ Μέντωρ) Ոդիսևսի խորհրդատուն և ընկերն էր, նրա որդու՝ Տելեմակոսի ուսուցիչը: Երբ հին հույն էպոսագիր Հոմերոսի «Ոդիսականում» Ոդիսևսն իր հայտնի ճամփորդությանն է գնում, պետությունն ու որդու խնամքը վստահում է Մենտորին (ΒΡΟΚΓΑΥՅ, ΕΦΡΟΗ 1896, 100): Մենթոր տերմինը նկարագրական իմաստով ներկայացնում է դաստիարակի պարտականությունները Ոդիսևսի որդու հանդեպ:

Մենթորության հիմնախնդիրը եղել է 20-րդ դարասկզբի փիլիսոփաների, մանկավարժների, հոգեբանների ուսումնասիրության առարկան (Ե. Անդերսոն, Շանոն, Մ. Ջաքոբի և այլն): «Մենթորություն» տերմինը փոխառված է անգլերեն mentorship¹ բառից, որը նշանակում է փոխհարաբերություն, այսինքն՝ ավելի փորձառու, գիտակ մարդն օգնում, ուղղորդում է քիչ փորձառու կամ ավելի քիչ գիտելիք ունեցող մարդուն:

Այդ տերմինների մանկավարժական, գրադարանային և այլ ոլորտների գործառույթների սահմանազատումը դեռևս պետք է որոշվի իրավական կարգավորման շրջանակում:

¹ <https://dictionary.cambridge.org/dictionary/english/mentorship> (02.12.2024):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Ժամանակակից արտասահմանյան կրթական համակարգում «դաստիարակ»-մենթորը (անգլերեն՝ tutor) ուսուցչի, դասախոսի օգնական կամ համալսարանի ավագ ուսանողն է, ով վարում է մասնավոր պարապմունքներ: Նրա գործունեության արդյունքում անհատը պետք է ձեռք բերի նոր գիտելիքներ որոշակի առարկայի վերաբերյալ, պետք է ստեղծվի զարգացման համար նպաստավոր կրթական միջավայր, ուր առաջնայինը նպատակների ձևավորումն է (УШНИЦКАЯ 2023, 33):

Դաստիարակը, տվյալ դեպքում՝ մենթորը, տարիքային սահմանափակում չունի. կարևոր պահանջը՝ մասնագիտական կայացումն է իր ոլորտում: Մենթորության վերաբերյալ դեռևս գոյություն չունի ամբողջական և հստակ սահմանում, չկան նաև հստակ չափորոշիչներ: Առկա են միայն գիտական ձևակերպումներ.

✓ Մենթորը «...մարդ է, ով հանդես է գալիս որպես ուրիշի համար ուղեցույց և խորհրդատու»²:

✓ Մենթորը «...մարդ է, ով ակտիվորեն օգնում է զարգացնել մենթիի կարիերան (ինչով տարբերվում է պասիվ աջակիցից), ով «բարձր ցուցանիշ» ունի մասնագիտական ոլորտում, հանձնառու է դյուրացնել պակաս փորձառու մարդու կարիերան՝ ծառայելով որպես օրինակ և տրամադրելով համապատասխան աջակցություն» (KIRCHMEYER 2005, 216):

Հայ մշակույթի պատմության մեջ ևս, հատկապես գրերի գյուտից հետո, չափազանց արժևորվել է հայ դաստիարակի դերը, երբ Մեսրոպ Մաշտոցի հիմնած դպրոցում ձևավորվել են առաջին հայ ուսուցիչները: Դա նպաստել է ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների նոր որակի ձևավորմանը:

² Oxford English Dictionary, 1750, ինչպես նշված է Ross, 2013, p. 414

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Մենթորության և առհասարակ մենթորային հետազոտության համար կարևոր են նաև ֆինանսավորման աղբյուրները: Մենթորական ծրագրերը արտերկրում ֆինանսավորվում են ամենաբարձր մակարդակներում: Օրինակ, ԱՄՆ Կոնգրեսը ֆինանսավորում է երիտասարդների մենթորական հատուկ դրամաշնորհային ծրագիրը՝ «Երիտասարդների մենթորական դրամաշնորհ» վերնագրով, որը ղեկավարվում է ԱՄՆ արդարադատության նախարարության Անչափահասների արդարադատության և հանցագործությունների կանխարգելման գրասենյակի կողմից (OJJDP): Այն տրամադրում է հսկայածավալ միջոցներ (107 մլն ԱՄՆ դոլար 23 տարվա ընթացքում)³ մենթորական կազմակերպություններին աջակցելու համար: Տարիների ընթացքում Երիտասարդական մենթորական դրամաշնորհը և Ազգային մենթորական ռեսուրս կենտրոնը երկրի տարբեր նահանգներում աջակցել են հազարավոր մենթորական ծրագրերի (SMIGIELSKI, LANING, DANIELS 2014, 261)³:

Հայաստանյան իրականության մեջ մենթորությունն իրականացվում է տեղային մակարդակով և ունի տարերային բնույթ: Գրադարանային միջավայրում այն գործանականում գրեթե բացակայում է: Հետևաբար, ֆինանսավորման խնդիրը նույնպես որոշվում է հայեցողաբար: Այս թեման, սակայն, առաձին ենթահարց է մենթորային ծրագրերում և կարիք ունի առանձին լուսաբանման:

Մենթորային հարաբերություններ: Մենթորի բնութագրեր, տեսակները, փարբերությունները

Մենթորության գիտական սահմանման մեջ ներկայում միավորված են երիտասարդ սերնդին փորձի փոխանցման նպատակային մոտեցումը, սերունդների միջև կապերի ամրապնդումը, հոգեբա-

³ Youth Mentoring Grant <https://www.mentoring.org/policy-agenda/public-funding-for-mentoring/> (02.12.2024)

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Նական աջակցության հնարավորությունը: Մենթորությունն ուսուցման ու զարգացման համագործակցություն է: Մենթորը պետք է փոխանցի իր փորձը, գիտելիքները, հմտությունները, խթանի այն անհատների հոգեբանական, մտավոր և մասնագիտական զարգացումը, ովքեր համարվում են իր հովանավորյալները՝ մենթինները: Մենթին (ֆրանսերեն՝ *protégé* - սան) իր հերթին պետք է ջանք չխնայի՝ լավագույն արդյունք ապահովելու և ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելու համար:

Կրթական համակարգում մենթորության ներդրումը կարևորվում է նաև նրանով, որ չկա պարտադրման տարր, այն հիմնված է բնականոն, կամավոր սկզբունքի վրա:

Ժամանակակից գիտական պրակտիկայում մենթորը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

- ✓ մասնագիտական իրավասություն,
- ✓ ազատ հաղորդակցություն,
- ✓ բազմաբնույթ մտածողություն,
- ✓ առաջնորդության հմտություններ,
- ✓ զարգացած անհատականության ընկալման հմտություններ,
- ✓ մանկավարժական տակտ,
- ✓ ստեղծագործականություն,
- ✓ մտածողության ճկունություն,
- ✓ արտահայտված շարժունակություն,
- ✓ կյանքի ակտիվ դիրքորոշում:

Մենթորության՝ ներկայում ձևավորված մոդելները կամ տեսակները հետևյալն են.

1. *Թիմային մենթորություն (Team Mentoring)* – մենթորության նորարարական տեսակ, որի մեջ ներգրավված են տարբեր

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

հմտություններ մեկից ավելի մենթորներ: Ուստի, այն փոխշահավետ և փոխուսուցողական պրոցես է և՛ մենթորի և՛ մենթիի համար:

2. *Խմբային մենթորություն (Group Mentoring)* - մի քանի մենթիներին ուղղորդում է մեկ մենթոր, մեկ խմբի շրջանակում:

3. *Անհատական մենթորություն (Individual Mentoring)* - ավանդական մենթորության ձև, երբ մեկ մենթորին կցվում է մեկ մենթի:

4. *Ֆունկցիոնալ մենթորություն (Functional Mentoring)* - սա ներառում է ծրագրի վրա հիմնված մենթորական հարաբերություններ, կոնկրետ հմտությունների ձեռքբերման կամ նախապես սահմանված նախագծի համար: Օրինակ՝ դրամաշնորհային առաջարկ գրելը, կրթաթոշակային ծրագիր ստեղծելը կամ կենտրոնացված ձեռագիր գրելը⁴:

5. *Էլեկտրոնային մենթորություն (E-Mentoring)* - առցանց տեսակ, երբ մենթորն ու մենթին միմյանց հետ շփվում են միայն համացանցով: Այս տեսակին հակադրվում է առերես շփման տեսակը, երբ համագործակցությունը տեղի է ունենում կենդանի շփման ընթացքում:

Մենթորությունը գրադարանային ոլորտում: Արդասահմանյան փորձ

Պրոֆեսոր Չիորացին իր «Գրադարանավարներ. անցյալն ու ներկան՝ որպես ապագայի նախաբան» դասախոսության մեջ, սահմանել է գրադարանային կրթության կարևորությունը ապագայի մարտահրավերների համատեքստում (CHIORAZZI 2014, 70):

⁴ Models of Mentoring <https://medicine.iu.edu/faculty/professional-development/mentoring/models-of-mentoring> (02.12.2024)

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Արևմտյան բազմաթիվ գիտնականեր գրադարանային մենթորությունն ուսումնասիրել են հիմնականում գործնական մոտեցումներով: Օրինակ՝ Ալիզ Ջորդանը ներկայացնում է պաշտոնական մենթորական ծրագրի ուսումնասիրությունը՝ առանցքային համարելով մենթորական պաշտոնական հարաբերությունների նկարագրությունը (JORDAN 2019, 9): Հետազոտության մեջ նա անդրադարձել է նաև գրադարանների ղեկավարության և կառավարման ասոցիացիայի մենթորական ծրագրին մասնակցող գիտական գրադարաններին, այստեղ աշխատող մասնագետների միջանձնային հարաբերություններին, գործնական մոտիվացիային: Արդյունքը հետևյալն է՝ մենթորությունն ազդում է աշխատանքի և կարիերայի վրա, մենթիների՝ աշխատավայրի նկատմամբ վերաբերմունքի վրա:

Գրադարանավարները «մենթոր» հասկացության շրջանակում

Գրադարանավարի մենթորական կարիքները կախված են ինչպես կոնկրետ անհատներից, այնպես էլ այն գրադարանների հասարակական ու կառուցվածքային բնույթից, որտեղ նրանք պաշտոնավարում են: Պաշտոնավարման մեկնարկային կետում գտնվողները կարիք ունեն որևէ մեկի առաջնորդության, ով պատկերացնում է իրենց ակնկալիքները, կառույցի ռազմավարությունը, չգրված գործոնները, որոնց մասին նրանք չէին իմանա առանց գիտակ աջակցության: Այսինքն, ելնելով գրադարանավարի պաշտոնից և որակավորումից, գրադարանավարի անձնային հատկանիշներից՝ նրանց մենթորային կարիքները տարբերվում են:

Կարևոր է կիրառել ուսուցման տարբեր ձևեր, որոնք միտված են գրադարանավարների մասնագիտական զարգացմանը: Էդվարդ Բիլդոն և Պամելա Կարսոնը գտնում են, որ ուսուցումը գրադարանավարի համար շարունակական և էական գործոն է: Այն ընդհա-

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

նուր առմամբ ուղղորդվում է ինքնուրույն, ոչ ֆորմալ է և մեծապես կախված գործնական կիրառումից (BILODEAU, CARSON 2015, 6):

Գիտական կառույցների գրադարանավարների դեպքում առաջին հայացքից շարունակական կրթության հնարավորություններն ավելի լայն են, սակայն պետք է նշել, որ նրանք նույնպես մենթորական հարաբերությունների կարիք ունեն: Գիտական գրադարանների մենթորական ծրագրերն ավելի մեծ ներդրում են պահանջում, քանի որ դրանք անցնում են հրատարակչական, գիտական հետազոտական գործունեության ոլորտ: Սա նույնպես ապագայի մարտահրավերներից է գրադարանավարների համար:

Մենթոր, թե՛ մարզիչ (քուլչ)

Գրադարանագիտության և տեղեկատվական գիտության ոլորտում շատ մասնագետներ, առանց տեղեկատվական ընկերություններում աշխատանքային փորձի, հաճախ մնում են անորոշ վիճակում, թե ինչպես նոր աշխատանքային նոր միջավայրում կիրառեն տեսական գիտելիքը: Այս բացը լրացնելու համար մենթորական և մարզչական հնարավորությունները հաճախ օգտագործվում են (կամ պարտադիր)՝ նոր ուսուցանվողներին անհրաժեշտ հմտություններով, գիտելիքներով կամ ցանցային կապով ապահովելու համար:

Ինչպե՞ս են մենթորությունը և քուլչինգը կապված մասնագիտական զարգացման հետ: Հարցի պարզաբանման համար 2015-2016 թթ. հարցազրույցներ են անցկացվել Կանադայի, Նոր Զելանդիայի և Միացյալ Նահանգների գրադարանավարների հետ՝ նրանց մենթորական և մարզչական փորձի վերաբերյալ: Բացի այդ, մասնակիցներին առաջարկվել է սահմանել և՛ «մենթորություն», և՛ «քուլչինգ» հասկացությունները: Հարցազրույցները դասավորվել են՝ ըստ կատեգորիաների (HUSSEY, CAMPBELL-MEIER 2021, 510):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Արդյունքում հաստատվել է, որ մենթորությունը և քուչինգը փոխկապակցված հասկացություններ են, որոնք միտված են մասնագիտական զարգացմանը, սակայն ունեն տարբեր նպատակներ: Մենթորությունը սովորաբար ներառում է աշխատակիցների վերապատրաստման համակարգ, որի համաձայն ավագ կամ ավելի փորձառու անհատը նշանակվում է խորհրդատու կամ ուղղորդող կրտսեր վերապատրաստվողի համար՝ ներառյալ հետադարձ կապ և աջակցություն տրամադրելը: Անկախ հարաբերությունների տեսակից՝ մենթորն ընկալվում է որպես ավագ կամ փորձառու մասնագետ, որն աշխատում կամ ուղղորդում է նորեկին տվյալ մասնագիտության մեջ:

Քուչինգն ավելի շատ կենտրոնացած է ավանդական վերապատրաստման մեթոդների վրա: Այն հաճախ ներառում է ավագ մասնագետների, որոնք ուղղորդում են մեկին, ով պետք է զարգացնի որոշակի հմտություն կամ հատկանիշ:

Մենթորությունը հաճախ նկարագրվում է ենթադրյալ օգուտների տեսանկյունից: Օրինակ՝ մենթորները կարող են հստակ խորհուրդներ տալ կազմակերպության աշխատանքի վերաբերյալ, օգնել բացահայտելու հնարավորությունները: Քուչինգը, ընդհակառակը, ընդհանուր առմամբ համահունչ է հստակ սահմանված ակնկալիքների և արդյունքների հետ: Մարզիչները կարող են օգնել նպատակներ դնելիս, զարգացնել որոշակի հմտություն, որն անհրաժեշտ է պաշտոնի համար: Երկուսն էլ բացահայտ գործողություններ են, որոնք կարող են լռելյայն նպաստել բարելավմանը և աճին, երբ նոր հնարավորություններ են առաջանում:

Ե՛վ մենթորությունը, և՛ քուչինգը կարևոր են, սակայն մասնագիտական շրջանակում նրանցից ոչ մեկը վերջնական սահմանում չունի: Մենթորական հարաբերությունների շրջանակում մեկ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

անձ ստանձնում է լսելու, խորհուրդներ և ուղղորդումներ տրամադրելու դերը:

Մենթորական ծրագրեր (ուսանող-աշխատակիցների ներգրավումը գիտական գրադարանների մենթորային ծրագրերում)

Մենթորության ծրագրերը փոխադարձաբար օգուտ են տալիս գիտական գրադարաններին և ուսանողներ-մենթիններին:

Գիտական գրադարանների գրադարանային մենթորության ծրագրերի հիմնական առավելությունն այն է, որ ուսանողները կամավոր մասնակցում են գրադարանի աշխատանքներին, լրացնում են աշխատուժի պակասը, միևնույն ժամանակ բարձրացնում սեփական հնարավորությունները: Բացի այդ, մենթորության ծրագրերն օգնում են ուսանողներին ձեռք բերել և ամրապնդել հմտություններ գիտական հաջողության և ապագա աշխատանքի համար: Գիտական գրադարանների առավելություններից մեկն այն է, որ ուսանող աշխատակիցները գրադարանին տրամադրում են, այսպես կոչված, «կողմնակի» հայացք, քանի որ «...գրադարանավարները տեսնում են այն, ինչ ուսանողները կարծում են կարևոր, անտեսված կամ շփոթեցնող գրադարանի համար»: Ուսանող-աշխատակիցների տրամադրած մեկ այլ առավելությունն այն է, որ նրանք համալրում են աշխատողների շարքերը աշխատանքային ժամերին:

Նյու Յորքի Մերսի համալսարանի գրադարանի տնօրեն Միրանդա Մոնտեզը գտնում է. «Գրադարանները, որոնք զարգացնում և դաստիարակում են ուսանող-աշխատակիցների, բազմաթիվ առավելություններ են ստանում» (BRELAND, MONTEZ, PAGE 2024, 2):

Հետաքրքիր փորձ է ուսանող-աշխատակից գրադարանավարների ներգրավումը մենթորական փորձարարական ծրագրերում: Ուսանողներին համագործակցային նախագծերում ներգրավելը նպաստում է ուսանողների գիտելիքների ավելացմանը՝ միաժամա-

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Նակ մեծացնելով գրադարանի հնարավորություններն ու ազդեցությունը: Նման ձևով ուսանողները կապվում են մարդկանց և նպատակների հետ՝ ուղղորդվելով դեպի գրադարանային գործը: Ջոզեֆ Էվերեթը՝ Բրիգամ Յանգ համալսարանի գրադարանավարն, այսպիսի ձևակերպում է տալիս. «Գիտական գրադարանները գիտակցում են այս առավելությունները՝ ուսանողներ-աշխատակիցներին հնարավորություններ տալով հարստանալու աշխատանքային փորձով, որը գերազանցում է ավանդական առաջադրանքների վրա հիմնված գրադարանային պարտականություններին և ուսանող-գրադարանավար հարաբերություններին» (EVERETT, BISCHOFF 2021, 403):

Աշխատավայրում փորձառնական ուսուցումը կարող է օգուտ տալ նաև գրադարանային կարիերայի հակված ուսանողներին: Դրական փորձի դեպքում՝ նրանցից մի քանիսը կարող են ընտրել գրադարանային ոլորտը:

Մենթորական ծրագրերի արդյունավետության գնահատումը կոնկրետ կրթության դեպքում կարող է դիտարկվել 4 գործոններով.

- ✓ Աջակցություն պրոֆեսորադասախոսական կազմին կամ ղեկավարությանը,
- ✓ համապատասխան ռեսուրսների առկայություն,
- ✓ մենթորությունը՝ որպես հիմնական մշակութային արժեք և ինստիտուցիոնալ պատասխանատվություն,
- ✓ համապատասխանեցում կազմակերպչական նպատակներին և խնդիրներին (FOUNTAIN, NEWCOMER 2018, 484):

Էլեկտրոնային հարցման ամփոփում

Հոդվածում արծարծվող հարցերի շուրջ մեր կողմից իրականացվել է էլեկտրոնային հարցում, որին մասնակցել է ավելի քան 50 մարդ: Ձևավորվել է թիրախային 2 խումբ.

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

✓ Գրադարանավարաներ, գրադարանային աշխատակիցներ (այլ մասնագիտությունների մարդիկ, որոնք աշխատում են գրադարանում),

✓ Կրթական ոլորտի մարդիկ (բուհերի դասախոսներ, ուսանողներ, մագիստրոներ և ասպիրանտներ):

Հարցման ձևը ընտրվել է առավել անկաշկանդ, արագ և արդյունավետ պատասխաններ ստանալու ակնկալիքով:

Հարցվածների 40%-ը կամ գրադարանավարներ են, կամ այլ մասնագետներ, որոնք աշխատում են գրադարանում, որից 77,5%-ը ծանոթ է «մենթոր» տերմինին, իսկ 22,5%-ը՝ տեղյակ է մասամբ:

Գրադարանային մենթորության մասին տեղյակ է հարցվածների 47,5%-ը, 65%-ը երբևէ չի մասնակցել մենթորային ծրագրերին:


Քանի որ մենթորությունը համարվում է նաև կամավորական աշխատանք, ուստի հարցվածների գրեթե 80%-ը համարել է այն դրական գործընթաց:

Հարցվածների 55%-ը իրեն տեսնում է մենթորի դերում, 25%-ը՝ մենթիի, իսկ 25%-ը՝ «այլ» պատասխան է ներկայացրել:

Հարցումների արդյունքներն ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ մենթորային աշխատանքը ընդհանուր առմամբ հայտնի բնագավառ է, սակայն ինտեգրված չէ գրադարանային միջավայրում: Այնուհանդերձ, գրադարանավարներն իրենց տեսնում են առավելապես դաստիարակի դերում: Այստեղ դեր է խաղում մեր մենթալիտետին հատուկ այն մտայնությունը, որ եթե կա որոշակի մեծ աշխատանքային փորձ, դա թույլ է տալիս իրականացնել ուսուցչի, դաստիարակի դերը: Մինչդեռ հարափոփոխ աշխարհում գրադարանավարները պետք արագ արձագանքեն նոր իրողություններին և արագ վերարտադրեն դրանք, հատկապես եթե խոսքը կրթական հաստատությունների գրադարանների մասին է:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Գրադարանային մենթորինգի առաջարկվող մոդել, որը ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1.

Գրադարանային մենթորինգի առաջարկվող մոդելը

Ամփոփում

Գրադարանների և գրադարանային աշխատանքների ապագան նոր գիտելիքի և աշխատանքային նոր գործիքակազմի ներառումն է գրադարան: Այդ գործիքակազմի փորձված, արդյունավետ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

մենթորներից են մենթորային աշխատանքները, որոնք պետք ներառվեն նաև օրենսդրական դրույթների մեջ՝ որպես աշխատանքային մոտիվացիայի, խրախուսման գործնական միջոց: Մեզանում բացակայում են մենթորական աշխատանքների օրենսդրական կարգավորումները. դրանք ունեն միայն նկարագրական ձևակերպումներ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում. օրենքի հավելված հանդիսացող դրույթում կա հայերեն ձևակերպում. «Փորձնակ գրանցելու և աշխատանքներին մասնակցության առանձնահատկությունները սահմանելու մասին»⁵: Մինչդեռ գրադարանավարները քաղծառայողներ չեն:

Մենթորային աշխատանքների համար անհրաժեշտ է սահմանել կարգ, մշակել համապատասխան չափորոշիչներ:

Մենթորային աշխատանքների շարունակականությունն ապահովելու համար պետք է լինեն ֆինանսավորման (ֆորմալ և ոչ ֆորմալ) մշտական աղբյուրներ: Դրանք պետք է իրականացնել կավորական-խրախուսելի հիմքի վրա:

Օգրագործված գրականության ցանկ (References)

BILODEAU, CARSON 2015 – Bilodeau, E., Carson, P. (2015), The Role of Communities of Practice in the Professional Education of Academic Librarians, *Education for Information (el. journal)*, 1-2(31), 25-51;

BRELAND, MONTEZ, PAGE 2024 – Breland, M., Montez, M., Page, Y. (2024), Where Do We Start? Building a Library Mentorship Program for Undergraduate Students, *Library leadership&Management (el. journal)*, 3(37), 1-15;

CHIORAZZI 2014 – Chiorazzi, M. (2014), Mentoring, Teaching, and Training the Next Generation of Law Librarians: Past and Present as Prologue to the Future, *Law Library Journal (el. journal)*, 1(106), 69-83;

⁵ ՀՀ օրենքը Քաղաքացիական ծառայության մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910> (02.12.2024): Տե՛ս նաև ՀՀ փոխվարչապետ: Որոշում N 439-Ն 12 դեկտեմբերի 2008 թ.:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

EVERETT, BISCHOFF 2021 – Everett, J., Bischoff, M. (2021), Creating Connections: Engaging Student Library Employees through Experiential Learning, *Journal of Library Administration (el. journal)*, 4(61), 403-421;

FOUNTAIN, NEWCOMER 2018 – Fountain, J., Newcomer K. (2016), Developing and Sustaining Effective Faculty Mentoring Programs, *Journal of Public Affairs Education (el. journal)*, 4(22), 483-506;

HUSSEY, CAMPBELL-MEIER, 2021 – Hussey L., Campbell-Meier J. (2021), The Role of Communities of Practice in the Professional Education of Academic Librarians, *Journal of Librarianship and Information Science (el. Journal)*, 3(53), 510-521;

JORDAN 2019 – Jordan, A. (2019), An Examination of Formal Mentoring Relationships in Librarianship, *The Journal of Academic Librarianship (el. Journal)*, 6(45), Volume 45, Issue 6, November 2019, 1-9;

KIRCHMEYER 2005 – Kirchmeyer, C. (2005). The Effects of Mentoring on Academic Careers over time: Testing Performance and Political Perspectives, *Human Relations (el. journal)*, 5(58), 637-660;

SMIGIELSKI, LANING, DANIELS 2014 – Smigielski, E., Laning, M., Daniels, C. (20174, Funding, Time, and Mentoring: A Study of Research and Publication Support Practices of ARL Member Libraries, *Journal of Library Administration (el. journal)*, 4(54), 261-276;

БРОКГАУЗ, ЕФРОН 1896 – *Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, Том. 19*, С. Петербург, 1896, 476 [*Entsiklopedicheskii slovar Brokkauza i Efrona, tom 19*, S. Peterburg, 1896, 476];

УШНИЦКАЯ 2023 – Ушницкая, С. (2023), Наставник, Тьютор, Ментор: разграничение понятий Mentor, Tutor, Mentor: Differentiation of Concepts, *Народное образование Якутии*, Якутск, 4(129), 33-36 [Ushnitskaya, S. (2023), Nastavnik, Tyutor, Mentor: razgranichenie panyatii Mentor, Tutor, Mentor: Differentiation of Concepts, *Narodnoe obrazovanie Yakutii*, Yakutsk, 4(129), 33-36].

MENTORING

Library Mentoring as a Toolkit for Professional Progress

ARMINE HOVHANNISYAN

Scientific Library of the Armenian State University of Economics

Keywords: Mentor, entee, mentoring in an educational environment, library mentor, academic library mentor, professional training, mentoring relationships, coaching.

The future of libraries and library work is directly proportional to the readiness to introduce new knowledge and new working tools into the library. One of the proven, effective methods of this toolkit is mentoring.

Including mentoring in legislative provisions as a practical means of motivation and encouragement is essential for formalizing its role in professional development within libraries. The current lack of legislative regulations for mentoring work in Armenia, as you note, leaves it undervalued and inconsistently applied. While the RA Law "On Civil Service" mentions mentoring descriptively, it does not adequately address the unique professional landscape of librarians, who are not classified as civil servants.

To ensure the continuity of mentoring work in libraries, establishing permanent sources of funding is crucial. Combining formal and informal funding mechanisms with a voluntary-incentive approach can create a sustainable system that encourages participation while fostering long-term success.

21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

HOW CAN LIBRARIES EMPATHIZE WITH THEIR USERS AND TRANSFORM THEIR DIGITAL EXPERIENCES?*

ՀՏԴ: 02+004

DOI: 10.54503/2953-8092.2024.2(4)-21

TATEVIK ZARGARYAN

American University of Armenia, AGBU Papazian Library

ORCID: [0009-0000-9832-6225](https://orcid.org/0009-0000-9832-6225)

Թվային աշխարհը և արհեստական բանականությունը շար արագ զարգանում և փոխակերպում են ծառայությունները: Ինչպե՞ս կարող են գրադարանները ապրումակցել իրենց օգտատերերին և փոխակերպել իրենց թվային փորձառությունները: ՀԱՀ ՀԲԸՄ Փափազյան գրադարանի Ակադեմիական աջակցության և Համակարգերի և էլեկտրոնային ծառայությունների բաժնի աշխատակիցները կատարել են հետազոտություններ և կիրառել են նոր մոտեցումներն ու գործիքները՝ գրադարանի վեբկայքի և օգտատերերի փորձառության վերաձևավորման համար: Օգտագործվել է դիզայն մտածողության մեթոդաբանությունը՝ օգտատերերին հասկանալու, նրանց կարիքներն ու խնդիրները պարզելու համար: Հարցումներն ու Google Analytics-ը կիրառվել են տվյալներ հավաքելու, արդյունքները վերլուծելու և դրանք կիրառելի ծառայությունների վերածելու նպատակով: Figma-ն օգտագործվել է կայքի օգտատերերի հոսքերի և բովանդակության դասավորության նախատիպեր մշակելու համար:

The rapid evolution of the digital world and artificial intelligence (AI) is reshaping services across industries, offering unprecedented opportunities for

* Հոդվածը ներկայացվել է 02.12.2024, գրախոսվել է 10.12.2024, ընդունվել է տպագրության 12.12.2024:

The article was submitted on 02.12.2024, reviewed on 10.12.2024 accepted for publication on 12.12.2024.

efficiency, personalization, and innovation. How can libraries empathize with their users and transform their digital experiences? AUA AGBU Papazian Library Academic Support and Systems and Electronic Services staff conducted research and applied new approaches and tools to redesign the library's website and user experience. Design Thinking methodology was used to understand users, identify their needs and problems. Surveys and Google Analytics were used to collect data, analyze the results, and turn them into usable services. Figma was used to prototype the website's user flows and content layout.

Բանալի բառեր՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանի գրադարան, էլեկտրոնային ծառայություններ, Դիզայն մտածողություն, հետազոտության արդյունքներ, տվյալների վերլուծություն, վեբկայք, օգտատերեր:

Ինչպես հղել՝ Չարգարյան, Տ. (2024), Ինչպե՞ս կարող են գրադարանները ապրումակցել իրենց օգտատերերին և փոխակերպել իրենց թվային փորձառությունները, *Հրապու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(4), 21-46. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-21](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-21)

How to cite (APA style): Zargaryan, T. (2024). How can libraries empathize with users and transform their digital experiences, *Herald of the Armenian Library Association*, 2(4), 21-46.

[https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-21](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-21)

Creating Empathy-Driven Digital Experiences for Libraries Using Design Thinking and UX Research

Whenever I enter my workplace/office in the academic library, I feel I am in a beehive. You will ask why?

Well, 2000 students still need a study space, a computer, or a place to read quietly and relax. But you will say It's already 2024; there are many online resources, primarily Google and now AI (Chat-GPT). Even students think that Google and Chat-GPT are the best first choices for searching for the information they need. Why should they come to

21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

the library, open their PCs, and search for books, sometimes e-resources? Who needs this old-style, boring thing called research?

Is this the future we imagine and foresee as academic librarians trying to provide online services and support to students born in 2010? And now in their mid-20s? Are we trying to decrease the age gap, the technology gap, and the knowledge and mindset difference? Are we, as librarians, running after technology and constantly trying to be modern and relevant to the student's current needs by torturing ourselves?

Indeed, we still have issues and knowledge to pass on to our students, and there is a bias from both sides that needs to be addressed. But that's another topic for research, which we will not cover here.

You will ask, but why? Why should academic librarians/libraries worry about student support and services when we already have Google search, AI tools, library website, academic e-resources, and books? There is a physical space for studying; it's a modern open space with internet access. Why are user experience and design thinking, business goals, success metrics, and data relevant to libraries? Why should we care about the chair's ergonomics, website accessibility, sunlight, and coffee? What are these modern terminologies that are so alien to the ear? Indeed, life is dynamic, and technology is changing how people learn, behave, and access information. Nonetheless, libraries are at the heart of creating a community of practice and networking place for academic life, systematizing and providing essential resources and support for students and researchers in a digital age; enhancing the library website's user experience (UX) is crucial to ensure not only academic peer-reviewed resources are available, but all digital experiences are accessible and enjoyable to use.

This case study explores how the AGBU Papazian Library used Design Thinking and UX research to redesign its digital experiences, ultimately making the website more empathetic and user-centered.

Introduction: The Challenge of Modernizing Library Digital Experiences

With the development of AI tools and pirate websites with free access to ebooks/e-resources, it can get more challenging to reach out to every student and keep them engaged with the library e-resources and books as their first choice for a reliable source to search for information. With all that accessible information, the needs and expectations of users change as well. The ChatGPT has impacted the student's academic needs and searching behaviors even more. After years of conducting information literacy sessions and supporting students in their academic research, The AGBU Papazian Library's academic support team accumulated crucial insights that eventually should be used for enhancement of the digital experiences. We felt we were missing on targeting and delivering the support that would be hands on, easily accessible and be used by the users needs. In our case library's main target users are our students and we all noticed that students prefer to look up information on Google and other resources rather than ask a librarian or look in the library for academic e-resources. However, we needed more data to understand the reasons behind students' actions and behaviors. It was decided to take a data range for 1 year and follow with the patterns that would be interesting for our academic support team. The data collected from Google Analytics and the library catalog showed fewer and fewer downloads from our academic e-resources and checked-out books. The surveys, A/B testing, and student interviews showed a radical change in

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

their search behavior and research needs. When we accumulated all the data and analyzed the patterns it was clear that the challenge of modernizing the library's digital experience lay in the website's design and the habits students developed throughout the study period at AUA. The collected data showed that the website's design logic and structure were complex for students and not user-friendly. Students need help locating and quickly accessing e-resources and other essential features on the library website.

After identifying the problem, it was decided to conduct user experience (UX) research and develop solutions.


UX research focuses on understanding user needs and behaviors through interviews, usability studies, and surveys. This feedback helps understand how users interact with the digital product and whether the design solutions meet users' needs.

The problem

The problem was identified when data was collected and analyzed. Students should be able to quickly locate the library catalog and e-resources on the website, perform a search, and access them using mobile and PC. The challenge here lies in the design solutions and how the identified problem will be solved using User Experience Research and empathy-driven methodology to understand users' behaviors and academic needs.

Empathy in Design Thinking: Understanding Users

The Design Thinking methodology was used to collect and analyze the data. Design thinking is a 5-stage iterative process of empathizing and understanding user pain points and expectations.



To build a clear picture of user needs, the following 5 step process was set up:

a) *Empathize - research users' needs.*

This is the first step in collecting data and understanding your targeted users.

To do that, the library team collected and used data from the following tools:

- Surveys and Google Analytics to analyze user behavior,
- Libguides statistics, number of checked out books from the local library catalog for understanding resource popularity,
- Online chat logs to capture real-time user challenges.

b) *Define the problem - state users' needs and problems.*

The library's primary users are undergraduate and graduate students across four colleges: Business and Economics, Humanities and Social Sciences, Science and Engineering, and Health Sciences. The

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

team synthesizes and analyses the observations at this stage to define the core problem and creates User Personas and User Journeys.

User personas: capture the diversity of user backgrounds and needs, focusing on:

- Context of Use: how and where the website would be used.
- Cognitive Load: addressing multitasking, stress, and time constraints.
- User Roles and Mental Models: understanding student motivations and approaches to online research.

User Journeys: mapping user journeys also revealed the stages students go through to find resources, from initial search to locating and downloading relevant materials.

After identifying the time spent and counting the steps to achieve the goal, it was understandable that a few unnecessary steps were created in the users' paths. This was also an essential insight for redesigning the website and library services on the webpage.

Below are the main features students used to perform the tasks.

- Find a book
- Reserve a Study Room
- E-Resources
- ILL Services and
- Off-Campus Access

User Personas (details of typical users)

21-րդ դարի գրադարան

Persona 1



"I work and study full time, I don't have time to read that much, and library is too noisy for studying"

Goals

- Finish her studies and successfully submit her research projects.

Frustrations

- She needs to concentrate more on her studies and she can do that only at home.

Liza

Age: 33
Education: MA in IRD
Hometown: Yerevan
Family: Single
Occupation: Program Coordinator

Liza is a part-time Masters student, she also works for the university, she tries to manage to be the best student, and she tries to perform well at her job. She doesn't have time and she wants to find the e-resources for her studies as efficiently as possible. She can not study in the library, as its noisy and she needs to concentrate on her research projects.

Persona 2



"I don't do research and I don't use library webpage. I come to the library only for the space."

Goals

- Find a job and also submit his homeworks.

Frustrations

- I want to have a space where I can concentrate and do my homework.


Yuri

Age: 20
Education: CS Freshman
Hometown: Yerevan
Family: Single
Occupation: BA Student

Yuri is a full time first year Computer Science student, he is not working and he only studies, he is not using the library, as his homework is not research based, he only does use Google and one math application for his studies. He thinks the library should be a space where he can come and work with his peers and get back to his daily tasks.

21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

User Journey (how currently users try to solve the problem)



c) Ideate - challenge assumptions and create ideas.

The team brainstorms to identify innovative solutions to the core problem.

Here, it was decided to redesign the library landing page and bring the most used features to the front.



d) Prototype - start to create solutions.

The team started with a wireframe/prototype of the landing page to investigate the solutions.

e) Test - try the solutions out.

The team tested the prototype through A/B testing and usability studies to understand how the redesigned prototype and design solutions work for the users.

21-րդ դարի գրադարան



21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Defining the Problem

After user testing, we identified that the core problem is that students should be able to quickly and effortlessly search for resources,

access them, and navigate between features on mobile and desktop devices.

By focusing on empathy, the aim is to make each step of the user journey smoother and more intuitive.

Key UX Metrics for Evaluating Digital Library Experiences

To follow the website content and design alignment with the users' needs, it is essential to select the measures that will help us to keep track of our progress and success.

1. Quantitative metrics
2. Qualitative metrics
3. Accessibility metrics

These metrics were strategically chosen to address the library's specific user needs and goals, emphasizing iterative testing and feedback.

We collected data and reports from the Google Analytics platform:

1. Quantitative Metrics:

such as engagement rates and click-throughs.

Metric	Value	Notes
Total Clicks	29K	Click events recorded
Engagement Time (per active user)	1m 18s (78 seconds)	Average engagement time

Insights & Recommendations Based on Quantitative Metrics

1. **Low Click-Through Rate (CTR):**

- The **CTR of 0.26%** for organic search impressions is relatively low. This suggests that although users see the content, they may not engage with it as much as expected.

2. **Recommendation:**

- Improve **page titles, meta descriptions, and call-to-action** elements to increase the CTR.
- Consider optimizing **SEO** or enhancing the **user interface** on landing pages to encourage more clicks.

3. **Engagement Time:**

- An **engagement time of 1 minute and 18 seconds** per active user indicates that users spend a reasonable amount of time on the platform.

4. **Recommendation:**

- Focus on creating **interactive content** or **personalized experiences** to increase engagement time.
- Look into **user retention strategies** such as content customization.
- Explore ways to **decrease friction** in navigation, make content easier to find, or introduce interactive elements that keep users engaged longer.

2. Qualitative Metrics:

user feedback and satisfaction scores.

User Feedback

User feedback can be gathered through surveys, pop-up ratings, interviews, and reviews.

We still need to develop a straightforward process for User feedback, as we only have general surveys that cover digital experiences.

We have only started to use usability studies and user interviews and will include the results only from that feedback.

In the future, we will integrate **qualitative feedback** to collect feedback through:

1. **Surveys:** After interacting with the platform, users can be asked to rate their experience on a scale (e.g., from 1 to 5).
2. **User Interviews:** Interviewing users can provide insights into their overall experience, what they like, and areas that need improvement.
3. **Open-Ended Feedback:** Allow users to provide open-ended feedback via forms or comment sections, helping you understand their pain points.

Satisfaction Scores

We don't have explicit satisfaction scores, but we can infer satisfaction based on **retention**, **engagement time**, and **user behavior**.

For example, the **58% retention rate** of new users suggests that many are satisfied enough to return. The **increased engagement time** over the months also indicates users find value in their interactions with the platform.

21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Potential User Satisfaction Metrics:

- **Net Promoter Score (NPS):** This is a standard customer loyalty and satisfaction metric. It involves asking users how likely they are to recommend the platform to others (rated 0-10). The score is calculated as the difference between promoters (9-10) and detractors (0-6).

- **Customer Satisfaction (CSAT):** A simple way to measure user satisfaction, typically asking users to rate their overall experience on a scale from 1-5.

Qualitative Insights

1. **User Sentiment:** Positive sentiment can be inferred from **high retention rates** and increasing **engagement** over time. Users who return and spend more time on the platform suggest satisfaction.

2. **Areas for Improvement:** If users are dropping off early (e.g., in the first 6 days), this may indicate usability issues or lack of immediate value, which should be explored through feedback mechanisms.

Recommendation

- **Survey Implementation:** Introduce post-interaction surveys or periodic check-ins to measure **CSAT** or **NPS**.

- **User Interviews:** Conduct user interviews to capture more **in-depth feedback** on platform usability, content value, and areas for improvement.

- **Review Analytics:** Continuously monitor engagement trends and retention rates to detect dissatisfaction early and make iterative improvements.

3. Accessibility Metrics:

ease of use for students with diverse needs.

Ensuring a platform is **accessible** for students with diverse needs (e.g., visual, auditory, cognitive, or motor disabilities) is crucial. **Accessibility metrics** focus on how easy it is for all students, including those with disabilities, to navigate and use the platform effectively.

Key Accessibility Considerations:

1. Compliance with Accessibility Standards:

- Ensure that the platform meets **WCAG (Web Content Accessibility Guidelines)** to provide a consistent experience for users with disabilities.

- **ADA (Americans with Disabilities Act)** compliance is essential to ensure that the platform is usable by all students, including those with visual or auditory impairments.

2. Usability for Students with Disabilities:

- **Screen Reader Compatibility:** Ensure that content is readable by screen readers for visually impaired users.

- **Keyboard Navigation:** Students who cannot use a mouse should be able to navigate using just a keyboard (important for motor-impaired users).

- **Text-to-Speech or Speech-to-Text Features:** Useful for students with learning disabilities or those with visual impairments.

- **Contrast and Font Size:** Text should have high contrast for better visibility, and font sizes should be adjustable for students with low vision.

21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

- **Video Accessibility:** Provide **captions** for videos and allow for customizable playback speeds.

Current State Based on Provided Data:

- **High Engagement:** Users staying engaged for more extended periods (e.g., average engagement time of **78 seconds**) and interacting with multiple sessions suggest that the platform is generally usable, but we don't have direct insight into accessibility from the current data.

- The next step will be to incorporate possible features for diverse needs.

Insights & Recommendations for Accessibility

Insights:

- **Retention & Engagement:** The solid retention and engagement metrics suggest that students generally are satisfied with the platform. However, without explicit accessibility data, it's difficult to assess how well the platform performs for students with disabilities.

Recommendations:

- **Audit for Accessibility:**

- Use tools like **Google Lighthouse** or **WAVE** to perform an accessibility audit of your platform. This will provide a detailed score and suggest areas that need improvement (e.g., alt text for images, color contrast issues, etc.).

- **Improve Keyboard Navigation:**

- Ensure that all interactive elements are accessible via the keyboard alone. This includes menus, forms, and buttons.

- **Enhance Screen Reader Compatibility:**

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

- Implement **ARIA (Accessible Rich Internet Applications)** landmarks and roles, ensuring that screen readers correctly announce content.

- **Provide Text-to-Speech or Audio Features:**

- Offer features that allow students to listen to content rather than just read it, particularly for students with learning disabilities or visual impairments.

- **Mobile-Friendly Design:**

- Ensure the platform is responsive and fully functional on mobile devices. Consider students who may rely on smartphones or tablets with accessibility features enabled.

Understanding Our Users: Personas and Journey Mapping

After gathering the data and analyzing the results, we created the User Journey map and User Personas. The central insight was that the academic research component is integrated only on a course level, and some students only perform academic research once they are in their 4th year of studies if it's a Bachelor's degree. And if it's an MA or MS, it depends on their course requirement.

However, we still see that students do search or research, and we want them to get used to using academic sources rather than Chat-GPT and learn to use the tools the university provides.

Part of the website redesign strategy is to bring the search feature front and center to make it easily accessible and user-friendly. More content is needed to catch users' interest in the research and its benefits. Incorporate the Research into students' learning paths as intensely as possible.

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Change the search habits associated with the library web page through small design solutions. Test them and learn from the data. Make the design better for users.

Data-driven insights from Google Analytics (Acquisition and Engagement), Libguides and Ask a Librarian chat, Local Library catalog

We also looked at 3 other Google Analytics measures:

1. Acquisition,
2. Engagement and
3. Technology).

Through these measures, we will understand how students access the library website, where they prefer to go from it, what features they use, and what they search for.

A comprehensive analysis of Google Analytics data highlighted key insights:

1. Acquisition

With this measure, we look at where users come from and their paths. Here, we look at where our users visit our information or how they access it.

- **Organic Search** has the highest engagement rate, meaning users arrive at our website by googling or using other search engines which is good, but to increase that number and engage more users, we need to work on more ways to bring users to our website. Engagement Rate: 57.18%. Average Engagement Time per Session: 28.34 seconds.

21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Examples for the libraries can be the number of downloads for e-resources, catalog searches, videos played, contact form submissions,

- **Direct Traffic** is the second, with an Engagement Rate: 51.28%, Engagement Time per Session 17.12 seconds

Users arrive at our website by typing the URL. We need to work on website navigation and content offerings to retain interest.

- **Referral Traffic** is the third one, with an Average Engagement Time per Session of 102.75 seconds.

This means users are redirected to our website from external websites. This number is good, but we need to find strategies to keep these users interested and guide them to specific actions.

- **Organic Social** is the fifth one, and with the highest Engagement Rate 60.32%, Average Engagement Time per Session: 28.10 seconds.


This means that while traffic from organic social media is minimal, the engagement rate is relatively high. Enhancing the library's presence on social platforms could increase visibility and attract more users.

2. Engagement


With this measure, we look at pages and features with the highest engagement rates.

21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

- **The landing page** is the main point for users. It has the highest user engagement number per session.




- **Library Operating Hours** is second. It has a short engagement time. It's a static page with no interaction. Users just look up the information.



21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

- **Find a Book** is third in the number of searches and clicks. Probably, users search using Google search and redirect to the library page titled “How to find a book with call Number.”



PL Guide | Instructions for lost books | Web OPAC | What is copyright? | Find a Book | DDC

How to find a Book by Call Number?

In order to save time and to conduct effective searches, it is important for all Library users to understand the meaning and use of call numbers.

For example:

005.133
WINDOWS
PER

005.133 = DDC Number
(look at the DDC index inside the book.)
WINDOWS = Type of program/language
(only for Computer books)
PER = 3 first letters of author's last name
(the author is Ron Person)

- **Off-Campus access** is fourth, and it has significant user interaction, to keep the engagement rates high, the information should always be kept current and easy to find.



AUA AGBU PAPA ZIAN LIBRARY

About Us | Search Collection

Choose a Catalog - SEARCH

Reserve a Study Room | AUA Institutional Repository | Access e-Resources Off-campus | How to Use the Library Online? | Request Forms

3. Technology

With this measure, we look at the range of devices used to access content.

- **Mobile Traffic:**

- **Views:** 10,228 (38.34% of total)
- **Engagement Rate:** Lower compared to desktop traffic.
- **Average Engagement Time:** 25 seconds (67.13% lower than average).
- **Insights:** Mobile optimization is crucial. The shorter engagement time suggests that users on mobile may need help navigating or engaging with content effectively.

- **Web (Desktop) Traffic:**

- **Views:** 16,353 (61.29% of total)
- **Engagement Rate:** Strong, with an **average engagement time of 2 minutes 5 seconds, 60.75% higher than average.**
- **Insights:** Desktop users are the most engaged. This indicates that larger screens make the content and interface more user-friendly.

- **Tablet Traffic:**

- **Views:** 99 (0.37% of total)
- **Engagement Time:** 47 seconds.
- **Insights:** Tablet traffic is negligible, but ensuring compatibility for tablet users is still essential for accessibility.

Recommendation

1. Mobile Optimization:

- Improve navigation and page load times for mobile users to enhance engagement.

2. Content Prioritization:

- Focus on enhancing high-impact pages like the **Home page**, **Find a Book**, and **Off-Campus Access**. Include clear calls-to-action (CTAs) and improved design.

3. Define Key Events:

- Mark important events (e.g., catalog searches form submissions) as key in GA4 for focused analysis.

4. Tablet Compatibility:

- While tablet usage is minimal, ensure responsiveness and usability across all devices.

5. User Journey Mapping:

- Analyze navigation flows to identify drop-off points and optimize pathways to increase session duration and conversion actions.

LibGuides analysis

This data was collected over a year and informed the redesign strategy.

Date range Dec 1, 2023-Dec 1, 2024.

Libguides statistics showed popular resources with

- EBSCOHOST,
- JSTOR, and
- Taylor & Francis Online Journals are among the most accessed.

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

2,315 searches from AZ databases, and the topics are about:

- Ancient Armenian history
- Armenian Genocide
- Soviet Armenia
- Modern Armenia

Local catalog statistic

The number of checked-out books by students throughout one year, 01.12.2023-01.12.2024, was approximately 980. We see here a dropdown of checked-out books, and we will need to promote more of our collections and take them to display and promote them on social media, particularly Instagram for more immersive explorations of our books.

Ask a Librarian Chat

We also collected the data from the live chat that we have on the library webpage, and here we are presenting the most frequent requests over the chat:

- Accessing library databases
- Ordering full-text articles, books, and book chapters
- Library membership rules
- Renewing their checkouts
- Library operating hours

Prototyping and Testing with Figma

Considering all the data and research results, the user-testing approach was used to test the new website's prototype. The new website layout was constructed with Figma, enabling students to test revised user

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

flows. The prototype highlighted areas for improvement, helping refine the design to support user needs better and encourage engagement.



Goals and Measurable Outcomes

The redesigned website aims to enhance search functionality, leading to behavior changes in user research methods. Key outcomes include:

- Improved Search Efficiency: aiming to increase the number of downloaded articles and checked-out books.
- Enhanced User Engagement: This is measured by interaction rates with search tools and resources.

Recommendations for Future Improvements

Several strategic actions were identified for ongoing enhancements:

- **Boosting Search Functionality:** simplifying and enhancing search features.
- **Content Refresh and Marketing:** updating content to reflect current academic trends and improve relevance.
- **Increasing Social Media Engagement:** promoting library resources through targeted social media posts.
- **User Feedback Monitoring:** continuously gathering user input to inform further improvements.

By embracing an empathy-driven approach, the AGBU Papazian Library will transform its digital presence and create a more accessible and responsive website that meets the evolving needs of students. Through continued testing, analysis, and updates, the library is committed to providing a seamless digital experience that empowers students in their academic pursuits.

Appendix

UX research plan

1. Research Questions


- What is the first thing you notice when entering the library page?
- Search a book
- Search an e-resource
- Reserve a Study Room
- Contact librarian

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

- Find the library's operating hours
2. Participants
- 5 participants, all Graduate and Undergraduate students from 4 colleges
3. Methodology
- Each user test lasts 30 minutes.
 - The tests were conducted in the AUA Library and during the Freshman Seminar courses.
 - Format (usability study)
 - High-level procedure (users were asked to look at a live product or a prototype and perform tasks)

Google Analytics results

- Acquisition overview



21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

- Engagement overview



- Retention overview



After identifying how much time students spent on our website and what they clicked to achieve the goal, it was understandable that our users' paths were overly complicated.



This was also an essential insight for redesigning the website and library services on the webpage.

Based on the Google Analytics results, the main features students use are as follows:

- **Library Home Page**

21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

- Library Operating Hours
- Find a Book
- Off-Campus Access

Event count by Event name 		Views by Page title and screen class 	
EVENT NAME	EVENT COUNT	PAGE TITLE AND SCREEN ...	VIEWS
click	29K	LIBRARY HOME - AUA's AGB...	23K
page_view	27K	Library Operating Hours - AU...	504
session_start	21K	Find a Book - AUA's AGBU P...	493
user_engagement	11K	Off-Campus Access - AUA's ...	451
scroll	9.8K	Staff - AUA's AGBU Papazian...	208
first_visit	5.5K	Services for Students - AUA'...	163
form_start	2.3K	My Account - AUA's AGBU P...	139

[View events →](#) [View pages and screens →](#)

21-րդ դարի գրադարան

ՆԵՐՆԱԿԱՎՈՐ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ*

ՀՏԴ: 02

DOI: 10.54503/2953-8092.2024.2(4)-50

ԳԱՐԵԳԻՆ ՂՈԶԻԿՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

ORCID: [0009-0000-2409-2673](https://orcid.org/0009-0000-2409-2673)

Թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ աշխարհի գրեթե բոլոր գրադարաններում ստեղծվում են թվային շտեմարաններ՝ հնարավորություն տալով հանրայնացել տպագիր ու ձեռագիր ժառանգությունը: Յուրաքանչյուր շտեմարան պետք է ունենա որոնման ճկուն համակարգ, որն անհնար է պատկերացնել առանց հեղինակավոր գրառումների: Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել հեղինակավոր գրառումների ստեղծման և համակարգման աշխատանքները, ընդգծել դրանց անհրաժեշտությունը էլեկտրոնային գրացուցակներում և թվային շտեմարաններում և ուրվագծել դրանց օգտագործման ուղիները: Ընդհանուր դրույթները կոնկրետացրել ենք ՀՊՏՀ գիտական գրադարանի էլեկտրոնային գրացուցակի օրինակներով: Ուսումնասիրությունը իրականացվել է առաջնային և երկրորդային տեղեկատվության հիման վրա, ինչպիսիք են ինտերնետային հոդվածները և ուղեցույցները:

Indeed, the development of digital technologies has revolutionized libraries by enabling the creation of digital databases, which make printed and handwritten heritage accessible to a global audience. A flexible search system is a cornerstone of such databases, ensuring that users can navigate vast amounts

* Հոդվածը ներկայացվել է 17.11.2024, գրախոսվել է 30.11.2024, ընդունվել է տպագրության 11.12.2024:

The article was submitted on 17.11.2024, reviewed on 30.11.2024 accepted for publication on 11.12.2024.

21-րԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

of information effectively. Authoritative records play a crucial role in this, as they establish a standardized, reliable foundation for organizing and retrieving information. These records not only ensure consistency across metadata but also enhance interoperability between different systems, facilitating a seamless user experience. The purpose of this article is to present the work on the creation and systematization of authoritative records, to emphasize their necessity in electronic catalogs and digital databases, and to outline the ways of their use. We have specified the general provisions with examples of the electronic catalog of the ASUE scientific library. The study was conducted based on primary and secondary information, such as internet articles and guides.

Բանալի բառեր՝ Հեղինակավոր գրառում, էլեկտրոնային գրացուցակ, թվային գրադարան, գրադարանային գործառույթ, OPAC, KOHA, MARC 21:

Ինչպես հղել՝ Ղուչիկյան, Գ. (2024), Հեղինակավոր գրառումները՝ որպես գրադարանային գործիք, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(4), 50-61. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-50](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-50)

How to cite (APA style): Ghochikyan, G. (2024), Authoritative records as a library tool, *Herald of the Armenian Library Association*, 2(4), 50-61. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-50](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-50)

Ներածություն

21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ փոխվում են գրացուցակավորման ավանդական չափորոշիչները, այդ թվում՝ խորագրերի ձևավորման պահանջները:

Հեղինակավոր գրառումները (Authority Records) պարունակում են միասնական հեղինակավոր տվյալներ¹: Նրանք կազմում են գրա-

¹ ГОСТ Р 7.0.76-2022 Система стандартов по информации, библиотечному и издательскому делу. Библиографирование. Библиографические ресурсы. Термины и определения. Дата введения в действие: 01.09.2022, կետ 22. <https://protect.gost.ru/document.aspx?control=7&id=245113> (11.12.2024)

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

դարանային գործիքակազմի կարևոր մասը: Հեղինակավոր գրառումները հնարավորություն են տալիս էլեկտրոնային գրացուցակում որոնել անհրաժեշտ նյութը առավել ճկուն և արագ ճանապարհով: Դրանք ունեն ստեղծման միասնական համակարգ, սակայն առաջնորդվելով սեփական մասնագիտական առաջնահերթություններով՝ յուրաքանչյուր գրադարան կարող է նախապատվությունը տալ դրանց համարժեք հեղինակավոր գրառումների ստեղծմանը: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական գրադարանի էլեկտրոնային գրացուցակում առկա հեղինակավոր գրառումների ընդհանուր կառուցվածքը ներկայացնում է տնտեսագիտական ոլորտը և այդ ոլորտի կարկառուն ներկայացուցիչներին:

Հեղինակավոր գրառումների ստեղծումը և ընդհանուր պատկերը

Գրադարանային գրացուցակավորման պատմությունը գրադարանների զարգացման լայն համայնապատկերի ասպեկտներից մեկն է: Ավելի վաղ, գրադարաններն իրենց ջանքերը կենտրոնացնում էին ձեռագրերի հավաքագրման և պահպանման վրա: Հետագայում նրանք սկսեցին հավաքել և մշակել ընթերցանության, ուսումնասիրության և խորհրդատվության համար անհրաժեշտ նյութերը: Հեշտ տեղակայման և խորհրդատվության համար գրադարանավարներն օգտագործում էին մատենագիտական վերահսկման կամ ընթերցանության նյութերի նկատմամբ վերահսկողության որոշակի համակարգ, որը հիմք դրեց գրադարանային գրացուցակավորմանը²:

² Authority control in OPAC

<https://web.archive.org/web/20220228012132/https://www.lisbdnetwork.com/authority-control-in-opac/> (11.12.2024)

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1876 թ. ամերիկացի գրադարանավար և գրադարանագետ Չարլզ Էմի Քաթերը հստակ սահմանեց գրադարանային գրացուցակների նպատակները: Դրանք հետևյալն են.

- մարդուն հնարավորություն տալ գտնելու գիրքը, եթե հայտնի է հեղինակը, վերնագիրը կամ թեման,

- ցույց տալ, թե ինչպիսի տեղեկատվություն ունի գրադարանը տվյալ հեղինակի նյութերից, կամ տվյալ թեմայով, կամ որ գրականության մեջ,

- աջակցել գրքի ընտրությանը (CUTTER 1876, 5):

Չարլզ Էմի Քաթերի կողմից առաջադրված նպատակները դեռևս արդիական են, թեև գրադարանային գրացուցակի ֆիզիկական ձևը փոխվել է էլեկտրոնայինի, այսինքն՝ առցանց հանրային հասանելիության գրացուցակի (Online Public Access Catalog): Համակարգչային և հաղորդակցական տեխնոլոգիաների հայտնվելը կտրուկ փոխել է գրացուցակավորման ասպարեզը: Մատենագիտական տվյալները կարող են պահվել ինչպես համակարգչում, այնպես էլ համացանցային գրացուցակներում:

Համակարգիչը կարող է օգտագործվել նաև որպես գրացուցակի պահպանման վայր, այսինքն՝ տեղեկատվությունը կարող է պահպանվել համակարգչում, իսկ պահանջվող գրառումների տեսակները կարող են վերարտադրվել ըստ անհրաժեշտության:

Համացանցը հեղինակավոր գրառումների համար նոր կիրառումների լայն դաշտ է: Հեղինակավոր գրառումները մատենագիտական տվյալների տարատեսակներից է³: Դրանք պարունակում են տեղեկատվություն գիտական հաստատությունների, նրանց գրադար-

³ ГОСТ 7.1-2003 Библиографическая запись. Библиографическое описание. Общие требования и правила составления. Дата введения в действие: 02.07.2003; կետ 4.8.2 և 7.1.8; https://diss.rsl.ru/datadocs/doc_291wu.pdf

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

րանների և այլ գրադարանների վերաբերյալ, արտացոլում են նաև առանձնացված գիտական ոլորտների, հաստատությունների անվանումների տարբեր ձևերի միջև կապերը, ներառում են արտաքին ռեսուրսների հղումներ: Համացանցի միջոցով հեղինակավոր գրառումների փոխանակումն ու որոնումը հեշտացրել է գրառումների ստեղծումն ու պահպանումը: Վեբ միջավայրում ստեղծված հեղինակավոր գրառումը օգտվողին հնարավորություն է տալիս գտնել տեղեկատվությունն իր նախընտրած լեզվով, տառատեսակով և այլն: Այն հրաշալի հղում է դեպի թվային ռեսուրսներ, ինչպիսիք են բաց շտեմարանները, այդ թվում՝ համացանցի տեղեկատու աղբյուրները (օրինակ՝ կենսագրական բառարաններ, ծանոթագրության և ինդեքսավորման ծառայություններ, հեռախոսային գրացուցակ և այլն): Համացանցային գրացուցակը և հարակից ինտեգրված գրադարանային համակարգն ապահովում են լիազորությունների վերահսկման ավանդական գործառնությունը՝ հեղինակավոր գրառումների ստեղծման և թարմացման, խաչաձև հղումների ցուցադրման համար:

Ընթերցողները կարող են օգտագործել հեղինակավոր գրառումը (կամ նիշքը)՝ որպես մեկ այլ հղման գործիք, որպեսզի նույնականացնեն անձանց և տեղեկատվությունը, ինչպես նաև՝ որպես միջավայր՝ մատենագիտական գրառումներ ձեռք բերելու և անմիջապես թվայնացված ռեսուրսներին հասնելու համար:

Համացանցի էլեկտրոնային գրացուցակավորման ծրագրերից մեկն «Կոհան» է, որի հիմքում MARC 21 ստանդարտն է (անգլ.՝ Machine Readable Cataloging; հայ.՝ Մեքենարնթեռնելի քարտագրում):

MARC 21 ստանդարտի շնորհիվ գրադարանավարը մատենագիտական և հեղինակավոր գրառումների տեղեկատվությունը կարող է մշակել և ներկայացնել մեքենայական ընթեռնելի ձևով: Վերջինիս ներկայացման կարգը համապատասխանում է ISO 2709

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Տեղեկատվության փոխանակման ձևաչափի» միջազգային ստանդարտին և ամերիկյան ANSI/NISO Z39.2 «Մատենագիտական տեղեկատվության փոխանակման» ստանդարտին: MARC 21-ում ներկայացվող բովանդակությունը կոդերն են, որոնք հստակ սահմանված են գրառման մեջ տվյալների տարրերը նույնականացնելու, հետագայում բնութագրելու և այդ տվյալների փոխակերպմանը աջակցելու համար: MARC գրառումները սովորաբար սահմանվում են նաև ձևաչափերից դուրս ստանդարտներով, դրանք են *Միջազգային սրահարդ մատենագիտական նկարագրությունը* (ISBD), *Անգլո-ամերիկյան կատալոգավորման կանոնները*, *Կոնգրեսի գրադարանի առարկայական վերնագրերը* (LCSH) կամ ցուցակագրման այլ կանոններ, որոնք օգտագործվում են գրառում ստեղծող գրադարանի կողմից⁴:

MARC 21-ի հիմնական տվյալներից օգտվելու համար առկա է ուղեցույց, որը սահմանում է ծածկագրերը և պայմանները (ինչպիսիք են՝ ցուցիչներ, ենթադաշտերի կոդեր և կոդավորված արժեքներ, որոնք նույնացնում են տվյալների տարրերը MARC հեղինակավոր գրառումներում): Ուղեցույցը նախատեսված է մատենագիտական և հեղինակավոր գրառումների նախագծման, մշակման և պահպանման աշխատանքների մեջ ներգրավված աշխատակիցների համար⁵:

Սակայն աշխարհում առկա են նաև մետատվյալների հավաքագրման այլ համակարգեր, որոնցից է WorldShare Record Manager: Ըստ OCLC կայքի 2022 թ. տվյալների՝ WorldShare Record Manager-ն աջակցում է հետևյալ հեղինակավոր գրառումներին՝ Իսպանիայի ազգային գրադարան (BNE), FAST (Faceted Application of Subject Terminology), Գերմանիայի ազգային գրադարան, Կոնգրեսի

⁴MARC 21 Authority <https://www.loc.gov/marc/authority/adintro.html> (11.12.2024)

⁵ MARC Standart <https://www.loc.gov/marc/> (11.12.2024)

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

գրադարան, Նոր Զելանդիայի ազգային գրադարան, Բժշկական առարկաների վերնագրեր (Medical Subject Headings), Հոլանդիայի թագավորական գրադարան, Աստղերի առարկայական կատալոգ (Répertoire de vedettes-matière) և մի շարք այլ գրադարանների հեղինակավոր գրառումներ⁶:

Ռուսաստանի Դաշնության խոշոր գրադարանները ուսումնասիրություններ են իրականացնում հեղինակավոր գրառումների ստեղծման ուղղությամբ՝ առարկայի, անձի, կազմակերպությունների, աշխարհագրական անվանումների համար: «Հեղինակավոր նիշքեր» («Авторитетные файлы») տվյալների շտեմարանի կորպորատիվ ստեղծման և պահպանման վերաբերյալ «ЛИБНЕТ» Կենտրոնի (Национальный информационно-библиотечный центр «ЛИБНЕТ» կամ Центр ЛИБНЕТ) նախագծում իրականացվում է ազգային, արդյունաբերական, տարածաշրջանային գրադարանների բազմամյա փոխգործակցություն, որը ներառում է հեղինակավոր տվյալներ անհատների, կազմակերպությունների անունների և առարկաների վերնագրերի վերաբերյալ ավելի քան 2,3 միլիոն ընդհանուր ծավալով գրառումներ: Այս աշխատանքներում ներգրավված Կենտրոնական գիտական գյուղատնտեսական գրադարանն (ռուս.՝ Центральная научная сельскохозяйственная библиотека կամ ЦНСХБ) ավելի քան 10 տարի աշխատանքներ է իրականացնում կազմակերպությունների անվանումների ձևավորման և տեղեկատվական ռեսուրսների հասանելիության կազմակերպման ուղղությամբ (СЕМЕHOBA 2019, 63):

Ռուսաստանի Դաշնությունում գործում են նաև այլ գրադարանային ծրագրեր, որոնցից մեկն է OPAC-Global-ը: Այն լիարժեք

⁶ Authority records

https://help.oclc.org/Metadata_Services/WorldShare_Record_Manager/Authority_records (11.12.2024)

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ֆունկցիոնալ կենտրոնացված ավտոմատացված գրադարանային-տեղեկատվական համակարգ է, որը նախատեսված է գրադարանային հիմնական գործընթացների ավտոմատացման համար (CAKOBA 2022, 36): Ուստի, այստեղ նույնպես առանձնացված են հեղինակավոր գրառումների համար դաշտեր: Օգտագործվում է 600 դաշտը՝ անձի անունը՝ որպես առարկա, 601 դաշտը՝ կազմակերպության անվանումը՝ որպես առարկա, 605 դաշտը՝ վերնագիրը՝ որպես առարկա, 606 դաշտը՝ թեմայի անվանումը՝ որպես առարկա և 607 դաշտը՝ աշխարհագրական անվանումը՝ որպես առարկա (CAKOBA 2022, 39):

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական գրադարանում ստեղծվող Հեղինակավոր գրառումները

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական գրադարանում 2013 թվականից «Կոհա» ծրագրով իրականացվում են գրադարանի էլեկտրոնային գրացուցակի համակարգման աշխատանքներ, որին զուգահեռ շարունակվում են նաև հեղինակավոր գրառումների ստեղծման աշխատանքները: Վերջիններս 2024 թվականից ենթարկվում են խմբագրական փոփոխությունների:

Մատենագիտական աշխատանքներ իրականացնելու ժամանակ հանդիպում են միանման հեղինակներ և հարց է առաջանում՝ ինչպես տարանջատել հեղինակներին, որպեսզի հետագայում օգտվողը չշփոթի: Միակ լուծումը ճիշտ և գրագետ կազմված հեղինակավոր գրառումներ են:

Գրադարանի հավաքածուում առկա է ոչ միայն տնտեսագիտական գրականություն, այլև տարբեր գիտակարգերին առնչվող դասընթացների և գեղարվեստական գրականություն: Հեղինակավոր գրառումներ ստեղծվում են նաև նմանատիպ գրականությունը

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

գրացուցակ մուտքագրելու ժամանակ: Ներկայացնենք հետևյալ օրինակը. մուտքագրման ժամանակ հանդիպել է երկու հեղինակ, որոնք ունեն նույն անունը և ազգանունը՝ Հովհաննես Թումանյան: Բոլորիս հայտնի է հայազգի բանաստեղծ, արձակագիր, գրական, ազգային և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանը, սակայն խորհրդային Հայաստանում ավելի ուշ գործել է տնտեսագետ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հովհաննես Թումանյանը: Բնականաբար, հեղինակավոր գրառումների դեպքում լրացվում են այս երկու անձանց տարբերող տվյալներ՝ հայրանուններ, ծննդյան ու մահվան թվեր և այլն (*տե՛ս նկ. 1*):

Համառոտագրություն	Առաջնորդողի տեսակ	Օգտագործված մեջ
Personal Names: Թումանյան, Հովհաննես Թադևոսի 1869-1923	Personal Name	3 գրառում(ներ)
Personal Names: Թումանյան, Հովհաննես Երանոսի, 1904-1968	Personal Name	6 գրառում(ներ)

Նկ. 1.

«Հովհաննես Թումանյան» հեղինակավոր գրառման նկարագրությունը

Առանց այսպիսի մանրակրկիտ աշխատանքի համակարգը կարող է նկարագրության ժամանակ հասկանալ մեկ ընդհանուր տարր և խմբավորել մեկ գրառման մեջ երկու տարբեր հեղինակների աշխատանքները:

Մեկ հեղինակի դեպքում նույնպես կարող են առաջանալ տարընթերցումներ: Օրինակ՝ ֆրանսիացի փիլիսոփա, գրող և լրագրող Ալբեր Կամյուի հայերեն թարգմանության ժամանակ հանդիպում են երկու գրաձևեր՝ Ալբեր Կամյու և Ալբեր Քամյու: Նման դեպքերում գրելաձևերը միացվում են նույն հեղինակավոր գրառման մեջ (*տե՛ս նկ. 2*):

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Համառոտագրություն	Առաջնորդողի տեսակ	Օգտագործված մեջ
Personal Names: Կամյու, Ալբեր 1913-1960 տես նաև: Զամյու, Ալբեր 1913-1960	Personal Name	2 գրառում(ներ)

Նկ. 2.

«Ալբեր Կ(Զ)ամյու» հեղինակավոր գրառման նկարագրությունը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի էլեկտրոնային գրացուցակի առարկայական հեղինակավոր գրառումները կազմվում են «Ֆակուլտետ-ամբիոն» համադրությամբ, որի արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը (*տե՛ս նկ. 3*).

Համառոտագրություն	Առաջնորդողի տեսակ	Օգտագործված մեջ
Topical Term: Տնտեսագիտություն տես նաև: Կառավարում Միջազգային տնտեսական հարաբերություններ Ֆինանսներ Հաշվապահական հաշվառում Մարքեթինգ Վիճակագրություն Միկրոտնտեսագիտություն Մակրոտնտեսագիտություն Տնտեսամաթեմատիկական մոդելավորում Ընօգտագործման տնտեսագիտություն և հողագույքային հարաբերություն Զաղաքատնտեսություն Ապրանքագիտություն Փորձաքննություն	Topical Term	758 գրառում(ներ)

Նկ. 3.

ՀՊՏՀ գրադարանի էլեկտրոնային գրացուցակի առարկայական հեղինակավոր գրառման ընդհանուր տեսքը

Տարանջատվում են նաև ամբիոններում դասավանդվող հիմնական առարկաների խմբերի, որի արդյունքում մեր գրադարանից օգտվողները կարող են ավելի կարճ ժամանակահատվածում ծանոթանալ տվյալ հեղինակավոր գրառման նյութերին (*տե՛ս նկ. 4*):

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Համառոտագրություն	Առաջնորդողի տեսակ	Օգտագործված մեջ
Topical Term: Հաշվապահական հաշվառում տես նաև: ֆինանսական հաշվառում կառավարչական հաշվառում Չարկային հաշվառում Աուդիտ և ներքին վերահսկողություն Տնտեսական գործունեության վերլուծություն և ֆինանսական վերլուծություն	Topical Term	84 գրառում(ներ)

Նկ. 4.

«Հաշվապահական հաշվառում» առարկայական հեղինակավոր գրառման կառուցվածքը

Ամփոփում

Հեղինակավոր գրառումները կազմում են գրադարանի տեղեկատվական և որոնողական համակարգի աջակցության կարևոր մասը՝ նույնականացնելով անձանց, կազմակերպություններին, աշխարհագրական անվանումները, առարկաները և այլն: Հեղինակավոր գրառումների միջոցով կապեր են հաստատվում տարբեր տարրերի միջև, որոնք ապահովում են տեղեկատվական ռեսուրսների հասանելիությունը: Հեղինակավոր գրառումները մատենագիտական տվյալների տարատեսակներ են, որոնց հիման վրա տվյալների որոնումը թվային պաշարներում կատարվում է առավել արագ և արդյունավետ:

Օգտագործված գրականության ցանկ (References)

CUTTER 1876 – Cutter, Ch. (1876), *Public libraries in the United States of America. Their history, condition and management. Special report, Department of the Interior, Part II. Rules for a Printed Dictionary Catalogue*, Washington U.S. Government Printing Office, 1876, 1232;

САКОВА 2022 – Сакова, О., Падерина, А. (2022), Создание электронного каталога в библиотеке Знаменского собора Кемеровской епархии, *Труды ГПНТБ СО РАН*, Новосибирск, 1(13), 36-41 [Sakova, O., Paderina, A. (2022), Sozdanie elektronnogo lataloga v biblioteke Znamenskogo sobora Kemerovskoi eparkhii, *Trudi GPNTB CO RAN*, 1(13), 36-41];

СЕМЕНОВА 2019 – Семенова, О., Ласточкина, Н., Стеллецкий, В. (2019), База данных "авторитетный файл наименований научных учреждений АПК": формирование, организация поиска, актуализация, *Московский экономический журнал*, Москва, 7, 63-74 [Semenova, O., Lastochkina, N., Stelletski, V. (2019), Baza dannikh "avtoritetnii fayl naimenovaniy nauchnikh uchrezhdeni APK": formirovanie, organizatsiya poiska, aktualizatsiya, *Moskovski ekonomicheski zhurnal*, Moskva, 7, 63-74].

AUTHORITATIVE RECORDS AS A LIBRARY TOOL

GAREGIN GHOSHIKYAN

Scientific Library of the Armenian State University of Economics

Keywords: Authoritative record, electronic bibliography, digital library, library function, OPAC, KOHA, MARC 21.

Modern library activities are changing their functions in line with the rapid development of the 21st century. The goals of library cataloging, planned years ago, need to be updated in order to meet modern demands. Among them are authoritative records. Authoritative records contain unified authoritative data. They constitute an important part of the library toolbox. Authoritative records provide not only librarians, but also readers with greater opportunities to search for the materials they need within the extensive information available in the electronic catalog. Each library should bring its authoritative records in line with its type. The overall structure of the authoritative records available in the electronic catalog of the Scientific Library of the Armenian State University of Economics represents the field of economics and its outstanding (լյաւ prominent) representatives.

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ*

ՀՏԴ: 027.625

DOI: 10.54503/2953-8092.2024.2(4)-62

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0007-2034-8062](https://orcid.org/0009-0007-2034-8062)

Ժամանակակից աշխարհում մանկական գրադարանները կանգնած են մի շարք նոր մարտահրավերների առաջ, որոնք կապված են տեխնոլոգիական զարգացման, ընթերցանության հանդեպ հետաքրքրության նվազման և կրթական պահանջների փոփոխության հետ: Այս մարտահրավերները ոչ միայն պահանջում են արագ ադապտացում, այլև նորարարական մոտեցումներ, որոնք կօգնեն գրադարաններին շարունակել իրենց կարևոր առաքելությունը՝ երեխաների կրթության, մշակութային դաստիարակություն և սոցիալական զարգացման խթանումը:

Հոդվածում կքննարկենք ժամանակակից մանկական գրադարանների առաքելությունն ու նպատակները, ինչպես նաև կներկայացնենք վերջինիս առջև ծառայած մարտահրավերներն ու լուծման հնարավոր ուղիները:

In the modern world, children's libraries face a range of new challenges related to technological advancements, the decline in interest in reading, and changes in educational demands. These challenges require not only adaptability but also innovative approaches to help libraries continue fulfilling their crucial mission of promoting children's education, cultural upbringing, and social development.

* Հոդվածը ներկայացվել է 28.11.2024, գրախոսվել է 06.12.2024, ընդունվել է տպագրության 18.12.2024:

The article was submitted on 28.11.2024, reviewed on 06.12.2024 accepted for publication on 18.12.2024.

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

This article will explore the mission and objectives of modern children's libraries, as well as present the challenges they face and potential solutions to address them.

Բանալի բառեր՝ Մանկական/պատանեկան գրադարան, մարտահրավերներ, գրադարանի առաքելություն, ժամանակակից գրադարանավար, տեղեկատվական դարաշրջան, միջազգային համագործակցություն, ֆինանսական աջակցություն:

Ինչպես հղել՝ Աճեմյան, Ն. (2024), Մանկական գրադարանները ժամանակակից աշխարհում, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(4), 62-72. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-62](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-62)

How to cite (APA style): Atshemyan, N. (2024). Children's Libraries in the Modern World, *Herald of the Armenian Library Association*, 2(4), 62-72. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-62](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-62)

Ներածություն

Ժամանակակից աշխարհում մանկական գրադարանները գտնվում են արագ փոփոխվող սոցիալական, մշակութային և տեխնոլոգիական միջավայրի ազդեցության տակ: Թվային տեխնոլոգիաների զարգացումը, տեղեկատվական հոսքերի բազմապատկումը և երեխաների ուշադրության կենտրոնացման խնդիրները ստեղծում են նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են գրադարանների գործառույթների վերաիմաստավորում:

Մանկական գրադարաններն այսօր այլևս միայն գրքերի պահպանման և ընթերցանության խթանման վայր չեն: Դրանք վերածվել են բազմաֆունկցիոնալ կենտրոնների, որոնք միավորում են կրթությունը, մշակույթը և տեխնոլոգիաները՝ նպաստելով երեխաների բազմակողմանի զարգացմանը:

Մանկական գրադարանները պետք է նաև տարբերակել դպրոցական գրադարաններից, որոնք առաջին հերթին ուղղված են կրթական գործընթացի խթանմանը: Դրանից ելնելով՝ դրանց հավա-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

քաճուները պարունակում են դասագրքեր և ընթերցանության համար պահանջվող գրականություն: Ի տարբերություն վերջիններիս՝ մանկական գրադարաններն ապահովում են նաև արտադասարանական ժամանցի ընթերցանության համար անհրաժեշտ գրականությունը և սպասարկում են ոչ միայն դպրոցական, այլև նախադպրոցական տարիքի ընթերցողներին, պատանիներին և երիտասարդական այլ խմբերին (WALCZAK-NIEWIADOMSKA 2014, 121):

Մանկական գրադարանների առաքելությունն ու դերը

Մանկական գրադարանները հնուց ի վեր եղել են հասարակության կրթական և մշակութային կառույցների կարևոր մասը՝ ծառայելով որպես երեխաների համար գիտելիքի, մտքի զարգացման և ստեղծագործական հնարավորությունների հարթակ: Ժամանակակից պայմաններում, երբ տեխնոլոգիաներն ակտիվորեն ներխուժում են կրթական ոլորտ, մանկական գրադարանները ստանձնել են նոր դեր՝ պահպանելով իրենց ավանդական արժեքը:

Մանկական գրադարանների առաքելության առանցքը կրթության և ընթերցանության խթանումն է, որից ելնելով նրանք երեխաներին առաջարկում են անհրաժեշտ ռեսուրսներ և ձևավորում են մանուկների զարգացմանը նպաստող միջավայր:

Մանկական գրադարաններն ունեն երեք հիմնական առաքելություն, որոնք փոխկապակցված են միմյանց հետ.

✓ *Կրթական.* աջակցություն դպրոցական ծրագրերին, ընթերցանության հմտությունների զարգացում, գրավոր և բանավոր խոսքի խթանում:

✓ *Սոցիալ-մշակութային.* գրադարանները համայնքային հարթակներ են, ուր երեխաները կարող են մասնակցել խմբային քննարկումների, ինտերակտիվ միջոցառումների և սոցիալիզացիային նպաստող այլ միջոցառումների:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

✓ *Սլոեդագործական.* գրադարանները կազմակերպում են արվեստի, երաժշտության և այլ ոլորտների միջոցառումներ՝ նպաստելով երեխաների հետաքրքրությունների բացահայտմանն և զարգացմանը:

Խիստ կարևորվում է մանկական գրադարանի տեղեկատվական գործառույթը, քանի որ սպասարկվող գրականությունը հասանելի է բոլոր երեխաներին՝ անկախ սոցիալ-տնտեսական պայմաններից: Այս առումով կարևոր դեր են խաղում թվային գրադարանները, որոնք ընդլայնում են տեղեկության հասանելիության հնարավորությունները: Կարևորվում են նաև ընթերցանության խթանմանը միտված միջոցառումները, որոնք միտված երեխաների մեջ ընթերցողական հմտությունների ձևավորմանն ու վերլուծական մտածողության զարգացմանը:

Գրադարանավարի դերը ժամանակակից մանկական գրադարանում

Ժամանակակից գրադարաններում գրադարանավարների դերը անհամեմատ մեծացել է, քանի որ նրանք ոչ միայն գրքեր ու ռեսուրսներ են տրամադրում, այլև մասնակցում են համայնքի կրթական և մշակութային զարգացմանը: Հատկապես մանկական և պատանեկան գրադարաններում գրադարանավարների ազդեցությունը ուղղակիորեն կապվում է ընթերցանության խթանման, մշակութային միջավայրի ստեղծման և կրթական գործընթացների կազմակերպման հետ:

Գրադարանավարներ են համարվում այն մասնագետները, որոնք կարողանում են գիրքը մոտեցնել ընթերցողին, ովքեր կոտրում են ընթերցանության մասին առկա կարծրատիպերը և փոխարինում դրանք նոր, ժամանակակից մոտեցումներով: Այսինքն՝ գրադարանավարը ոչ միայն վերահսկում է գրադարանի աշխատանքը,

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

այլև վարում է ակտիվ մանկավարժական գործունեություն, կազմակերպում միջոցառումներ, որոնք հետաքրքրություն կառաջացնեն հատկապես երեխաների շրջանում:

Միջազգային գրադարանային ասոցիացիան (IFLA) «0-18 տարեկան երեխաների սպասարկումը գրադարաններում» ուղեցույցում առանձնակի ուշադրություն է դարձնում գրադարանավարների կերպարին ու նրանց առաքելությանը՝ ընդգծելով այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են ընթերցանության խթանման և արդյունավետ կազմակերպման համար: Այս ուղեցույցում նշված են գրադարանավարների հիմնական պարտականությունները, որոնք պետք է ներառեն երեխաների զարգացմանը միտված հոգեբանական մի շարք գործոնները և դրանց ազդեցությունը նրանց հաղորդակցման հմտությունների և գրագիտության վրա¹:

Գրադարանավարը պետք է նաև հետևի ժամանակակից տեխնոլոգիական զարգացումներին, սոցիալական մեդիայի ազդեցությանը և թվային աշխարհի զարգացման միտումներին, ինչը թույլ կտա արդյունավետորեն օգտագործել նորարարական մեթոդները՝ ընթերցանությունն ավելի հասանելի և հետաքրքիր դարձնելու համար: Խիստ կարևորվում են հետաքրքիր և բազմազան միջոցառումները, որոնք կբավարարեն համայնքի բոլոր երեխաների կարիքները, կմեծացնեն ընթերցանության հանդեպ հետաքրքրությունը և կօգնեն ստեղծել հարմարավետ միջավայր ինչպես երեխաների, այնպես էլ նրանց ընտանիքների համար:

¹ IFLA Guidelines for Library Services to Children aged 0-18
https://www.ifla.org/wp-content/uploads/2019/05/assets/libraries-for-children-and-ya/publications/ifla-guidelines-for-library-services-to-children_aged-0-18.pdf
(18.12.2024)

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Համայնքի ներգրավվածությունը և գործընկերային հարաբերությունների ձևավորումը ևս կարևոր է ընթերցանության խթանման համար: Գրադարանավարը պետք է ակտիվորեն շփվի այլ կազմակերպությունների հետ՝ համատեղ իրականացնելով երեխաների կրթական զարգացմանը միտված ծրագրեր: Գործնականում այս ամենն իրականացնելիս պետք է հաղորդակցման արդյունավետ մեթոդներ կիրառվեն երեխաների ընտանիքների հետ շփումների ժամանակ:

Այսպիսով, գրադարանավարի դերը ընդլայնվում և հատում է մասնագիտական սահմանները՝ դառնալով միջին օղակ՝ ուսուցման, ինքնակրթության և մշակույթի միջև:

Մանկական գրադարաններ. նոր մարտահրավերներ եվ առաջարկվող լուծումներ

Գրադարանների և գրադարանային աշխատանքների ապագան նոր գիտելիքի և աշխատանքային նոր գործիքակազմի ներառումն է գրադարան: Այս հարթակում մանկական գրադարանները հաճախ կանգնում են նոր մարտահրավերների առաջ, որոնց առանցքը տեխնոլոգիական զարգացումն է: Այս մարտահրավերները պահանջում են նորարարական մոտեցումներ (RANKIN, BROCK 2012, 29)²³:

Մարտահրավերներ

✓ Թվային դարաշրջանի ազդեցություն

Թվային տեխնոլոգիաների տարածումը կտրուկ փոխել է տեղեկատվություն ստանալու ձևերը: Տեխնիկական նորագույն սար-

² Bowie Liz, The Biggest Challenges Public Libraries are Facing
<https://ideas.demco.com/blog/the-biggest-challenges-public-libraries-are-facing/>
(18.12.2024)

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

քավորումներն ու համացանցը գրավում են երեխաների ուշադրությունը՝ նվազեցնելով հետաքրքրությունը գրքերի հանդեպ:

✓ **Ընթերցանության նկատմամբ հետաքրքրության նվազում**

Մարդիկ հաճախ նախընտրում են տեսանյութեր կամ սոցիալական մեդիա, քան տպագիր գրքեր: Երեխաների շրջանում ընթերցանության հանդեպ հետաքրքրության նվազումը ազդում է նրանց լեզվական և մտավոր հմտությունների զարգացման վրա:

✓ **Մշակութային բազմազանության ապահովման պահանջ**

Ժամանակակից հասարակության բազմամշակութային կառուցվածքը ստեղծում է նոր մարտահրավեր՝ ապահովելու տարբեր լեզուներով և մշակույթներով գրականության հասանելիությունը:

✓ **Ֆինանսական և նյութական ռեսուրսների պակաս**

Շատ գրադարաններ ունեն սահմանափակ ֆինանսական միջոցներ, ինչը խոչընդոտում է նոր գրքերի ձեռքբերմանը, տեխնոլոգիաների արդիականացմանը և նորարարական ծրագրերի ներդրմանը:

✓ **Համայնքային ներգրավվածության պակաս**

Ծնողներն ու համայնքի մյուս անդամները հաճախ չեն հասկանում մանկական գրադարանների կարևոր դերը, ինչը սահմանափակում է երեխաների՝ գրադարաններ այցելելու հաճախականությունը:

Առաջարկվող լուծումներ

Այս մարտահրավերները հաղթահարելու համար անհրաժեշտ է համատեղել մի քանի հիմնական տարրեր՝ տեխնոլոգիական լուծումներ, մշակութային բազմազանություն, ֆինանսական աջակցություն և համայնքային ներգրավվածություն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Տեխնոլոգիական լուծումներ - Թվային տեխնոլոգիաների ինտեգրումը կարող է նշանակալի կերպով բարելավել մանկական գրադարանների գործունեությունը: Ներկայում երեխաները ծանոթանում են նոր տեխնոլոգիական լուծումներին ու սարքավորումներին, որոնցից կախված փոփոխվում են տեղեկատվություն ստանալու և տալու ձևերը: Արդյունքում, գրադարանները պետք է ձևավորեն թվային հարթակներ, որոնք նպաստում են ընթերցանության տարածմանը գրքերի, աուդիոգրքերի, ինտերակտիվ խաղերի և VR/AR տեխնոլոգիաների միջոցով: Սա նպաստում է երեխաների հետաքրքրությունների շրջանակի ընդլայնմանը և նոր մոտեցումների ներդրմանը, ինչպես նաև թվային գրադարաններից և պարբերաբար թարմացվող էլեկտրոնային նյութերից օգտվելու հմտությունների ձևավորմանը:

Մշակութային բազմազանություն - Մշակութային բազմազանության ապահովման համար պետք է մանրամասն ուսումնասիրել ժամանակակից հասարակության բազմամշակութային կառուցվածքը: Մանկական գրադարանները պետք է ապահովեն մի շարք լեզուներով գրականությունը, որը կնպաստի երեխաների բազմակողմանի զարգացմանը: Դրա համար անհրաժեշտ է գրադարանային ծրագրերի մշակում, որոնք կընդգրկեն տարբեր մշակույթներին և սովորույթներին հասանելի հնարավորություններ: Կարևոր է նաև միջազգային համագործակցությունը, որի միջոցով գրադարանները կարող են ձեռք բերել բազմալեզու և բազմաբնույթ գրականություն և այն մատուցելու նոր միջոցներ:

Ֆինանսական աջակցություն

Գրադարանների զարգացման և արդիականացման հնարավորություններն իրատեսական են դառնում միայն ֆինանսական համապատասխան աջակցության դեպքում: Մեծ թվով գրադարաններ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

բախվում են ֆինանսական սահմանափակումների հետ, որոնք խոչընդոտում են անհրաժեշտ գրականությունը ձեռք բերելուն, նոր տեխնոլոգիաների ներդրմանը և նոր ծրագրերի մշակմանը: Խնդրի լուծումն ինչպես պետական ֆինանսական աջակցության ընդլայնման, այնպես հանրային և մասնավոր հատվածների համագործակցության մեջ է, օրինակ՝ դրամաշնորհներ, նվիրատվություններ և այլն:

Համայնքային ներգրավվածություն

Գրադարանների հաջողության գրավականներից մեկն էլ համայնքի ներգրավվածությունն է: Որքան մեծ է այն, այնքան ավելի արդյունավետ են կիրառված մեթոդները: Համայնքային ներգրավվածությունը պետք է լինի բազմակողմանի՝ սկսած ծնողների մասնակցությունից, վերջացրած համայնքային կենտրոնների և դպրոցների հետ համագործակցունը: Սա ենթադրում է ծնողների համար սեմինարների կազմակերպում, ընտանեկան ընթերցանության ծրագրերի անցկացում, համայնքային միջոցառումների խթանում:

Այս բոլոր մոտեցումների համակցված կիրառման շնորհիվ գրադարանները կարող են ոչ միայն հաղթահարել ներկա մարտահրավերները, այլև նոր ուղիներ բացել մանկական գրադարանների զարգացման համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից տեխնոլոգիական զարգացման դարաշրջանում մանկական գրադարանները կանգնած են մարտահրավերների առաջ, որոնց դիմագրավելու համար նրանք պետք է ամբողջությամբ վերափոխվեն՝ վերածվելով բազմագործառնության կենտրոնների, որոնք կհամատեղեն ավանդական ընթերցանության հմայքը ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունների հետ: Դրանք պետք է դառնան ոչ միայն տեղեկատվության, այլև մշակութային, ստեղծագործական և սոցիալական զարգացման հենասյուներ, որ-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ստեղ երեխաները կարող են ընդլայնել իրենց հետաքրքրությունների շրջանակը, ինչպես նաև զարգացնել երևակայությունն ու հմտությունները:

Ժամանակակից մարտահրավերները կարելի է դիտարկել որպես հնարավորություն՝ գրադարանների արդյունավետությունը բարձրացնելու և երեխաներին նոր միջավայրում զարգացնելու համար: Նորարարական ծրագրերի իրականացումը, համայնքների ներգրավումն ու միջազգային համագործակցության ընդլայնումը կարող են մանկական գրադարանները դարձնել ավելի դինամիկ և կարևոր ժամանակակից հասարակության համար:

Օգտագործված գրականության ցանկ (References)

RANKIN, BROCK 2012 – Rankin, C., Brock, A. (2012), *Library Services for Children and Young People: Challenges and Opportunities in the Digital age*, London, Facet Publishing, 2012, 155 p;

WALCZAK-NIEWIADOMSKA 2014 – Walczak-Niewiadomska, A. (2014), Libraries for children as a place for parents (based on European experience), *Around the book, the library and information: the present state, challenges, prospects. Studies and essays*, Lublin, 303 p.

CHILDREN'S LIBRARIES IN THE MODERN WORLD

NAIRA ATSHEMYAN

Khanko Aper National Children's Library

Keywords: Children's/youth library, challenges, library mission, modern librarian, information age, international cooperation, financial support.

In the rapidly evolving modern world, children's libraries play a pivotal role in bridging the realms of education, reading, and creative development. While technological advancements and shifting societal norms present significant

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

challenges, they also offer unprecedented opportunities for libraries to redefine their mission and expand their impact.

By integrating digital tools, embracing multicultural resources, and fostering partnerships within communities and beyond, children's libraries can transform into dynamic hubs of knowledge and creativity. The role of librarians as educators, innovators, and community leaders becomes indispensable in cultivating a culture of reading and lifelong learning among young generations.

Ultimately, children's libraries stand as vital institutions that not only preserve the charm of traditional reading but also adapt to the demands of a digitally connected world. By meeting these challenges with innovation and collaboration, they can continue to inspire, educate, and nurture the minds of children, preparing them for the complexities and opportunities of the future.

Շարունակելի...

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ*

ՀՏԴ: 027.625(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2024.2(4)-73

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0009-2094-6614](https://orcid.org/0009-0009-2094-6614)

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը, որպես մանկական գրքի ազգային պահոց, հավաքում, պահպանում և ընթերցողին է տրամադրում մանկապատանեկան տպագիր արտադրանքի առավել լիակատար հավաքածուն: Շնորհիվ իր կատարած բազմաբնույթ աշխատանքների՝ գրադարանը 90 տարիների ընթացքում մեծ ճանաչում է ստացել ինչպես մանուկ ու պատանի ընթերցողների, այնպես էլ մասնագիտական, գրական, մշակութային, գիտական շրջանակներում:

Սույն հոդվածով անդրադառնալու ենք գրադարանի սպասարկման աշխատանքներին (ընթերցողների ներգրավում, գրանցում, ընթերցողի հետ տարվող անհատական և խմբային աշխատանք և այլն):

The Khnko Apor National Children's Library holds a pivotal role as Armenia's national repository for children's literature, dedicated to collecting, preserving, and providing access to a comprehensive array of printed works for young audiences. Over the course of its 90-year history, the library has earned widespread recognition, not only among children and juvenile, but also within professional, literary, cultural, and scientific communities.

* Հոդվածը ներկայացվել է 14.10.2024, գրախոսվել է 31.10.2024, ընդունվել է տպագրության 18.11.2024:

The article was submitted on 14.10.2024, reviewed on 31.10.2024 accepted for publication on 18.11.2024.

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

This article will explore the library's service activities, highlighting how its initiatives foster engagement with readers and support literacy and learning. Below are the key areas of focus.

Բանալի բառեր¹ Մանկական գրադարան, ընթերցողներ, սպասարկում, գրադարանային ծառայություններ, պահանջմունքներ, կրթություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, միջոցառումներ:

Ինչպես հղել¹ Հովհաննիսյան, Կ. (2024), Ընթերցողների սպասարկումը Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանում, *Հրատարակված Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(4), 73-88.
[https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-73](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-73)

How to cite (APA style): Hovhannisyan, K. (2024), Circulation Service in the Khnko Aper National Children's Library, *Herald of the Armenian Library Association*, 2(4), 73-88. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-73](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-73)

Ներածություն

Սպասարկումն ու ընթերցողական պահանջմունքների բավարարումը յուրաքանչյուր գրադարանի առանցքային գործառնություններից են: Աշխատանքային այս կարևորագույն օղակի ճիշտ և նպատակային կազմակերպումն արտացոլում է գրադարանի դեմքն ու հեղինակությունը: Այն առավել կարևորվում է մանկական գրադարանում, ուր գործ ունենք ընթերցանության ասպարեզում իրենց առաջին քայլերն անող փոքրիկների, որոշակի ընթերցողական պահանջներ ունեցող պատանիների հետ:

Որքան էլ մեծ է ծնողների, մանկավարժների, ինչպես նաև գրախանութների ու գրահրատարակչական կազմակերպությունների դերը երեխաներին գրքով ապահովելու գործում, այնուամենայնիվ, անգնահատելի են գրադարանի մատուցած ծառայությունները՝ մանուկների ու պատանիների մեջ ընթերցանության հանդեպ սեր սերմանելու, հետաքրքիր, հարուստ և բազմակողմանի գիտելիքներ փոխանցելու առումով (WALTER 2003, 572):

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանը, առաջնորդվելով ժամանակակից պահանջներով և առաջնային համարելով աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը (ՏՈՆՈՅԱՆ 2023, 83), ընթերցողների սպասարկումը կատարում է շերտավորված՝ հետևյալ ուղղություններով.

✓ նախադպրոցական և 1-4-րդ դասարանցիների սպասարկման ենթաբաժին

✓ 5-8-րդ դասարանցիների սպասարկման ենթաբաժին

✓ 9-12-րդ դասարանցիների սպասարկման ենթաբաժին

✓ Ընթերցասրահի և մամուլի ենթաբաժին

✓ Ընթերցանությունը կազմակերպողների ենթաբաժին

✓ Հեքիաթի սրահ

✓ Ազատ ժամանցի ենթաբաժին

✓ Հանրային կապերի և միջոցառումների բաժին

✓ Օտարալեզու հավաքածուի սպասարկման բաժին

✓ Իրանական ընթերցասրահ

✓ Չինական անկյուն

✓ Արաբական անկյուն

✓ Երաժշտական-նոտագիր վավերագրերի բաժին

✓ Երաժշտության ունկնդրման ենթաբաժին

Սպասարկման նման կառուցվածքը ենթադրում է երեխաների հետ տարվող տարբերակված, շարունակական աշխատանք, նրանց մոտ ընթերցանության մշակույթի ձևավորում՝ սկսած նախադպրոցական տարիքից մինչև ուսանողական շրջան: Տարիքին համապատասխան սրահները՝ առձեռն հավաքածուներով և ցուցադրակներով (գեղարվեստական, գիտահանրամատչելի, գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ գրքեր, տարբեր թեմաներին

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

նվիրված ցուցահանդեսներ ու գրադարակներ) օգնում են լրացնելու, հարստացնելու դպրոցում ստացած գիտելիքները:

Սպասարկման բաց-դարակային համակարգը հնարավորություն է տալիս ավելի մոտիկից ծանոթանալու և ընտրելու անհրաժեշտ գիրքը (HEPLER, HORALEK 2023, 72-74): Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի սպասարկման յուրաքանչյուր սրահում բաց-դարակներով տեղադրված գրականությունն այս նպատակի իրագործմանն է միտված: Այստեղ նաև հատուկ տացքասեղաններ են նախատեսված առանձին դասարանների կամ ընթերցողական խմբերի համար: Սրահները համալրված են նաև համակարգիչներով՝ զուգահեռ էլեկտրոնային սպասարկումը ավելի արդյունավետ կազմակերպելու համար, ինչը նաև հնարավորություն է տալիս երեխաներին՝ օգտվելու ինչպես իրենց սպասարկող սրահի ծառայություններից, այնպես էլ ընթերցասրահի, ձայնադարանի, նոտաերաժշտական, օտար լեզուներով գրականության սրահների գրքային հավաքածուներից: Այսօր նոր տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն է տալիս ամենատարբեր տարիքի երեխաներին՝ օգտվելու էլեկտրոնային շտեմարաններից (<https://usum.am/load/5>; www.Nairi.com; <https://granish.org/>; <https://mocak.am/>; <https://grqaser.org/>; <https://grgamol.am/>), գրադարանների Դիմագրքերից, ինչը մեծապես նպաստում է աճող սերնդի գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանը, ծանոթացնում է նրանց աշխարհի նորություններին, տալիս է սպառիչ տեղեկություններ ցանկացած թեմայի վերաբերյալ:

Եթե սրահներում ձևավորված առձեռն հավաքածուն չի բավարարում ընթերցողի պահանջմունքը, ապա նա գրադարանավարի օգնությամբ, լրացնելով պատվիրաթերթիկը, գրադարանի միասնական հավաքածուից ստանում է պահանջվող գրքերը:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ինչպե՞ս երեխային ներգրավել գրադարան

Երեխաներին պետք է սովորեցնել օգտվել գրադարաններից դեռևս վաղ տարիքում, քանի որ այս դեպքում ավելի հավանական է, որ նրանք այդպես կանեն նաև հետագայում: Երեխաների շրջանում ընթերցանության մշակույթ ձևավորելու առաջին քայլերը պետք է սկսել նրանց գրադարան ներգրավելու աշխատանքից (HAMADA, STAVRIDI 2014, 107):

Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանում, ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը, երեխան դառնում է գրադարանի ընթերցող և իրավունք է ստանում օգտվելու նրա բազմահազարանոց հավաքածուներից: Ընթերցողի համար լրացվում է առանձին անհատական ընթերցողական քարտ, որտեղ գրանցվում են նրա մասին անհրաժեշտ տեղեկությունները և ուսման ու ընթերցանության վերաբերյալ տվյալները:

Գրադարանավարի և ընթերցողի առաջին շփումից, նախնական զրույցից շատ բան է կախված: Երեխայի ստացած առաջին տպավորությունները հետագայում էլ ուղեկցում են նրան: Ծանոթանալով գրադարանից օգտվելու կանոններին, իր իրավունքներին ու պարտականություններին՝ պատանին դառնում է գրադարանի լիիրավ անդամ՝ քայլ առ քայլ մասնակցելով նրա առօրյա կյանքին: Պարբերաբար անցկացվող զրույցները, տեսություններն ու էքսկուրսիաները երեխաներին հնարավորություն են տալիս ծանոթանալու գրադարանի գործունեությանը, առկա հավաքածուներին, խմբակներին ու ստուդիաներին, բազմատեսակ միջոցառումներին և գրադարանի կրթական ու մշակութային ծրագրերին:

Երեխաներին ընթերցանության մեջ ներգրավելու ուղղությամբ տարվող աշխատանքի հաջողությունը կախված է բազմաթիվ գործոններից՝ գրադարանավարի մշտական ուշադրությունից, նրա

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ակտիվ նախաձեռնությունից, տարբեր քարոզամիջոցների օգտագործումից, մանկական և դպրոցական գրադարանավարների, ուսուցիչների և ծնողների համատեղ ջանքերից:

Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանում սպասարկումը կազմակերպվում է՝ հաշվի առնելով ընթերցողների պահանջմունքները, ընդունակությունները, որովհետև երեխաները միատարր թիրախային խումբ չեն. նրանք ունեն շատ տարբեր ունակություններ, հմտություններ, տաղանդ և պահանջարկ: Մանկական գրադարանում սպասարկումը պահանջում է հատուկ մոտեցում: Այստեղ աշխատանքները կազմակերպվում են այնպես, որ գրադարանը հանդիսանա հանդիպելու, խաղալու, հաղորդակցվելու վայր, ստեղծվում է տրամադրող մթնոլորտ՝ այնտեղ երկար մնալու և ընթերցելու համար:

Ծնողները ձգտում են ստեղծել պայմաններ, որ իրենց երեխաները լինեն խելացի, ստեղծագործ և ուսումնասեր: Կրթված հասարակությունում հաղորդակցվել և ինքնադրսևորվել կարելի է միայն բազմակողմանի զարգացած լինելու դեպքում: Այս խնդրի լուծման ճանապարհին ծնողի լավագույն գործընկերը կարող է լինել գրադարանը, քանի որ գրքերն են տալիս հստակ գիտելիքներ և հույզեր (WALCZAK-NIEWIADOMSKA 2014, 121):

Ընթերցողի հետ տարվող անհատական աշխատանքի ձևերն ու միջոցները, ընթերցանության առանձնահատկությունների ուսումնասիրումը

Յուրաքանչյուր նոր ընթերցողի մուտքը գրադարան, գրադարանավարից անհատական մոտեցում է պահանջում: Գրադարանավարի աշխատանքը երեխայի հետ, ըստ էության, նպատակաուղղված մանկավարժական գործունեություն է: Ամենակարևորը, թերևս, երեխայի վստահությունը ձեռք բերելն է: Երեխան չի սիրում հատկա-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

պես իրեն թելադրվող, պարտադրվող խոսքն ու գործելակերպը: Ուստի, գրադարանավարը պետք է զգուշորեն, մանկավարժ-հոգեբանի հմտությամբ կարողանա շահել երեխայի վստահությունը: Նա իր տեսադաշտում պետք է պահի ոչ միայն ակտիվ ընթերցողներին, այլև քիչ կամ վատ կարդացող երեխաներին: Միևնույն տարիքի երեխաների ընթերցանության մակարդակների անհատական տարբերությունները կարող են լինել շատ նշանակալից: Մանկության տարիքային յուրաքանչյուր ժամանակահատվածին հատուկ են ընթերցանության որոշակի օրենքները, ընթերցողական որակի առանձնահատուկ դրսևորումները:

Ընթերցող երեխաների վարքի ուսումնասիրումը գրադարանավարի առօրյա աշխատանքի անբաժանելի մասն է կազմում, քանի որ այն ապահովում է ընթերցանության կազմակերպման առավել գործուն մեթոդներ և ձևեր: Երեխաների ընթերցողական հետաքրքրությունների ուսումնասիրումը պայմանավորված է յուրաքանչյուր ընթերցող անհատի և նրա վրա ազդող շրջապատի համակողմանի ուսումնասիրությամբ (SHOMAN 1997, 265): Ընթերցանության ղեկավարումը չպետք է ունենա ձևական, պարտադրող բնույթ, այլ ավելի շատ պետք է կրի խորհրդատվական, օգնող բնույթ: Սպասարկող գրադարանավարը, այս ամենը հաշվի առնելով, պարզում է, թե ինչ նախասիրություններ ունի երեխան և տարին 1-2 անգամ վերլուծելով նրա ընթերցողական քարտը, ընթերցանությունը ավելի հետաքրքիր, բազմակողմանի և լայնածավալ դարձնելու նպատակով, կազմում է ընթերցանության անհատական փոքրիկ-ծրագիր և առաջնորդվում է դրանով: Ընթերցողական քարտի վերլուծությունը շատ կարևոր դեր ունի ընթերցող-երեխայի ուսումնասիրման գործում, դա այն հիմնական փաստաթուղթն է, որը բացահայ-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

տում է կոնկրետ որևէ խմբի մեկ ընթերցողի ընթերցանության ընդհանուր և առանձնահատուկ գծերը:

Կարևորելով այս ոչակը՝ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի սպասարկման սրահներում ընթերցողին գրանցելիս նշվում են տեղեկություններ երեխայի ընթերցանության, սիրած առարկաների, թեմաների, զբաղմունքի, հետաքրքրությունների, ընտանեկան գրադարանի մասին և այլն: Դրանց գումարվում է երեխայի կոնկրետ պահանջարկը կամ որոշակի թեմայով ընթերցած գրքերը: Այս ամենի հիման վրա գրադարանավարը կազմում է ընթերցողի բնութագիրը: Գրադարանավարը ընթերցողի վերադարձրած գրքերը գրանցում է կանոնավոր կերպով և՛ ընթերցողական քարտում, և՛ էլեկտրոնային եղանակով՝ միաժամանակ նրան տալով համապատասխան խորհուրդներ: Ժամանակ առ ժամանակ ուսումնասիրելով ընթերցողի քարտը՝ գրադարանավարը պարզում է նրա հաճախելիությունը, ընթերցված գրքերի քանակը և ընթերցանության որակը: Բանավոր հարցումների, զրույցների միջոցով նա պարզում է նաև, թե երեխան ինչպես է ընթերցել գիրքը, որքանով է ըմբռնել, հիշում է արդյոք հերոսների անուններն ու վարքագիծը, դեպքերը, ինչպիսի կարծիք ու գնահատականներ ունի, ինչպես է տրամաբանում և այլն: Կիսամյակը մեկ, հատկապես տարվա վերջում, սպասարկման տարիքային տարբեր ենթաբաժիններում ուսումնասիրվում են ակտիվ ընթերցողների քարտերը: Տարվա ընթացքում 40 և ավելի գիրք կարդացած ընթերցողները դառնում Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի տարվա լավագույն ընթերցողներ: Արդեն 5-րդ տարին շարունակ գրադարանում տեղի է ունենում «Տարվա լավագույն ընթերցող» մրցանակաբաշխությունը, լավագույնը ճանաչված մեր ընթերցողները գրադարանի կողմից պարգևատրվում են պատ-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

վոգրերով և խորհրդանշական պարզկներով, ինչպես նաև նվերներ են ստանում տարբեր կազմակերպությունների կողմից:

Գրադարանավարը հատուկ ուշադրություն է դարձնում նաև քիչ ընթերցող, գրադարան համեմատաբար քիչ հաճախող երեխաներին, փորձում ներգրավել նրանց ընթերցանության ոլորտ, հրավիրում է մասնակցելու գրադարանում կազմակերպվող թեմատիկ միջոցառումներին:

Սպասարկումը և երեխայի հետ տարվող աշխատանքը քարացած լինել չեն կարող: Գրադարանավարը անպայման հաշվի է առնում ժամանակի թելադրանքը, ընթերցողի տարիքային առանձնահատկություններն ու ներուժը:

Փորձը ցույց է տալիս, որ երեխաները, հատկապես կրտսեր տարիքի, պահանջում են կամ ուսուցչի հանձնարարած, կամ էլ ծնողների, ընկերների առաջարկած գրքերը: Որպեսզի երեխայի մոտ մշակվի գեղագիտական ճաշակ և որոշակի վերաբերմունք ձևավորվի ընթերցանության նկատմամբ, գրադարանավարներն օգտագործում են գրքային հատուկ հավաքածուն ու մամուլը: Ընթերցողների հետ տարվող անհատական աշխատանքներում չկան համընդհանուր, համակարգող ձևեր: Գրադարանավարը, հաշվի առնելով երեխայի ընթերցանության առանձնահատկությունները, ձգտում է, որ նա կարդա այն գրքերը, որոնք կնպաստեն նրա գիտելիքների խորացման, բնավորության և աշխարհայացքի ձևավորմանը: Ուստի, գրադարանավարները հաճախ խորհրդակցում և միմյանց հետ փոխանակում են մտքեր՝ ավելի ճիշտ և նպատակային գործելու համար: Դա հատկապես անհրաժեշտ է ընթերցողական քարտերը սրահից սրահ կամ տացքասեղանից-տացքասեղան տեղափոխելու ժամանակ: Անհատական, ինչպես նաև խմբային գրույցների, հարց ու պատասխանի միջոցով գրադարանավարները հայտնաբերում են այն

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

պատճառները, որոնք երեխաների շրջանում առաջացրել են որոշակի հետաքրքրություն, ինչպես նաև ծանոթանում են ընթերցված գրքերի վերաբերյալ նրանց կարծիքներին: Մյուս կողմից գրադարանավարները պարզում են, թե ինչ ազդեցություն ունեն երեխաների հետաքրքրությունների ձևավորման վրա ընտանիքը, դպրոցը, ընկերները, համացանցը, հեռուստատեսությունը և այլ գործոններ: Այս ամենից հետո որոշ չափով պարզվում է ընթերցողների անհատականությունը և ըստ այդմ ձևավորվում, ուղղորդվում են նրանց հետաքրքրությունները:

Գրադարանավարի ուշադրության կենտրոնում մշտապես լինում են ուսուցիչների կողմից հանձնարարված ծրագրային և արտադասարանային ընթերցանության գրքերը: Այդ գրականության ապահովումը և դպրոցականների պահանջների բավարարումը գրադարանավարի առաջնահերթ պարտականությունն է:

Ընթերցողներին բավականաչափ օգնում են սպասարկող սրահի կողմից ամեն տարի կազմվող «Ի՞նչ կարդալ» և թեմատիկ այլ հանձնարարական ցանկերը, որտեղ ընդգրկվում են հայ և օտարագի ժամանակակից ու դասական գրողների ստեղծագործությունները:

Ընթերցողների կարդացած գրականության ուսումնասիրման գործում կարևոր դեր են կատարում սպասարկման սրահներում տարիներ շարունակ անցկացվող սոցիոլոգիական հարցումները, օրինակ՝ «Քո նախընտրած ժանրը, հեղինակը», «Քո սիրելի գրական հերոսը», «Ո՞ր ստեղծագործությունը կցանկանայիր թարգմանվեր հայերեն» և այլն:

Երեխայի յուրաքանչյուր այցելություն գրադարան նրա մոտ խորացնում է սերը ընթերցանության հանդեպ և սովորեցնում է կատարել գրքի ճիշտ ընտրություն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Խմբային աշխատանք

Ընթերցողների հետ տարվող աշխատանքների կարևոր մեթոդներից մեկը խմբային աշխատանքն է, որի հիմքում ընկած է ընթերցողական որոշակի խմբերի գիտելիքների ու տարիքային առանձնահատկությունների տարանջատումը: Այս առումով գրադարանում տարբերակված աշխատանքներ են տարվում ըստ տարիքային խմբերի՝ կրտսեր, միջին, բարձր տարիքի երեխաների համար՝ հաշվի առնելով տվյալ խմբին բնորոշ հետաքրքրությունները, գիտելիքները, ընկալման և մտածողության աստիճանը:

Սպասարկման սրահներում և ընթերցասրահում հաճախ են կազմակերպվում տարբեր թեմաներին և գիտության տարբեր բնագավառներին նվիրված զրույցներ, տեսություններ, բարձրաձայն ընթերցանություններ և այլն:

Զրույցի ընթացքում տրվում են տեղեկություններ թեմայի, գրքի հեղինակի, խմբագրի, նկարչի, հրատարակչության, ինչպես նաև գրքի բովանդակության և հերոսների մասին: Զրույցը կարդացած գրքի մասին, հատկապես կրտսեր և միջին տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքի առավել տարածված ձևերից է: Բացի կարդացած գրքերի մասին անցկացվող զրույցներից, անցկացվում են նաև թեմատիկ զրույցներ՝ նվիրված բնությանը, արվեստին, տիեզերքին, պատմությանը և այլն: Կարևոր են նաև զրույցները՝ նվիրված գրողների, երաժիշտների, արվեստագետների, գիտնականների և այլ նշանավոր անձանց հոբելյաններին: Գրադարանավարը զրույցի միջոցով երեխաներին օգնում է համեմատություններ անել, կարծիքներ հայտնել, եզրակացությունների հանգել: Փոքրածավալ, կարճ զրույցները ընթերցողներին ոչ միայն գիտելիքներ են հաղորդում, այլև հուսալի կամուրջ են ստեղծում գրադարանավարի և կոնկրետ ընթերցողական խմբի միջև: Դրանք երբեմն ուղեկցվում են գրական

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

խաղերով, որի ընթացքում գրադարանավարը հարցերի միջոցով պարզում է ընթերցողների պատկերացումներն ու տպավորությունները: Խուսափելով ուսուցողական և խրատական տոնից՝ գրադարանավարը զրույցի միջոցով նպաստում է գրքի բովանդակությունը խորությամբ ընկալելուն:

Տեսությունը ընթերցողների հետ տարվող խմբային աշխատանքում լայնորեն տարածված ձևերից է: Տեսությունը հանդիսանում է աշխատանքի ինքնուրույն ձև, բայց հաճախ անցկացվում է գրքային ցուցահանդեսի մոտ, երբեմն էլ բացում կամ եզրափակում է որևէ միջոցառում: Տեսությունը բանավոր խոսք է տարբեր հրատարակությունների մասին: Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի տարբեր սրահներում մշտապես կազմակերպվող տեսություններն անցկացվում են ինչպես թեմատիկ կամ մի քանի գրքերի, այնպես էլ նոր ստացված գրականության շուրջ, որի ընթացքում ընթերցողներին ներկայացվում են հրատարակության մասին տվյալներ, գրքի համառոտ բովանդակությունը, նշանակությունը, ընթերցողական տարիքային հատկացվածությունը և այլ տեղեկություններ: Տեղի են ունենում նաև մամուլի տեսություններ, որոնք ընթերցողներին և գրադարանավարներին իրազեկ են պահում ամենատարբեր նորություններին:

Բարձրաձայն ընթերցանությունը անցկացվում է ինչպես ինքնուրույն, այնպես էլ հավելյալ՝ զուգակցելով զրույցին կամ տեսությանը: Հատկապես կրտսեր տարիքի երեխաների և գրադարանավարի միջև հաղորդակցման առավել արդյունավետ եղանակների մեկը բարձրաձայն ընթերցանությունն է, որի ընթացքում գրադարանավարն աշխատում է խոսքի արտահայտչականության միջոցով ավելի մատչելի մատուցել տեքստը երեխաներին: Հարցերի, պարզաբանումների, ուղիղ ընթերցման միջոցով ամբողջականացվում են

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

երեխաների ուշադրությունն ու ընկալումը: Բարձրաձայն ընթերցանության համար ընտրվում են այնպիսի գրքեր, որոնք առավել հետաքրքիր են, հուզական, հարցեր են առաջացնում: Շատ դեպքերում բարձրաձայն ընթերցանությանը հաջորդում է տվյալ ստեղծագործության քննարկումը և մտքերի ակտիվ փոխանակումը:

Հեքիաթապատում: Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում 1981 թվականից գործում է առանձին հեքիաթի սրահ, որի յուրահատուկ ձևավորումը և հաճելի մթնոլորտը գրավում են թե՛ փոքրերին, թե՛ մեծերին: Այստեղ ամեն օր «հեքիաթասաց մորաքույրը» հայկական տարազով աշխարհի տարբեր ժողովուրդների, ազգերի հեքիաթներ է պատմում կրտսեր տարիքի երեխաներին, ինչը երեխաների շրջանում առաջացնում է մեծ հետաքրքրություն: Հայտնի է, որ հեքիաթը հոգևոր մշակույթի կարևորագույն ճյուղերից մեկի՝ բանահյուսության տեսակներից է, արտահայտում է տվյալ ժողովրդի պատմությունը, հոգեբանությունը, մտածելակերպը, բնավորությունը:

Հեքիաթներ պատմվում և ընթերցվում են նաև գրադարանի կրտսեր և միջին տարիքի սպասարկաման սրահներում, զրուցում են դրանց շուրջը, բացատրում իմաստն ու բովանդակությունը: Այդ սրահներում առանձնացված են հեքիաթների վերաբերյալ ցուցափեղկեր, թեմատիկ դարակներ:

Հեքիաթը կրթել, դաստիարակել է սերունդների, սովորեցրել ազնվություն, համեստություն, աշխատասիրություն, արդարություն և այլն: Հեքիաթներ կարելի է կարդալ ցանկացած տարիքում, սակայն դրանք ավելի կարևոր և անհրաժեշտ են կրտսեր տարիքի դպրոցականների համար:

Էքսկուրսիան նպատակ է հետապնդում այցելուներին ծանոթացնել գրադարանի պատմությանը, գործունեությանը, գործառույթ-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ներին, կրթամշակութային ծրագրերին, շենքի պայմաններին և հնարավորություններին: Էքսկուրսիա անցկացվում է գրադարան այցելող և՛ անհատ անձանց, և՛ մեծ խմբերի՝ նախադպրոցականների, դպրոցականների, ուսանողների, ամենատարբեր պատվիրակությունների, զբոսաշրջիկների և այլոց համար: Էքսկուրսիան անցկացնելիս հաշվի են առնվում տվյալ խմբի հետաքրքրությունները: Տարբեր տարիքի երեխաների համար անցկացվող էքսկուրսիաները միմյանցից տարբերվում են ծավալով և մատչելիությամբ: Էքսկուրսիա վարողը մանրամասնորեն ներկայացնում է տվյալ տարիքին հասցեագրված ենթաբաժինը, հավաքածուն, ենթաբաժնի կողմից անցկացվող միջոցառումները և սոցիոլոգիական հարցումները:

Խնկո Ապոր անվան գրադարանին ծանոթանալու նպատակով խմբեր են գալիս մեծ մասամբ Երևան քաղաքից, նաև Հայաստանի տարբեր մարզերի դպրոցներից ու մանկապարտեզներից:

Խմբային աշխատանքները, ինչպիսիք են զրույցները, տեսությունները, բարձրաձայն ընթերցանությունը, հեքիաթապատումները, էքսկուրսիաները նպաստում են ընթերցանության խթանմանը, նոր ընթերցողների ներգրավմանն ու ակտիվացմանը, հնարավորություն են տալիս ավելի մոտիկից և հանգամանորեն ծանոթանալու գրադարանի կառուցվածքին և գործունեությանը:

Կրթամշակութային ծրագրերը և զանգվածային միջոցառումները որպես գրքի հանրահռչակման և ընթերցանության խթանման միջոց

Ընթերցանության հանդեպ երեխաների մեջ սեր արթնացնելու բազմաթիվ և տարատեսակ միջոցներից են զանգվածային միջոցառումները, որոնք մանկական գրադարանում անցկացվում են «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ», «Ազգային գրադարանային շաբաթ», «Մանկապատանեկան գրքի երևանյան

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ցուցահանդես-տոնավաճառ», «Արևմտահայ գրականության միամյակ», «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանում», «Ամառային, աշնանային, գարնանային ճամբարներ» և այլ կրթամշակութային ծրագրերի շրջանակում: Միջոցառումների անցկացումը ինքնանպատակ չէ, այլ կրթության միջոց. այն պետք է ստեղծի տրամադրություն, որին պետք է ներգրավվեն մասնակիցները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանը և՛ մշակութային օջախ է, և՛ վայր, ուր օգնում են կրթվել ու ստանալ գիտելիք: Գրադարանն այն կարևոր օղակն է, որն ամբողջացնում է ընթերցող-հրատարակիչ-գրող շղթան, որի սերտ համագործակցության արդյունքում ծնվում են նոր մտքեր, և գաղափարներ: Գրադարանի հիմնական գործառույթներից են ընթերցողների արդյունավետ սպասարկումը, գրքի հանրահոշակմանն ու ընթերցանության խթանմանն ուղղված գրադարանային ծրագրերը, որոնց նպատակը երեխաներին գրքին, գրադարանին մերձեցնելն է, ընթերցանության միջոցով նրանց ինքնաճանաչումն ու ինքնազարգացումը խթանելը:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ՏՈՆՈՅԱՆ 2023 – Տոնոյան, Ռ. (2023), Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանի 90-ամյա ուղին, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 80-87;

HAMADA, STAVRIDIS 2014 – Hamada, D., Stavridis, S. (2014), Required skills for children's and youth librarians in the digital age, *IFLA journal*, 2(40), 102-109;

HEPLER, HORALEK 2023 – Hepler, R., Horalek, D. (2023), *Introduction to Library and Information Science*, <https://csi.pressbooks.pub/lis/>;

SHOMAN 1997 – Shoman, S. (1997), Libraries and Reading Habits Among Elementary School Children: The Concept of the Classroom Collection, *IASL Conference Proceedings*, Vancouver, 265-271;

WALCZAK-NIEWIADOMSKA 2014 – Walczak-Niewiadomska, A. (2014), *Libraries for children as a place for parents (based on European experience)*, Around the books, the library, and information: the present state – challenges – prospects. Studies and essays, Maria Curie-Skłodowska University Press, 121-131;

WALITER 2003 – Walter, V. (2003), Public Library Service to Children and Teens: A Research Agenda, *Library trends* (el. Journal), 4(51), 571-589.

CIRCULATION SERVICE IN THE KHINKO APER NATIONAL CHILDREN'S LIBRARY

HOVHANNISYAN KARINE
Khinko Apor National Children's Library

Keywords: Children's library, readers, service, library services, needs, education, information technologies, events.

The Khinko Apor National Children's Library serves as a vibrant cultural hub and an essential educational space, fostering learning and knowledge among children. Acting as a key link in the reader-publisher-writer chain, it inspires new ideas and creativity. The library's primary functions include a) reader services: ensuring effective and engaging interactions to meet the diverse needs of young readers, b) promotion of books and reading: organizing library programs and initiatives that highlight the importance of reading and attract children to explore books, c) encouragement of self-development: helping children connect with literature to enhance self-knowledge and personal growth. By fulfilling these roles, the library not only enriches children's lives but also nurtures a lifelong love for reading and learning.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ*

ՀՏԴ: 929:891.981Չարենց+891.981

DOI: 10.54503/2953-8092.2024.2(4)-89

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Բանասիրական գիտությունների թեկնածու

ORCID: [0000-0002-7989-0514](https://orcid.org/0000-0002-7989-0514)

Մշակույթի, գիտության, գրականության տարբեր ոլորտների ներկայացուցիչների անձնական գրադարանները հայ տպագիր ժառանգության անբաժանելի մասն են համարվում, նաև արտացոլում են տվյալ գործչի մտածելակերպն ու հայացքները: Այսքանով հանդերձ՝ դրանք հաճախ մնում են սրվերում:

Եղիշե Չարենցի անձնական գրադարանի ուսումնասիրությունը կատարվել է նույն գրադարանի մատենագիտությունը կազմելու աշխատանքներին զուգահեռ՝ 2018 թվականից սկսած: Գրադարանը բաղկացած է եղել 6000 միավոր գրականությունից, սակայն պահպանվել և մեզ է հասել 1452 միավոր գիրք և պարբերական: Դրանցից 2-ը՝ հնատիպ (1512-1800 թթ.), 20-ը՝ վաղ շրջանի տպագրություններ են (1801-1850 թթ.): Անձնական գրադարանում պահպանվող գրականության մեծ մասը տպագրվել է 1912-1937 թթ., ինչը պայմանավորված է այդ ժամանակահատվածում գրականություն ձեռք բերելու նրա հնարավորություններով և Պետիրաստում աշխատելու հանգամանքով: Աշխարհագրական առումով ընդգրկումը ևս մեծ է. այստեղ առկա են աշխարհի տարբեր վայրերում տպագրված գրքեր ու պարբերականներ: Անձնական գրադարանում գերակշռում են ռուսերեն, այնուհետև հայերեն և այլ լեզուներով հրատարակությունները:

* Ներկայացվել է 22.09.2024, գրախոսվել է 13.10.2024, ընդունվել է տպագրության 21.10.2024:

The article was submitted on 22.09.2024, reviewed on 13.10.2024 accepted for publication on 21.10.2024.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՈՒՆԳՈՒԹՅՈՒՆ

Հայաստանյան այլ հավաքածուներում Ե. Չարենցի անձնական գրադարանին պատկանող գրքեր կամ պարբերականներ գտնելու մեր փորձերն ապարդյուն էին, սակայն, վստահ ենք, որ շարունակական աշխատանքներն այս ուղղությամբ դրական արդյունք են ունենալու:

The personal libraries of representatives of various fields of culture, science, and literature are considered an undivideable part of the Armenian printed heritage, reflecting the way of thinking and views of the given figure at the same time. However, they often remain in the shadows.

The study of the personal library of Yeghishe Charents was carried out in parallel with the work of compiling the bibliography of the same library, starting from 2018. As a result of studying the personal library it was found that there were about 6,000 items of literature in the library, but 1,452 items were preserved - books and periodicals. Two of them were published in 1512-1800, and 20 in 1801-1850. Most of the literature was published in 1921-1937, due to the increase in his ability to acquire books during that period, as well as the fact that he worked in a state publishing house. The geographical map of book printing is large enough. covers a wide range of locations around the world. From a linguistic point of view, publications in Russian prevail, followed by Armenian ones, but there are also publications in foreign languages.

Our efforts to find books or periodicals belonging to the personal library of Charents in other Armenian collections were unsuccessful, but we are sure that the continuous work in this direction will have a positive result.

Բանալի բառեր՝ Եղիշե Չարենց, բանաստեղծ, անձնական գրադարան, գրական ժառանգություն, հայ և համաշխարհային գրականություն, տպագրության պատմություն, հրատարակչական գործունեություն, մատենագիտություն:

Ինչպես հղել՝ Գրիգորյան, Մ. (2024), Եղիշե Չարենցի անձնական գրադարանը, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(4), 89-102. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-89](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-89)

How to cite (APA style): Grigoryan, M. (2024), The personal library of Yeghishe Charents, *Herald of the Armenian Library Association*, 2(4), 89-102.
[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-89](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-89)

Ներածություն

Ե. Չարենցի կյանքը, գրական ժառանգությունն ու գործունեությունը տարբեր ժամանակներում տարաբնույթ, բազմաբովանդակ ուսումնասիրությունների թեմա է դարձել, սակայն բանաստեղծի անձնական գրադարանի ուսումնասիրությունը, ցավոք, չի արժանացել համապատասխան ուշադրության: Խնդրին առավել ամբողջական անդրադարձել է Ն. Հայրապետյանը (ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 1987, 63), առանձին անդրադարձներ կան Ռ. Ղազարյանի (ՂԱԶԱՐՅԱՆ 1977, 48-59), Ա. Ալեքսանդրյանի (ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ 1979, 96), Ս. Աղաբաբյանի (ԱՂԱԲԱԲՅԱՆ 1973, 439) ուսումնասիրություններում ու հուշագրություններում, ինչպես նաև Դ. Գասպարյանի կազմած «Չարենցի հետ» գրքում (ԳԱՍՊԱՐՅԱՆ 1997, 389-392): Մինչդեռ անձնական գրադարանը, մեր խորին համոզմամբ, բանաստեղծի արվեստի, մտքի ու խոսքի արտացոլանքն է, ուրեմն ունի ուսումնասիրության առաջնահերթություն:

Սույն հետազոտության շրջանակում ներկայացնելու ենք Ե. Չարենցի անձնական գրադարանի ժամանակային և տարածական ընդգրկումը, բովանդակային շերտերն ու մատենագիտական աշխատանքները: Առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝ ա) ե՞րբ է սկսվել Չարենցի անձնական գրադարանի ձևավորումը, բ) ժամանակագրական և տարածական ի՞նչ սահմաններ ունի, գ) ընդգծել թեմատիկ ենթաշերտերը:

Կարծում ենք՝ սույն ուսումնասիրությունը կնպաստի չարենցագիտության հետագա զարգացմանը և ունի աղբյուրագիտական արժեք:

Չարենցի անձնական գրադարանի ձևավորումն ու բովանդակությունը

Ե. Չարենցի անձնական գրադարանի ձևավորման հիմքերը դրվել են դեռևս Կարսի ռեալական դպրոցում սովորելու տարիներին, երբ ի հայտ է եկել գրքի հանդեպ բանաստեղծի «թուլությունը»: Կան վկայություններ, որ նա եղել է դպրոցի և Կարսի քաղաքային գրադարանի լավագույն ընթերցողներից մեկը, ընթերցել է այն ամենն, ինչը հրատարակվել է այդ շրջանում՝ առանց բովանդակային սահմանափակումների կամ այն, ինչը կարողացել են սպասարկել գրադարանները՝ (ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ 1979, 86, ԱՂԱԲԱԲՅԱՆ 1973, 27-28):

Բուռն ընթերցանության մոլուցքն ի վերջո բանաստեղծին տարել է դեպի սեփական գրադարանն ունենալու գաղափարը: Այսօր անձնական գրադարանի՝ մեզ հասած հատվածում առկա է շուրջ 30 անուն հայերեն գիրք, որոնք տպագրվել են 1910-ական թվականներին: Նրանցից մի քանիսի էջերին պահպանվել են թանաքով արված ինքնագրերը: Օրինակ՝ Եղիշեի, Բուզանդի և Խորենացու Պատմությունների տիտղոսաթերթերի վերևի հատվածում նշված է «Եղիշե Սողոմոնեան»՝ առանց թվականի հիշատակման (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԱՂԱՅԱՆ 2022, 28, 83, 113): Անձնական գրադարանում պահպանվել է նաև Վահան Տերյանի բանաստեղծությունների ժողովածուի 1912 թ. տպագրությունը, որի ձեռքբերման պատմությունը մեզ է հասել ժամանակակիցների հուշերի միջոցով (ՄԱԶՄԱՆՅԱՆ 1961, 60), սակայն պահպանված օրինակի տիտղոսաթերթին առկա ընծայագիրը փաստում է, որ սա, ցավոք, Ե. Չարենցի գնած օրինակը չէ. «Եղիշե Չարենց, տալիս եմ քեզ Վահանի գիրքը թողնելով, որ մուսատ և «Ազգը» տայ քեզ Վահանի գահը, որ թափուր թողեաց այնպես վաղաժամ, Կարէն Մոսկա, 9.1.22.» (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԱՂԱՅԱՆ 2022, 111):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Չարենցի անձնական գրադարանում առկա գրականության քանակի մասին պահպանվել են հակասական տվյալներ: Ժամանակակիցների վկայությունների հիման վրա Ներսես Հայրապետյանը գրել է. «...ենթադրվում է, որ Չարենցի գրադարանում եղել է մոտավորապես 6000 կտոր գրականություն, որից տուն-թանգարանում պահպանվում է մի մասը՝ ավելի քան 1400 հատոր» (ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 1987, 21): Բանաստեղծի ավագ դուստր Արփենիկ Չարենցը փաստել է նույն թվաքանակը՝ առանձնացնելով ժամանակաշրջանը՝ 1930-ական թվականներ¹, իսկ Ռաֆիկ Ղազարյանն ընդգծել է՝ շուրջ 1500 կտոր գիրք և ամսագիր (ՂԱԶԱՐՅԱՆ 1977, 50): Առավել ճշգրիտ տեղեկությունն է հայտնել Ե. Հովհաննիսյանը, ով կազմակերպել է Չարենցի անձնական գրադարանի տեղափոխումը ներկայիս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան: Նա փաստել է, որ տեղափոխել է 1600 միավոր գրականություն, որոնք դասավորել է պահարաններում և կնքել: Մի քանի օր բացակայելուց հետո, սակայն, երբ վերադարձել է թանգարան, պարզվել է, որ թանգարանի աշխատակիցները այդ գրադարանից վերցրել են 160 միավորը: Ինքը վերցրել է 2 միավոր (ԳԱՍՊԱՐՅԱՆ 1997, 391-392): Այսքանով հանդերձ, սակայն, նշել ավարտուն մի թիվ և հաստատել այն, ցավոք, հնարավոր չէ:

Անձնական գրադարանի՝ մեզ հասած հատվածի ուսումնասիրության շնորհիվ կարող ենք ընդգծել, որ այն ավելի շատ համալրվել է 1920-1937 թթ. ընթացքում, երբ բանաստեղծը հաճախակի էր լինում Մոսկվայում, ուր առկա էր գրախանութների ընդլայնված ցանց և տպագիր նյութի ընտրության լայն տեսականի, 1924-1925 թթ. արտերկիր կատարած ճանապարհորդության ընթացքում և, հատկա-

¹ Տվյալն ընդգծում ենք՝ հենվելով Ե. Չարենցի տուն-թանգարանի աշխատակիցների վկայությունների վրա:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

պես, 1928 թվականից հետո, երբ աշխատանքի է անցել Պետհրատում, ինչը հնարավորություն է ընձեռել ընդլայնել գրական կապերն ու հնարավորությունները²: Հուշագիրների մեծ մասը թվային տվյալներ չեն հաղորդում բանաստեղծի անձնական գրադարանի մասին, միայն վկայում են, որ նա ունեցել է հարուստ գրադարան (ՊՈՂՈՍՅԱՆ 1967, 27):

Ե. Չարենցի ձերբակալությունից հետո գրքերի մեծ մասն անհետացել է: Ե. Հովհաննիսյանը պնդել է, որ բանաստեղծի ձերբակալությունից հետո անձնական գրադարանը մասնատվելու վտանգի տակ էր, որ այդ գրքերը կապկպել էին՝ տարբեր մշակութային կառույցներ տեղափոխելու համար (ԳԱՍՊԱՐՅԱՆ 1997, 390): Դրան միանշանակ նպաստել են նաև քաղաքական հետապնդումները, ունեցվածքի առգրավումը, հատկապես «վտանգավոր» համարված գրականության գտումը: Ասվածի վկայությունն է այն, որ այսօր հայաստանյան տարբեր գրադարաններում պահպանվում են այդ ժամանակաշրջանի տպագրություններ, որոնց էջերում գրիչով ջնջված են Ե. Չարենցի և ժամանակի մի շարք առաջադեմ գործիչների անունները: Ուրեմն, կարող ենք պնդել, որ քաղաքական ռեժիմը գրքերի կորստի կամ անհետանալու հարցում վճռական է եղել:

Գրադարանից գրքերի պակասելը պայմանավորված էր նաև բանաստեղծի՝ տեղից-տեղ տեղափոխվելու հանգամանքով: Հայտնի է, որ Ե. Չարենցը բնակության տարբեր հասցեներ է ունեցել տարբեր քաղաքներում, նաև Երևանում: Տեղափոխությունների արդյունքում գրադարանը մեծ վնասներ է կրել, չնայած բանաստեղծը ջանացել է

² 2022 թ. տպագրված «Եղիշե Չարենցի անձնական գրադարանը» մատենագիտության շնորհիվ ներկայում հնարավոր է իրականացնել գրադարանի՝ մեզ հասած հատվածի ժամանակագրական վերլուծությունը: Փաստացի տվյալներ հաղորդում է նաև Ն. Հայրապետյանը (ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 1987, 17-22, 29-30):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

տեղափոխել առանց կորուստների: 1935 թ. նա հաստատվել է այն տանը, ուր այժմ գործում է տուն-թանգարանը, որտեղ և նրան ձերբակալել են: Այս տանից էլ տեղափոխվել է գրադարանը, որի մի հատվածն, ի վերջո, հանգրվանել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, որտեղից էլ հետագայում տեղափոխվել է տուն-թանգարան: Թանգարանի աշխատակիցները հետագայում ջանացել են ամբողջացնել, հավաքագրել գրքերը, ուսումնասիրել դրանք: Այսօր թանգարանում պահվող գրադարանի յուրաքանչյուր գրքի գիտական անձնագրում արտացոլված է այդ գրքի նկարագիրն ու պատմությունը, սակայն պարզել, թե որ գիրքը ինչպես և ինչ նպատակով է հայտնվել գրադարանում, հնարավոր չէ աղբյուրների բացակայության պատճառով: Վստահ ենք, սակայն, որ Չարենցի անձնական գրադարանում պատահական հայտնված գրքեր չեն եղել:

Նշենք նաև, որ պահպանվել է Ե. Չարենցի ձերբակալությունից հետո կազմված տան իրերի ցուցակը³, սակայն գրքերի ցուցակ այդ փաստաթղթերում չկա:

Ցավոք, անձնական գրադարանի քանակական պատկերն ստանալ առ այսօր չի ստացվում: Կարող ենք միայն փաստել, որ այսօր այդ գրադարանում կա 1452 միավոր գրականություն:

Ե. Չարենցի անձնական գրադարանն ունի ժամանակագրական լայն ընդգրկում: Մատենագիտական աշխատանքների և ուսումնասիրությունների շնորհիվ ստացվել է հետևյալ ժամանակագրական պատկերը՝ 1512-1800 թթ.՝ 2 միավոր, 1801-1850 թթ.՝ 20 միավոր,

³ Արխիվային այդ փաստաթղթերը հայտնաբերվել են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, որոնց պատճենները պահպանվում են Ե. Չարենցի տուն-թանգարանում: Հոդվածի շրջանակում ուսումնասիրվել են այդ պատճենները:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1851-1900 թթ.՝ 78 միավոր, 1901-1920 թթ.՝ 343 միավոր, 1921-1937 թթ.՝ 1009 միավոր:

Հնատիպ շրջանին առնչվող գրքերից մեկը Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» երկի հայերեն տպագրությունն է (Սանկտ Պետերբուրգ, Գրիգոր Խալրարյանի տպարան, 1785), մյուսը՝ ռուսերեն մի տպագրություն⁴:

Բովանդակային առումով գրքերը տարբեր են, առնչվում են մեզ հայտնի բոլոր բնագավառներին, արվեստի ճյուղերին, տարբեր կրոններին: Լինելով գրականության ու մշակույթի գիտակ՝ Չարենցին հետաքրքրել են գիտության գրեթե բոլոր ճյուղերն ու մասնագիտական բնագավառները:

Անձնական գրադարանում ներառված գրքերը մեծամասամբ հայերեն են և ռուսերեն, առկա են նաև 4 անգլերեն, 8 գերմաներեն, 1 իտալերեն, 3 վրացերեն, 1 ուկրաիներեն, 2 ֆրանսերեն տպագրություններ:

Չարենցի անձնական գրադարանի մատենագիտությունը

Մինչև 2022 թ. Ե. Չարենցի անձնական գրադարանն ամբողջական ուսումնասիրության չի ենթարկվել առաջինը մատենագիտության բացակայության պատճառով: Դեռևս 1987 թ. Ն. Հայրապետյանը գրել է. «Մինչև օրս չի հրատարակվել բանաստեղծի գրադարանի գրացուցակը, որը հնարավորություն կտար գրքերի համալրման աշխատանքներում ընդգրկել գրական լայն հասարակության ներկայացուցիչներին» (ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 1987, 24): Ասվածին հավելենք, որ

⁴ Ե. Չարենցի տուն-թանգարանը՝ որպես նման արժեքավոր գրքերի պահպանության վայր, չի արձանագրվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում, մինչդեռ դա խիստ անհրաժեշտ էր հայ տպագիր ժառանգության պահպանության տեսանկյունից: Այս առումով անձնական գրադարանի մատենագիտությունը մեծ նվեր է հայ գրքի ուսումնասիրողների համար:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

դեռևս 1977 թ. կազմվել էր մատենագիտական մի ցանկ, որը, սակայն, չէր արտացոլում գրադարանի ողջ հավաքածուի բովանդակությունը (ՂԱԶԱՐՅԱՆ 1977, 50-59):

Հայ իրականության մեջ առաջինը Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանն է ուսումնասիրվել պատշաճորեն: Ապացույցը՝ 1987-2000 թթ. ընթացքում տպագրված մատենագիտության չորս հատորներն են: Նրանից հետո, եթե անգամ ուսումնասիրվել են գրողների կամ մշակութային գործիչների անձնական գրադարանները, ապա դրանք չեն հանրայնացվել:

2022 թ.՝ Ե. Չարենցի ծննդյան հոբելյանական տարում, լույս տեսավ բանաստեղծի անձնական գրադարանի մատենագիտությունը, որի կազմման աշխատանքներին զուգահեռ իրականացվեց նաև առկա նյութերի ուսումնասիրություն՝ հետապնդելով հետևյալ նպատակները՝

1. Ներկայացնել բանաստեղծի գաղափարական, գեղագիտական հայացքների, նրա ծրագրերի և հետաքրքրությունների շրջանակը:

2. Հանրայնացնել գրադարանի հարուստ բովանդակությունը:

3. Ուրվագծել Չարենցի ապրած ժամանակաշրջանը:

4. Առավել ամբողջական դարձնել հայ տպագրության պատմությունը:

Մատենագիտություն կազմելու գաղափարը ծնվել էր դեռևս 2018 թ., երբ Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Անահիտ Ասատրյանը Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանի հետ որոշեցին վերսկսել Չարենցի կենսամատենագիտության կազմման աշխատանքները, իսկ անձնական գրադարանի մատենագիտությունը պետք է դառնար այդ մեծ գաղափարի մի մասը: Աշխատանքների մեկնարկին զուգահեռ պարզ դարձավ, որ անձնական

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

գրադարանը բավական ծավալուն է և չի կարող ընդգրկվել կենսամատենագիտության մեջ:

Մատենագիտությունը կազմելու համար ուսումնասիրվեց միայն բանաստեղծի տուն-թանգարանում առկա հավաքածուն: Հավանաբար անձնական գրադարանի շատ գրքեր և պարբերականներ այսօր պահպանվում են նաև այլ կառույցներում կամ մասնավոր հավաքածուներում, սակայն նրանց մասին տեղեկատվության բացակայության պատճառով այդ գրականությունը չներառվեց սույն աշխատանքի մեջ:

Մատենագիտությունը կազմվեց պահանջվող սկզբունքներին և չափորոշիչներին համապատասխան՝ ճկուն որոնողական համակարգով: Գրքի կառուցվածքում առանձնացվեցին պայմանական թեմաներ, որոնց ներքո նյութերը դասակարգվեցին այբբենական դասավորությամբ: Պայմանական թեմաների ներքո տարանջատվեցին անձնական գրադարանում առկա գրքերն ու պարբերականները՝ ըստ լեզուների:

Անձնական գրադարանում առկա 1452 միավոր գրականությունն, ըստ մատենագիտական նկարագրությունների համարակալության, կազմեց 1135 միավոր: Թվային այս տարբերությունն ունի իր բացատրությունը.

ա. Մատենագիտության մեջ հատորային հրատարակությունները ներկայացվեցին մեկ նկարագրության ներքո՝ ամբողջականությունը չխախտելու համար:

բ. Անձնական գրադարանում առկա են անուններ, որոնցից պահպանվում են մի քանի օրինակներ: Քանի որ մատենագիտական նկարագրությունները կատարվեցին ըստ անունների, նույնանուն հրատարակությունների բազմօրինակներն ամբողջացվեցին մեկ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

նկարագրության ներքո, իսկ ծանոթագրությունների մեջ ներկայացվեց յուրաքանչյուր միավորի առանձնահատկությունը:

գ. Անձնական գրադարանում առկա պարբերականների յուրաքանչյուր համարը համարվում է մեկ առանձին միավոր, մինչդեռ մատենագիտության մեջ տվյալ պարբերականի բոլոր համարներն ամփոփվեցին մեկ նկարագրության ներքո:

Յուրաքանչյուր գրքի մատենագիտական նկարագրությանը զուգահեռ տրվեց տվյալ գրքի բովանդակությունը՝ հնարավորություն ընձեռելով օգտվողին ուսումնասիրել այն և գտնել իրեն անհրաժեշտ նյութը: Պարբերականների պարագայում համարների բովանդակությունը չներկայացվեց:

Գրքում մատենագիտական նկարագրություններն ուղեկցվում են համապատասխան ծանոթագրություններով: Անձնական գրադարանում առկա տպագիր նյութերի գերակշիռ մասն ունի արժեքավոր ինքնագրեր, ընծայագրեր, տարբեր մակագրություններ, որոնք պատկանում են ինչպես Ե. Չարենցին, այնպես էլ տարբեր ժամանակների հայտնի հայ և օտարազգի գրական, մշակութային գործիչների: Ծանոթագրությունների մեջ բոլոր այդ արժեքավոր մակագրությունները ներկայացված են ամբողջությամբ: Նշենք նաև, որ առկա են ձեռագիր նշումներ, որոնք ժամանակի կամ այլ պատճառներով դարձել են անընթեռնելի: Ծանոթագրությունների մեջ այս փաստը ևս արտացոլված է:

Մատենագիտության վերջում ներառվել են անձնանունների և վերնագրերի ցանկերը: Անձնանունների ցանկում արտացոլված են մատենագիտության մեջ ներառված բոլոր անձնանունները: Եթե նույն անձնանունը գրվել է երկու ուղղագրությամբ՝ դասական և արդի, ցանկի մեջ նախապատվությունը տրվել է արդի ուղղագրությանը, սակայն արտացոլվել են գրության բոլոր ձևերը: Կիրառվել է մա-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

տենագիտության մեջ ընդունված հղման սկզբունքը՝ անձնանունների ցանկն ավելի ամբողջական դարձնելու նպատակով: Եթե նյութը որևէ անհատի մասին է, ցանկում հերթական համարը նշվել է փակագծով, իսկ եթե հեղինակ է, խմբագիր, կազմող, թարգմանիչ, նկարիչ՝ առանց փակագծի: Յուրաքանչյուր անձնանվան կողքին նշված է մատենագիտական գրառման համապատասխան համարը: Անձնանունները դասավորված են այբբենական կարգով: Հասկանալի պատճառով անձնանունների ցանկում չեն ընդգրկվել «Եղիշե Չարենց» և «Եղիշե Սողոմոնյան» անունները:

Վերնագրերի ցանկում արտացոլված են մատենագիտության մեջ ներառված գրքերի վերնագրերը այն ուղղագրությամբ, ինչպես գրված են գրքերի վրա: Ենթավերնագրերը և բովանդակության մեջ արտացոլված ստեղծագործությունների վերնագրերը սույն ցանկի մեջ չեն ներառվել: Յուրաքանչյուր վերնագրի կողքին նշված է մատենագիտական գրառման համապատասխան համարը:

Ամփոփում

Ե. Չարենցի՝ ընդգրկուն ծավալ ունեցող անձնական գրադարանի մատենագիտության տպագրությունն արդիական էր և անհրաժեշտ: Այն հրաշալի նվեր էր բանաստեղծին՝ ծննդյան 125-ամյակի առթիվ: Մատենագիտության շնորհիվ հնարավոր դարձավ ամբողջացնել բանաստեղծի անձնական գրադարանի ուսումնասիրությունը, մի բան, որն առ այսօր արվել էր մասնակի: Անձնական գրադարանում առկա է 1452 միավոր գրականություն՝ գրքեր և պարբերական մամուլ, հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով: Մատենագիտության մեջ այս թիվը պակասել է, քանի որ գիրքը կազմելիս մի շարք նյութեր արտացոլվել են մեկ նկարագրության ներքո: Աշխարհագրական առումով անձնական գրադարանն ընդարձակ է, ընդգրկում է աշխարհի տարբեր վայրերում տպագրված նյութեր: Գրա-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

դարանում պահվող ամենավաղ տպագրությունը Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» գրքի պետերբուրգյան հրատարակությունն է: Գերակշռում են խորհրդային շրջանի տպագրությունները, հատկապես այն տարիներինը, երբ Չարենցը պաշտոնավարել է Պետհրատում:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ 1979 – Ալեքսանդրյան, Ա. (1979), *Պապանի Չարենցի հետ (հուշեր)*, Երևան, Սովետական գրող, 96 [Aleqsandryan, A. (1979), *Patani Charents' l het (husher)*, Yerevan, Sovetakan grogh, 96];

ԱՂԱԲԱԲՅԱՆ 1973 – Աղաբաբյան, Ա. (1973), *Եղիշե Չարենց, հպ. 1*, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 439 [Aghababyan, A. (1976), *Eghishe Charents', v. 1*, Yerevan, HH NAS RA, 439];

ԳԱՍՊԱՐՅԱՆ 1997 – Գասպարյան, Դ. (կազմ., խմբ.) (1997), *Չարենցի հետ: Հուշեր*, Երևան, Նաիրի, 424 [Gasparyan, D. (comp., edt.) (1997), *Charents' l het: Husher*, Yerevan, Nairi, 424];

ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԱՂԱՅԱՆ 2022 – Գրիգորյան, Մ., Աղայան, Օ. (կազմ.) (2022), *Եղիշե Չարենցի անձնական գրադարանը: Մատենագիտություն*, Երևան, Եղիշե Չարենցի տուն-թանգարան, 603 [Grigoryan, M., Aghayan, O. (comp.) (2022), *Eghishe Charents' l andznakan gradarany: Matenagitutyun*, Yerevan, Eghishe Charents' l tun-tangaran, 603];

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 1987 – Հայրապետյան, Ն. (1987), *Չարենցը և գիրքը*, Երևան, Սովետական գրող, 63 [Hayrapetyan, N. (1987), *Charents'y ev girqy*, Yerevan, Sovetakan grogh, 63];

ՂԱԶԱՐՅԱՆ 1977 – Ղազարյան, Ռ., Պապյան, Վ. (կազմ.) (1977), *Եղիշե Չարենց 80: Տարեգրություն, մատենագիտություն, ասույթներ*, Երևան, Սովետական գրող, 80 [Ghazaryan, R., Papyan, V. (1977), *Eghishe Charents' 80: Taregrityun, matenagitutyun, asujtner*, Yerevan, Sovetakan grogh, 80];

ՄԱԶՄԱՆՅԱՆ 1961 – Մազմանյան Մ., Չարենցի հետ, *տե՛ս* Հովհաննիսյան, Ե. (կազմ.) (1961), *Հիշողություններ Չարենցի մասին*, Երևան, Հայպետհրատ, 391 [Mazmanyanyan M. Charents' l het, *tes* Hovhannisyanyan, E. (comp.) (1961), *Hishoghutyunner Charents' l masin*, Yerevan, Haypethrat, 391];

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՊՈՂՈՍՅԱՆ 1967 – Պողոսյան, Հ. (1967), Հիշողություններ Չարենցի մասին, *Սովետական գրականություն*, Երևան, 9, 19-32 [Poghosyan, H. (1967), Hishoghutyunner Charents' l masin. *Sovetakan grakanutyun*, Yerevan, 9, 19-32].

THE PERSONAL LIBRARY OF YEGISHHE CHARENTS

MAYA GRIGORYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Ph.D. in Philology

Keywords: Yeghishe Charents, poet, personal library, literary heritage, Armenian and world literature, history of printing, publishing activity, compositional art, bibliography.

The bibliography of Yeghishe Charents' personal library is indeed a significant achievement, shedding light on the breadth of his intellectual influences and providing scholars with a comprehensive tool for further research of his life and literary works. It's wonderful to see such a rich cultural legacy being preserved and celebrated. It was a wonderful gift to the poet on the occasion of his 125th anniversary. Thanks to the bibliography, it became possible to complete the study of the poet's personal library, something that had been done partially until now. The personal library contains 1,452 pieces of literature: books and periodicals, in Armenian, Russian and foreign languages. Geographically, the personal library is extensive, including materials printed in different places around the world. The earliest publication kept in the library is the St. Petersburg edition of Nerses Shnorhali's book "Jesus the Son." Publications from the Soviet period predominate, especially during the years when Charents held office in the State Publishing House.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ*

ՀՏԴ: 025.171

DOI: 10.54503/2953-8092.2024.2(4)-103

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մալոնադարան. Մեսրոպ Մաշտոցի անվան
հին ձեռագրերի ինստիտուտ

ORCID: [0009-0006-7502-376X](https://orcid.org/0009-0006-7502-376X)

Սույն ուսումնասիրությունը վերաբերվում է Վարդաձոր գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ) հանգրվանած փասնչորս անուն փպագիր գրքի մասնավոր հավաքածուին: Գրքերի մի մասը բերվել է Արևմտյան Հայաստանի Մշո փորածաշրջանից փեղահանված և Թազագյուղում (գյուղ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ) 1800-ական թթ. հաստատված Գեղամ Մնացականյանի ընտանիքի կողմից, ում և նախնիները ժառանգաբար փոխանցել են գրքերը: Սակայն, Գեղամ քահանայի ավագ դուստրը՝ Հռիփսիմեն, հավաքածուն 1940-ական թթ. փեղափոխում է ամուսնու գյուղ՝ Վարդաձոր, կորստից և վնասումից փրկելու համար, քանի որ հայրը աքսորվում է: Ավելի ուշ՝ Հռիփսիմեն հավաքածուն ժառանգել է փոքր դստերը՝ Վարդանուշին, և փեսային՝ Սանասար Մանուկյանին: Վերջինս փոխանցել է կրտսեր որդուն՝ Ազար Մանուկյանին: Մանուկյանների ջանքերով՝ 2010 թ. փան հարակից մասում կառուցվել է փոքրադիր քարակերպ մատուց-սրբատեղի: Աղոթատունը կառուցվել է Վարդանուշ Մանուկյանի երազի հիմամբ. սուրբը մատնանշել է մատուց կառուցման վայրը, որտեղ նախկինում խնձորենի է եղել:

Ավելի քան փասնչորս բազմաբնույթ փպագիր գրքերի (մեկը՝ հնափայ) հավաքածուն ներառում է՝ Ժամագիրք Արենի (1785 թ.), Պատմություն

* Հոդվածը ներկայացվել է 17.07.2024, գրախոսվել է 04.08.2024, ընդունվել է փպագրության 29.10.2024:

The article was submitted on 17.07.2024, reviewed on 04.08.2024, accepted for publication on 29.10.2024.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Աստուածաշունչ գրոց Հին և Նոր կրակարանաց (1805 թ.), Նոր Կրակարան սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (1814 թ.), Յովսէփ Սաղմկեցի. Քննութիւն խնդրոց (1846 թ.), Ժամագիրք (1854 թ.), Շարական (1861 թ.), Ժամագիրք (1862 թ.), Խորհրդապետեր (1880 թ.), Քարոզներ (խորագիրը՝ պայմանական, 1900-ական թթ.), Ժամագիրք (1903 թ.), Պարմութիւն Նահանգին Սիսական (1910 թ.), Օրացոյց (1960 թ.):

This study deals with the private collection of fourteen printed books located in the village of Vardadzor (Gegharkunik region of the Republic of Armenia). Some of the books included in the collection were brought to Tazaghugh (village in Gegharkunik, RA) from the Mush region of Western Armenia in the 1800s. confirmed to the family of Gegham Mnatsakanyan, whose ancestors inherited the books. However, Hripsime, the eldest daughter of priest Gegham, bought the collection in the 1940s. moves to her husband's village, Vardadzor, to save her from loss and damage, as her father is exiled. Later, Hripsime inherited the collection to his younger daughter, Vardanush, and son-in-law, Sanasar Manukyan. The latter passed it on to his younger son, Azat Manukyan. With the efforts of the Manukyans, in 2010 a small stone chapel-sanctuary was built in the adjacent part of the house. The prayer house was built based on Vardanush Manukyan's dream. the saint pointed out the place where the chapel was built, where there used to be an apple tree.

The collection of more than fourteen diverse printed books (one rare book) includes: Book of Hours of Athens, 1785, History of the Holy Bible, Old and New Testaments, 1805, New Testament of the Holy Gospel of Our Lord Jesus Christ, 1814, by Joseph Salmketsi. Exam petition: 1846, Book of Hours: 1854, Hymn: 1861, Book of Hours: 1862, Book of Counsel: 1880, Sermons (script: conventional), 1900s. (probable), Book of Hours: 1903, History of the State of Sisakan: 1910, Calendar, 1960.

Քանալի բառեր՝ Գեղարքունիքի մարզ (ՀՀ), Վարդաձոր գյուղ, Մշո գավառ, Արևմտյան Հայաստան, Թագազյուղ, Մանուկյանների ընտանիք, սպագիր գրքեր, մասնավոր հավաքածու:

Ինչպես հղել՝ Գրիգորյան, Ս. (2024), Արժեքավոր տպագիր գրքերի մասնավոր հավաքածուն, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(4), 103-124. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-103](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-103)

How to cite (APA style): Grigoryan, S. (2024), The private collection of valuable printed books, *Herald of the Armenian Library Association*, 2(4), 103-124. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.2\(4\)-103](https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-103)

Ներածություն

Հայկական գրատպությունը սկզբնավորվել է Հայաստանի սահմաններից դուրս՝ Վենետիկում, 1512 թվականին, ապա տարածվել է աշխարհի բազմաթիվ վայրերում՝ Կոստանդնուպոլիս (1567 թ.), Հոռն (1579 թ.), Նոր Ջուղա (1638 թ.), Ամստերդամ (1660 թ.), Ս. Էջմիածին (1771 թ.), Սանկտ Պետերբուրգ (1781 թ.), Աստրախան (1796 թ.) (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 7), Թիֆլիս (1823 թ.) (ԼԵՎՈՆՅԱՆ 1946, 224), Արցախ՝ Շուշի (1828 թ.), Երուսաղեմ (1833 թ.) (ՄՈՒՐԱԴՅԱՆ 2011, 3), Երևան՝ 1876 թ. (ԼԵՎՈՆՅԱՆ 1946, 234) և այլուր: Այսօր հայերեն տպագիր ժառանգության պատկանելի հատվածը պահպանվում է գրադարաններում, մշակութային և հոգևոր կենտրոններում՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Մինչդեռ մի շարք արժեքավոր տպագրություններ հանգրվանել են մասնավոր հավաքածուներում և առ այսօր ամբողջությամբ ուսումնասիրված չեն: Սույն հոդվածում ներկայացնում ենք անհատի պատկանող մասնավոր տպագրական մի հավաքածու, որը ներառում է տասնչորս անուն տպագիր գիրք:

Տպագիր գրքերի անցած ուղին և վերջնական հանգրվանը

Արժեքավոր տպագիր գրքերի հավաքածուն պատկանում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղի (ՀԱԿՈՐՅԱՆ, ՄԵԼԻՔԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1998, 775) բնակիչ Ազատ Մանուկյանի ընտանիքին: Մինչ այստեղ հանգրվանելը, այն բավական երկար ճա-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Նապարհ է անցել¹: Հավաքածուն Վարդաձոր գյուղ է տեղափոխվել 1940-ական թվականներին Մարտունու շրջանի (Գեղարքունիքի մարզ) մեկ այլ գյուղից՝ Թազագյուղից: Տպագիր գրքերի մի մասը Թազագյուղ է բերվել Արևմտյան Հայաստանի Մշո գավառից 1800-ական թվականների տեղահանության ժամանակ: Այն պատկանել է Գեղամ Մնացականյանի ընտանիքին, ում և նախնիները ժառանգաբար փոխանցել են գրքերը: Տեր Գեղամ քահանայի ավագ դուստրը՝ Հռիփսիմեն, 1922-1923 թթ. ամուսնացել է վարդաձորաբնակ Քյարամ Խաչատրյանի հետ: Քանի որ հայրն այդ շրջանում աքսորված էր, իսկ հավաքածուն կարող էր կորստյան մատնվել, Հռիփսիմեն այն տեղափոխել է Վարդաձոր գյուղ՝ հետագայում որպես ժառանգություն թողնելով փոքր դստերը՝ Վարդանուշին և փեսային՝ Սանասար Մանուկյանին: Ս. Մանուկյանը ժառանգաբար փոխանցել է կրտսեր որդուն՝ Ազատ Մանուկյանին: Մանուկյանների ջանքերով (մասնավորապես՝ Ազատ Մանուկյանի) 2010 թ. տան հարակից մասում կառուցվել է փոքրադիր քարակերտ մատուռ-սրբատեղի: Աղոթատան կառուցումը միայն ցանկության դրսևորում չի եղել: Ըստ կրտսեր հարսի՝ Մարինե Մանուկյանի (Ազատ Մանուկյանի տիկնոջ), Վարդանուշ Մանուկյանի երագի հիմամբ է այն կառուցվել. սուրբը մատնանշել է մատուռի կառուցման վայրը, որտեղ նախկինում խնձորենի է եղել, ինչից հետո, ընտանիքի անդամները հետամուտ են եղել սրբի հորդորներին և կառուցել են աղոթատեղին: Այսօր սուրբ գրքերի պահպանումը և սերունդներին փոխանցելու գործը ստանձնել են

¹ Ազատ Մանուկյանի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Դարափի Վերին գյուղից:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ամուսիններ Ազատ և Մարինե Մանուկյանները²:

Հավաքածուն ընդգրկում է տասնչորս միավոր տպագիր գիրք, որից մեկը հնատիպ³:

Այժմ ներկայացնենք գրքերը տպագրության ժամանակագրական կարգով.

1. Ժամագիրք Ասրենի (հնատիպ): Շուրջ 426 զարդափակ էջից բաղկացած ժամագիրք Ատենին (ՃԻԶՄԷՃԵԱՆ 1957, 423; ՏԷՐ-ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, ԳԱՆԳՐՈՒՆԻ, ՏՕՆԻԿԵԱՆ 1968, 194; ՕՐՄԱՆԵԱՆ 1979, 124-125) տպագրվել է Ս. Էջմիածնի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» անունը կրող տպարանում, 1785 թ. (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 66-68): Կազմը՝ 26x19,5 սմ, շարվածքը՝ 23x16,5 սմ, գրությունը՝ երկայուն, գիրը՝ բոլորգիր, որոշ հատվածներ՝ նոտրգիր, օգտագործված են նաև գլխագրեր, նյութը՝ թուղթ⁴: Տողերի քանակը միջինում՝ 41-45: Կազմը՝ փիրուզագույն թավշյա կտոր, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ կապույտ կտոր, լուսանցակողերը՝ կարմիր թանաքով: Գիրքն ունի վնասված հատվածներ. տպագրի անվանաթերթը և որոշ թերթեր՝ 1-64, 105-112, 367-398, 401-426 բացակայում են: Թերթ 67, 147-148-ի ստորին եզրը՝ երկայնակի պատռված-հանված, 104-րդ թերթի ստորին եզրը՝ պատռված-ընկած: Թերթերին կան զանազան կեղտաբծեր, յուղի,

² Նշված տպագիր նյութերը Վարդաձոր գյուղում հայտնաբերված միակ օրինակները չեն: Կան այլ անուններ ևս, սակայն սույն հավաքածուն թվաքանակով ամենամեծն է գյուղում: Երախտագիտությունս եմ հայտնում Մանուկյան ընտանիքին, մասնավորապես՝ Ազատ և Մարինե Մանուկյաններին՝ հավաքածուի ուսումնասիրությունը ինձ վստահելու համար: Առանձնահատուկ շնորհակալություն արաբագետ, թարգմանիչ, մատենագետ Միհրան Մինասյանին՝ աջնատանքի վերաբերյալ առաջարկների համար:

³ Ցանկը տե՛ս հոդվածի սկզբում:

⁴ Հողվածում ներառված բոլոր տպագիր գրքերի նյութը թուղթն է, գիրը՝ բոլորգիրը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

խոնավության, մոմի, այրվածքի հետքեր, լուսանցակողերի կարմիրը մասամբ սևացած է: Որոշ թերթեր գործածության հետևանքով, եզրերում և ստորին անկյունում մաշված-պատռված են, որոշները հիմքում և եզրերում նորոգված են սպիտակ թղթով: Չնայած վերը թվարկված փոփոխությունների՝ հնատիպի վիճակը գնահատվում է բավարար:

Պարունակում է ամբողջական ժամագիրքը, Դավթի Սաղմոսները և Տոնացույցի երկու մասերը:

Տիտղոսաթերթ Ա.՝ *[ԳԻՐՔ / ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՅ / Եկեղեցույս Հայաստանեայց / և Կարգաւորութեան Սաղմոսացն / Դավթի Մարգարէին: Արարեալ սրբոց Թարգմանչաց / և Հայրապետացն մերոց ի փառս / Ամենասրբոյ Երրորդությանն Հօր / եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, / Որ է օրհնեալ յաւիտեան. Ամէն]*⁵:

Ժամագիրքը տպագրական զարդամոտիվներով է: Ա. տիտղոսաթերթն ամբողջությամբ խորանի մեջ է, Բ. տիտղոսաթերթը զարդափակ է: Քառածալ, մամուլանիշները՝ հայատառ: Տպագիրն ունի գլխազարդեր, վերջնազարդեր, կիսախորաններ, լուսանցանիշեր, լուսանցազարդեր և զարդագրեր՝ մարդագիր, թռչնագիր, թռչուն-ծուկ տասը փորագիր պատկեր: Այսօր տպագրից օրինակներ կան մի շարք կենտրոններում՝ Հայաստանի ազգային գրադարանում, Հայաստանի պատմության թանգարանում, Երևանի պետական համալսարանի գրադարանում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և այլուր (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 571-573):

2. Պարմութին Աստուածաշունչ գրոց Հին և Նոր կրակարանաց: Տպագրվել է Հովհաննես Զոհրապյանի (ՍՏԵՓԱՆՅԱՆ

⁵ Մնացյալ՝ Բ., Գ., Դ. տիտղոսաթերթերի նկարագրությունները տե՛ս ԳՐԻ-ԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 64-66; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 571: Այն տպագրերը, որոնք չունեն անվանաթերթ, վերականգնված են Հայաստանի ազգային գրադարանում պահվող օրինակներից: Տե՛ս գրադարանի կայքէջ՝ <https://www.nla.am/>:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1973, 332; ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ 2022, 67-90) աշխատասիրությամբ, Վենետիկում, Ս. Ղազարի տպարանում, 1805 թ.: Սույն օրինակը բաղկացած է 527 էջից, կազմը՝ 18x10 սմ, շարվածքը՝ 15,2x7,9 սմ, գրությունը՝ միասյուն, գիրը՝ բոլորգիր, ունի նաև հիշագրեր, տողերի քանակը միջինում՝ 27-34: Կազմը մուգ կապույտ թավշյա կտոր է, միջուկը՝ սովորաբար, աստառի Ա. փեղկը՝ շագանակագույն ծաղկած թուղթ: Տիտղոսաթերթը, Բ. փեղկի աստառը պոկված-ընկած են: Ունի բացակա էջեր սկզբից՝ 1-22, 31-3: Ա. փեղկի վերին հիմքը՝ պոկված: Լուսանցակողերը սևացած են: Էջեր՝ 23-30-ը հետագա նորոգման արդյունքում փակցված են էջ 524-ից հետո: Չնայած եղած որոշակի փոփոխություններին՝ տպագրի վիճակ կարելի է գնահատել բավարար:

Տիտղոսաթերթ՝ *[ՊԱՏՄՈՒԹԻՒՆ / ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՅ / ՀԻՆ և ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ: Համառօտեալ դիրիմաց ոճով ի լեզու աշխարհաբառ՝ յուսումն պարզամտաց և համբակաց: / Ի Հ. Յովհաննէս Վարդապետէ Զօհրապեան Կոստանդնուպօլսեցոյ: / Երկրորդ տպագրութիւն՝ նորոգ ուղղագրութեամբ և յաւելուածովք ինչ նորին հեղինակի յարմարեալ: / Հրամանաւ Տեառն Տեառն Ստրեփաննոսի վարդապետի Ազոնց, Արք/եպիսկոպոսի և Արքայի միաբանութեան մեծին Մխիթարայ Արքաօր: / Յամին 1805. Եւ ի թուականութեանս / Հայոց ՌՄԾԴ. (1805) / Ի Վենէտիկ, / Ի Վանս սրբոյն Ղազարու /]:*

Տիտղոսաթերթը՝ առնված բուսական եզրագոտու մեջ: Գիրքը զարդամոտիվներով է: Ունի երկու փորագիր պատկեր, բուսական գլխազարդեր և վերջնազարդեր, զարդագրեր՝ հանգուցագրեր: Օրինակներ ունեն Հայաստանի ազգային գրադարանը, Զմմառի վանքը, Մատենադարանը (ԴԱՎԹՅԱՆ 1967, 21):

3. Նոր Կրակարան սրբոյ Աւերարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Տպագրվել է 1814 թ. Ս. Պետերբուրգում, Հովսեփ Հովհաննիսյանի տպարանում (ԲԱԲԱՅԱՆ 1963, 96-97): Էջերի քանակը՝ 544, 2, կազմը՝ 20x12,5 սմ, շարվածքը՝ 16,3x9,5 սմ, գրությունը՝ միասյուն, գիրը՝ բոլորգիր, օգտագործված են գլխազերեր: Տողերի քանակը՝ միջինում 25-39: Էջ 438՝ սև մատիտով նշում՝ «Չալիպեկ, Իրան Հաջաղով, Կարս Կարապետ»: Կազմը՝ մուգ շագանակագույն կաշի: Կազմից պահպանված է միայն մեջքի հատվածը, որը հիմքից գրեթե անջատված է, ինչի հետևանքով կարերը թուլացած և իրարից առանձնացված են: Սկզբից և վերջից թերի է: Աստառը, միջուկը՝ բացակա, ունի պակաս էջեր՝ 1-108, 529-544, էջ 109-110՝ հիմքից պոկված: Թերթերին նշմարվում են խոնավության հետքեր, մասամբ՝ կեղտաբծեր: Տպագիր գրքի ընդհանուր վիճակը՝ վատ, ենթակա է նորոգման:

Տիտղոսաթերթ՝ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ / ՄՐԲՈՅ / ԱԻԵՏԱՐԱՆԻ / ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ / ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ / Ի Հայրապետություն [թե] [ան] Ս[ր] [թ] [ոյ] Աթոռոյն Միաձնախօյի Տեառն / ԵՓՐԵՄԱՅ Սրբազնաստուրբ Կաթողիկոսի / ամենայն Հայոց: / Եւ յԱռաջնորդութեան Հայոցն Ռուսաստանու Տեառն / Յօհաննու Առաքելաշաւիղ Արք Եպիսկոպոսի: / Տպագրեալ ջանիւք և արդեամբք ի միաբանութեն]է / Ժողովոյն Ա[ստուրա]ծաշնչի, որ ի Սանկրպետերբուրգ: / Ամենօգոստապիտո, Կայսերական, Բարձրագոյն / Հրամանաւ հաստատեալ Տպարանի, որ ի / Գահոյանիստն / ՍԱՆԿՏՊԵՏՐՐՈՒՐԳ. / Յովսեփայ Ս. Յօհաննիսեանի Յաժդերխանցոյ: / Յամի Տեառն 1814, / Իսկ ըստ Հայոց ՌՄ ԿԴ: /

Գրքից օրինակներ են պահպանվում Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և այլուր (ԴԱՎԹՅԱՆ 1967, 58):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

4. Քննություն խնդրոց: Տպագրի հեղինակն է Հովսեփ Սաղմկեցին: 231 (20 չի. էջ) էջ կազմող գիրքը տպագրվել է 1846 թ. Կ. Պոլսում՝ Օրթոգրություն, տպագրիչ Պողոս Արապյանի տպարանում (ՍՏԵՓԱՆՅԱՆ 1973, 141; ԿՈՐԿՈՏՅԱՆ 1964, 80-87): Կազմը՝ 22,7x14,5 սմ, շարվածքը՝ 18,5x11,5 սմ, գրությունը՝ միասյուն, տողերի քանակը՝ 36-37 (նակ՝ 22, 28, 30, 31): Կազմը՝ շագանակագույն կաշի, մեջքը՝ կարմիր հենքով ծաղկազարդ մետաքս: Միջուկը ստվարաթղթից է, աստառը՝ թղթից: Տպագիրը գործածությունից մաշված է: Միջուկը՝ շերտազատված և կազմից առանձնացած: Ա. փեղկի աստառը, Բ. փեղկի վերին հատվածը՝ բացակա: Լուսանցակողերը՝ մասամբ սևացած: Թերթեզերքը՝ աննշան պատռվածքներով: Թերթերին նկատելի են կեղտաբծեր, խոնավության հետքեր: Բնագիրը սկզբից և վերջից պակասավոր է՝ թ. 1-18, 211-231 և այլն: Ընդհանուր վիճակը՝ բավարար:

Տիտղոսաթերթ՝ *ՔՆՆՈՒԹԻՆ ԽՆԴՐՈ / ՅՕՐԻՆԵԱԼ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՏԻՐԱՅՈՒ ՅՈՎԱԷՓ ԲԱՐԵՋԱՆ / ՎԱՐԺԱՊԵՏԻ ՍԱՂՄԿՈՅ ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՏԷՐ ԳԷՈՐԳ ՔԱՀԱ-ՂԱՅԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՐԾՆԻ / Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ Տ[ԷՐ] Տ[ԷՐ] ՆԵՐՍԷՍԻ ՍՐԲԱՋՆԱ/ԿԱՏԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ / ՀՐԱՄԱՆԱԻ ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՑՊԼՍԻ Տ[ԷՐ] ՄԱՏ/ԹԷՆՍԻ ՍՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ / Արդեամբք գերամեծար Փիշմիշեան քեռորդի բարեսէր մահտեսի Յովհաննէս աղայի Ան/տօնեան, որ յԱկնայ գեղջէն Ապուլչեխու: / Ի ՏԻՊ ԱՐՁԱՆԱՅԵԱԼ 1846 ՅՕՐԹԱԳԻՒՂ / Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ ԱՊՈՒՉԵԽՅԻՈՅ]:*

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Նշված տպագրից օրինակներ առկա են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում (ԴԱՎԹՅԱՆ 1967, 339):

5. Ժամագիրք: Գրքի տպագրության վայրն է Շուշի քաղաքը (Արցախի Հանրապետություն): Տպագրիչ Մինաս Տարղլիճյանցի ջանքերով՝ իր իսկ անվան տպարանում հրատարակված ժամագրքերի շարքին է դասվում: Տպագրության տարեթիվը՝ 1854 թ.: Շուրջ 523 էջից բաղկացած միավոր է: Կազմը՝ 16,2x9,5 սմ, շարվածքը՝ 12-13,5x7,5 սմ, գրությունը՝ միասյուն, տողերի քանակը միջինում՝ 18-25: Կազմը՝ դրոշմազարդ մուգ կապույտ թավիշ, միջուկը՝ ստվարաթուղթ: Աստաղը՝ պատռված-ընկած, ներկայումս՝ տսնծված էջով: Լուսանցակողերը՝ գործածությունից սևացած: Որոշ թերթերին առկա են կեղտաբծեր, յուղի, խոնավության հետքեր: Թ. 30-60 վերին և արտաքին եզրը պատռված-ընկած է, սկզբում և վերջում կան բացակա թերթեր՝ 1-29, 46-523: Այբուհանդերձ, տպագրի վիճակ գնահատվում է բավարար:

Տիտղոսաթերթ՝ ԺԱՄԱԳԻՐՔ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑ/ԻՈՅ: / ՏՊԱԳՐԵԱԼ / Ի Հայրապետութեան Տեառն և Տեառն Ե. / ՆԵՐՍԻՍԻ Աստվածապատի Կաթողիկոսի Ամենայն Հայոց և Ասպետի զանազան Նշանաց / Ա[ստուա]ծահաստատ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՑ: / Հրամանաւ Ա[ստուա]ծարեալ Առաքելաշաւիղ / Բարձր Սրբազան Արքեպիսկոպոսի Վիճա-/կաւոր Առաջնորդի և Մետրապօլիտի Հայոց / Ղարաբաղու և այլոց, Տեառն Բաղասարայ / Իշխանագնէի Հասան Զոլալեանց, և Աս-/պետի ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՑ: / Արդեամբք և ծախիք Պարոն Մ. Յ. Պապեանց: / Ի Տպարանի Մինասի Մ. Տարղլիճեանց / 1854, Ի ՇՈՒՇԻ ՌՄԳ.: /

Տպագիր գիրքը զարդամոտիվներով է, որն ունի բուսական և զարդանախշ գլխազարդեր, գլխագիր, վերջնազարդեր: Տպագրից

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

մեզ հայտնի միակ օրինակը գտնվում է Ե. Չարենցի անվան գրակա- նության և արվեստի թանգարանում (ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999, 23):

6. Ժամագիրք: Տիտղոսաթերթի բացակայության պատճա- րով հնարավոր չեղավ պարզել գրքի տպագրության տարեթիվն ու վայրը: Տպագրում առկա պատկերներից և գլխագարդերից ենթա- դրում ենք, որ այն հարում է Երուսաղեմում կամ Կոստանդնուպոլսում 1850-1870-ական թվականներին տպագրված գրքերի շարքին: Ներ- կայում էջերի քանակը 342 է (ավելին է եղել): Էջերը 16,8x11 սմ մեծու- թյան են, գրության միասյուն շարվածքով՝ 13-13,5x8,8 սմ: Տողերի քանակը՝ 20-29: Գիրքը՝ շագանակագույն ստվարաթղթյա կազմով, մեջքը՝ գծավոր մոխրագույն կտոր, Բ. կազմաստառին փակցված սպիտակ թղթին՝ մանուշակագույն թանաքով՝ «Քրիստոնական վար- դապետութիւն» գրվածքը: Տպագրի բովանդակության մեջ առկա են փորագիր պատկերներ և բուսական գլխագարդեր: Կնքադրոշմ՝ էջ 321՝ սև թանաքով շրջանակ: Կազմը՝ մաշված-ճաքճաք, մատիտի, թանաքի հետքեր: Կազմը՝ մեջքից թուլացած, որի հետևանքով թեր- թերի որոշ հատվածներ հիմքից անջատված են: Կազմաստառը և միջուկը բացակայում են: Լուսանցակողերը՝ սևացած: Էջերին կան զանազան բծեր, կեղտաբծեր, խոնավության, մոմի, մատիտի հետ- քեր: Միավորը թե՛ սկզբում, թե՛ մեջտեղում, թե՛ վերջում ունի թափ- ված հատվածներ, պահպանված է՝ 211-342 էջերը: Այն բավականին վնասված է և ենթակա է նորոգման:

7. Շարականոց: Գրքի տպագրության տարեթիվը՝ 1861 թ.: Տպագրության վայրը՝ Վաղարշապատ: Այն Ս. Էջմիածնի տպարանից (ԲԱԲԱՅԱՆ 1963, 111; ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 109) լույս տեսած ժամագրքերից մեկն է: Էջաքանակը՝ 784, էջերի մեծությունը՝ 21x14 սմ, գրության միասյուն շարվածքով՝

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

16x7 սմ: Տողերի քանակը՝ 22-23: Կազմը՝ մուգ շագանակագույն կաշի, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ տպված թուղթ, պահպանակ՝ Ա.՝ տպված թուղթ:

Տիտղոսաթերթ՝ [ՇԱՐԱԿԱՆ / ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳՈՅ / ՍՈՒՐԲ ԵՒ ՌԻՂՂԱՓԱՌ / ԵԿԵՂԵՑԻՈՅՍ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ / ՅՕՐԻՆԵԱԼ / Ի ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՁԱՅՆ ՄԵՐՈՅ ԵՒ Ի ՍՐԲՈՅ / ՇՆՈՐՀԱԼ-ԻՈՅՆ ԵՒ ՅԱՅԱԼՈՅ ՍՈՒՐԲ ՀԱՐՅ ԵՒ / ՎԱՐԴԱՊԵՏԱՅ: / Ի ՀԱՅ-ՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. / ՄԱՏԹԷՈՍԻ ԱԶԳԱՍԷՐ / ԵՒ ԱՍՏՎԱԾԸՆՏԻՐ ԿԱ-/ԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՍԵՆԱՅՆ / ՀԱՅՈՅ / ԵՒ / ԱՄՊԵՏԻ ՏԷՐՈՒ-ԹԵԱՆՅ / Ի Ս. ԷԶՄԻԱԾԻՆ / ՌՅԺ-1861]:

Վիճակը գնահատվում է բավարար: Կազմը՝ մաշված: Կազմաստառը մաշված-կեղտոտված է: Լուսանցակողերի կարմիր ներկանյութը մասամբ գունաթափ է, սևացած: Թերթին կան կեղտաբծեր, խոնավության, թանաքի հետքեր: Էջ 755-784 և Բ. պահպանակը՝ գրված թուղթ: Էջ 3-4, 281-284՝ լրացված տետրակի թղթով և գրված կապույտ թանաքով: Թվայնացված օրինակում կա տպագրական սխալ՝ 56 էջի փոխարեն տպագրված է 55, 291 էջի փոխարեն տպագրված՝ 261-ը, 294 էջի փոխարեն տպագրված՝ 264-ը:

Տպագիր գիրքն ունի զարդագրեր՝ գլխագրեր, երեք փորագիր պատկեր, բուսական գլխազարդեր, միջնազարդեր և վերջնազարդեր: Էջ 101, 246, 484՝ կնքադրոշմ՝ սև թանաքով շրջանակ, որի մեջ եկեղեցու պատկեր, եզրագոտում՝ հայատառ և լատինատառ գրություն՝ «Եկեղ/// ///ին /// ԴԵՕՐԳԻԱ ///»: Հետագա հիշատակարան՝ պահպանակ Բա⁶ «Մարքարով», «Տալ Կարապետաց, հրաշափառ Աստված, 421 համար», պահպանակ Բբ (հակառակ դիրքով)՝ «Մար-

⁶ Բոլոր հետագա հիշատակարանները շղագրով են: Աշխատանքում ներկայացված են միայն կարևոր տեղեկություններ պարունակող հիշատակարանները, որոնք գրված են կապույտ, սև, մանուշակագույն թանաքով և սև մատիտով:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

քարին, ///արքօն, Մարքար, Վարդան», էջ 124՝ «184/// ամի Ավետիս Զուբարով մուրսն (՝)», էջ 159՝ «Ես գրեցի Մըկըրտիչ Մազակով անարժան ձեռով», էջ 209՝ «1799 ամի 10ն փետրվարին Հարութենի որդի Հօրբէլ մորեն եղավ», էջ 229՝ «1884 ամի, ես՝ Ալեքսան Մէլքաւով, փետրվարի 1ն կես իմ փառօ տւավ Մարտին», էջ 239՝ «1886 ամի 19 օր նօյեմբերի Հարօյի որդի Մարտիրօս մօրից եղավ: Աստված բարի վայելիլում տաճէ. ամէն», էջ 257՝ «1881 ամի Իէ. (27) դեկտեմբերի եղաւ Գրիգորի որդի Սէրգոն մօրից եղաւ», էջ 279՝ «1884 ամի, ի 10 յուլիսին Կարապետ Հօվէօվի որդի Մընացական մօրից եղավ: Աստված բարի վայելիլում տաճէ. ամէն: 1884 ամի ի 10 յուլիսին [Մ]իրդաթ Մարգարովի որդի Սըհակ մօրից եղիվ: Աստված բարի վայելիլում տաճէ. ամէն», էջ 282՝ «1884 ամի մայիսի 10-ին յաթան /// հասարակության գլխաւոր [տ]անուտէր ընտրեց Հայրապետ Մելիք Բարսեղով», էջ 290՝ «183 (կտրված) տէր էր Բոյոյի, որ թե Մայրամ մօրից եղավ: Աստված բարի վայելիլում տաճէ», էջ 414՝ «1882 ամի 4 օրն փետրվարի, տէր Գրիգորի որդի՝ Սըմբաթ մօրից եղեւ: Աստված բարի աչողութիւն տաճէ. ամէն», էջ 418՝ «1892 ամի 1 օրն յունվարին ձեռնադրին Ներքին Ղարանլուոցի Գրիգորին չորրորդ աստիճանի համար: Աստուած բար աղորութիւն տաճէ», էջ 441՝ «Այս Շարական ևս պատկանում է տէր Եղաիազար Եղաք: Առայ ի 1890 թվականին Նօրգ Ռազան Թազան///», էջ 450՝ «1891 ամի 15 օրը մայիսին եղաւ, Գէորգի որդի Համբարձում մօրից եղաւ: Ուրախ ժամ Աստուած», էջ 520՝ «1884 ամի 22 օրն փետրվարի, տէր Գրիգորի որդի Արշակ մօրից եղեւ»: էջ 526՝ հակառակ դիրքով՝ «Պետրոս, Ավի/// Կարապետ ///»: էջ 529՝ «1890 ամի է օր /// Հայրապետ/// Խանօվի որդի Մարտիրօս մօրից եղավ: Աստված բարի վայելիլում տաճէ. ամէն»: էջ 554՝ «Ես՝ Մնացակա[ն] Գրիգորով»: էջ 567՝ «1923թ. յուլիսի 6-ին Արզմանի որդի Գարասիմ մորից եղավ: Աստված իրեն

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

բարի բախտը և վայելչությունն տայ, լինի ամենախելոք և կրթված, ամենայն նեղություններից և փորձանքներից ազատ մնա»: Էջ 582՝ «1883 ամի 1 յուլինիսի, Մըկրտիչ ըսկայի աս (՞)»: Էջ 648՝ «Ա. (1) օր նօյեմբերին 1880 ամի Գէօրք Բարսեղօվի որդի Այրմենայկ մօրից եղավ: Աստված բարի վայելում տա՛ծէ. ամէն»: Էջ 658՝ «1872 ամի 23 օրն մայիսի, ի Ներքին Ղարանլուղայ գիւղոյ բնակեր Գրիգ[որ]»:

Սույն տպագրությունից օրինակներ պահպանվում են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում, Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում և այլուր (ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999, 80):

8. Ժամագիրք Արենի. «Ժամակարգություն Հայաստանեայց սուրբ եկեղեցույ»: Սույն տպագիր միավորը Էջմիածնի (Վաղարշապատ) «Ս. Էջմիածին» տպարանում տպագրված Մայր Ժամագրքերից է (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 109-110): Տպագրվել է 1862 թ.: Պարունակում է երեք գիրք, ըստ այդմ ունի երեք էջակալություն՝ 92, 143, 178: Կազմը՝ 35x22,5 սմ, շարվածքը՝ 26x16,7 սմ, գրությունը՝ երկայուն, տողերի քանակը՝ 43-45: Ունի մուգ շագանակագույն կաշի, Ա. փեղկին սոսնձված սպիտակ թուղթ՝ «Սաղմոս» գրությամբ: Միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ բաց կանաչ թուղթ: Կազմը՝ մաշված-պատռված: Մեջքը՝ թուլացած, որի հետևանքով մի քանի թերթեր հիմքում պոկված են: Կազմաստառը մաշված-կեղտոտված է: Լուսանցակողերը սևացած են և եզրերում ունեն մաշվածությունից առաջացած մանր պատռվածքներ: Թերթերին առկա են կեղտաբծեր, խոնավության, մոմի հետքեր, որոշ թերթեր հիմքում և եզրերում նորոգված են սպիտակ թղթով: Սկզբից, մեջտեղից և վերջից կան պակասավոր էջեր: Գրեթե ամբողջական պահպանված է միայն առաջին գլխի՝ «Ժամակարգություն...»

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

մասը, մնացյալ գլուխներից առկա են միայն որոշ թերթեր: Այն պարունակում է երեք գիրք, համապատասխանաբար երեք տիտղոսաթերթեր:

Տիտղոսաթերթ Ա՝ *[ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ / ՅՈՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿԻՆ ԵՐԵՔ ԳԻՐՔ / ՍԱՂՄՈՍ ԴԱԽԹ / ՈՐ Է ԱՂՕԹՔ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՍՏՈՒԱԾ / ԵՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ / ԱՏԵՆԻ ԺԱՄԱԳԻՐՔ, / ՈՐ Է ՄԱՏԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕԹԻՅ / ԵՒ ՊԱՇՏԱՄԱՆ / ՏՕՆԱՅՈՅՑ, / ՈՐ Է ՑՈՒՑԱԿ ՏՕՆԻՅ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ / ԸՍՏ ՆՈՐՈԳ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՒՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ / Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ / 1862=ՌՅԺԱ. / 7՝:*

Թեև գրքի ընդհանուր տիտղոսաթերթում հիշատակվում են նրա մեջ մտնող երեք մասերն էլ, սակայն, սաղմոսներից հետո եկող Ատենի Ժամագրքի և Տոնացույցի երկու հատորներն իրենց հերթին ունեն առանձին տիտղոսաթերթեր՝ զարդանկարներով: Առկա են էջախորագրեր, գլխագրեր, մեկ փորագիր պատկեր, բուսական գլխագարդեր, բաժանագարդեր և վերջնագարդեր: Վերոբերյալ գրքից օրինակներ առկա են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, Հայաստանի պատմության թանգարանում (ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՅԱՆ 1999, 86):

9. Խորհրդապետը: Տպագրության վայրը՝ Վաղարշապատ, տպարանը՝ «Ս. Էջմիածնի», տպագրության տարեթիվը՝ 1880 թ. (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 190-191): Կազմը՝ 34,5x26 սմ, շարվածքը՝ 30x20,5 սմ, գրությունը՝ երկայուն, էջերի քանակը՝ 22 (Բ) զարդափակ էջ, տողերի քանակը՝ միջինում

⁷ Մնացյալ՝ Բ., Գ., Դ. տիտղոսաթերթերի նկարագրությունը տե՛ս ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 109-110:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

36-47: Կազմը՝ դրոշմազարդ բաց մանուշակագույն մոմլաթ, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ սպիտակ թուղթ: Գրքի ընդհանուր վիճակը գնահատվում է բավարար: Կազմը՝ մաշված-կեղտոտված, խոնավությունից փոքր-ինչ գունափոխված: Կազմաստառը՝ մասամբ մաշված, տեղ-տեղ կեղտոտված: Թերթերի որոշ մասերում՝ կեղտաբծեր, ստորին աջ անկյուններում՝ մատնահետքեր:

Տիտղոսաթերթ՝ *ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ / ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ / ԸՍՏ ԾԻՍԻ / ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅՈՒՅՈՅ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ: / ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ / Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ, / Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ /, 1880-ՌՅԻԹ: /*

Տիտղոսաթերթը, բովանդակության երկայուն շարվածքը՝ զարդափակ ուղղանկյան մեջ: Տպագիր գիրքն ունի նաև էջախորագրեր և վերջնազարդեր: Նշված տպագրություններից օրինակներ առկա են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում, Երևանի պետական համալսարանում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում (ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999, 277):

10. Տարեցոյց՝ Տիտղոսաթերթի բացակայության պատճառով հնարավոր չէր իրականացնել ամբողջական մատենագիտական նկարագրություն: Տպագրության տարեթիվը, հավանաբար, 1884 կամ 1885 թթ.: Անհայտ են տպագրության վայրը, տպարանը, տպագրիչը: Թերթերը ներկայումս՝ 254, (ավելին է եղել): Կազմը՝ թղթյա, 19x12 սմ, շարվածքը՝ 16,5x10,8 սմ, գրությունը՝ միասյուն: Լուսանցակողերը՝ սևացած: Թերթերը սկզբում, մեջտեղում և վերջում բացակա են, առկա էջերն են՝ 3-254: Տպագիրը ենթակա է նորոգման:

11. Քարոզ՝ Տիտղոսաթերթի բացակայության պատճառով սույն գրքի մատենագիտական նկարագրությունն ամբողջացնել ևս

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

հնարավոր չէր: Տպագրության վայրը և տպարանն անհայտ են: Տպագրության տարեթիվը՝ 1900-ական թվականներ: Էջերը՝ 136 և ավել, մեծությունը՝ 16x10 սմ, շարվածքը՝ 12x6,5 սմ, գրությունը՝ միասյուն: Վիճակը՝ բավարար: Կազմը, կազմաստառը՝ բացակա: Թերթերին խոնավության, մոմի հետքեր, տեղ-տեղ կեղտաբծեր: Տիտղոսաթերթը, էջ 1-44, 136-ից հետո կան բացակա թերթեր:

12. Ժամագիրք: Տպագրության վայրը՝ Վաղարշապատ, տպարանը՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին»: Տպագրության տարեթիվը՝ 1903 թ. (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 190-359): Կազմված է 971 զարդափակ էջից: Կազմը՝ 12x8,3 սմ, շարվածքը՝ 9,7x6 սմ, գրությունը՝ միասյուն, տողերի քանակը՝ 12-21: Կազմը՝ դրոշմազարդ մանուշակագույն մոմլաթ, մեջքը՝ սև մետաքս, միջուկը՝ սովարաթուղթ, աստառը՝ սպիտակ գրված թուղթ, լուսանցակողերը՝ կարմիր, պահպանակ Ա-Բ.՝ գրված թուղթ:

Տիտղոսաթերթ՝ *ԺԱՄԱԳԻՐԲ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ / Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ: / ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, / Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի / 1903: /*

Ունի հետագա հիշատակարան՝ (20-րդ դար, շղագիր) Ա. կազմաստառին մանուշակագույն թանաքով՝ «Հանուն Յովհաննէսին, Յառաքել, Մարգարեյին, Կարապետին, Մկրտիչին, Ավետիսին, Մարդիրոսին», «Եօթ մահացու մեղկն, որ գործեալ եմ, մեղուցեալ եմ, մեղայ Աստուծոյ»: Տիտղոսաթերթին՝ մատիտով, մանուշակագույն թանաքով՝ «Սուրբ Կարապետի տոնի Յառաքելին, Յովհաննէսին, Մարկարեյին, Հայրապետին, Կարապետին, Մկրտչին, Մարտիրոսին, Ավետիսն»:

Տիտղոսաթերթը և էջերը զարդափակ են: Ունի չորս փորագիր պատկեր և երկու վերջնազարդ, մեկ կնքադրոշմ՝ Բ կազմաստառին սև բոլորակ՝ «Հայ-Թագար /// APM. ЦЕРК. СВ. ГЕОРГИ ///»: Գրքի

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

վիճակը՝ բավարար: Կազմաստառը՝ մասամբ մաշված, հիմքը՝ թուլացած: Թերթերին՝ տեղ-տեղ կեղտաբծեր, խոնավության, թանաքի, մատիտի հետքեր: Էջ 961-962, 963-964՝ հիմքից, 705-706՝ վերին հիմքից՝ անջատ:

Տպագիր գրքի օրինակներ կան Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, Հայաստանի պատմության թանգարանում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում (ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ և ուրիշն. 2007, 64):

13. Սյրեփաննոս Օրբելեան. Պարմութիւն Նահանգին Սիւսական (ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1942, 3): Տպագրության վայրը՝ Թիֆլիս: Նվարդ Աղանյանցի տպարանում տպագրված գրքերից է: Տպագրության տարեթիվը՝ 1910 թ., էջերի քանակը՝ 618, մեծությունը՝ 19,2x12,2 սմ, շարվածքը՝ 14x9 սմ, գրությունը՝ միասյուն: Գիրը՝ բոլորգիր, տողերի քանակը՝ 27: Կազմը՝ բաց շագանակագույն կաշի, մեջքը՝ մոխրագույն կտոր, միջուկը՝ սովարաթուղթ, աստառը՝ թուղթ (Ա.՝ դեղնավուն, Բ.՝ կապտավուն), պահպանակ՝ Բ (վջ.)՝ տողագծերով թուղթ:

Տիտղոսաթերթ՝ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Դ. / ՊԱՏ-ՄՈՒԹԻԻՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՍԻՍԱԿԱՆ: / ԱՐԱՐԵԱԼ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՕՐԲԷԼԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԻՆՆԵԱՅ / ԹԻՖԼԻՍ / ԵԼԵՔՏՐՈՇԱՐԺ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ 7, / 1910 /

Տպագիր գիրքը բավարար վիճակում է. կազմը՝ եզրերից մաշված-պատռված, մեջքին՝ ցեցի անցքեր: Ա. փեղկը՝ հիմքում ամրացված սպիտակ թղթով և մանուշակագույն կտորով: Տիտղոսաթերթի արտաքին եզրը՝ պատռված-ընկած, պահպանվել է հիմքից որոշ հատված: Լուսանցակողերը՝ տեղ-տեղ սևացած: Գրքի օրինակներից առկա են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում և այլուր (ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ և ուրիշն. 2007, 321):

14. Օրացոյց: Տպագրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանում, 1960 թ.: Մեծությունը՝ 11,5x8,5 սմ, շարվածքը՝ 9x6 սմ, գրությունը՝ միասյուն, էջերի քանակը՝ 256 (գծափակ), տողերի քանակը միջինում՝ 12-26: Կազմը, միջուկը, աստառը, տիտղոսաթերթը բացակայում են: Լուսանցակողերը՝ ստորին անկյունում մաշված-պատռված, թերթերին՝ կեղտաբծեր, տեղ-տեղ խոնավության հետքեր: Տպագիր գրքի վիճակը գնահատվում է բավարար:

Տիտղոսաթերթ՝ *ՕՐԱՅՈՅՑ 1960 ՆԱՀԱՆՋ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ (ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ) ԵՒ ԲՈՒՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ 4452-4453 ԵՒ ՏՈՄԱՐԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՌԵԹ-ՌԵԺ. = 1409-1410, ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ:*

Պատկերագարդ է, ունի բուսական գլխագարդեր: Տիտղոսաթերթը, շարվածքը կրկնակի եզրագծերի մեջ են առնված: Գրքից օրինակներ կան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գրադարանում և բազում այլ գրադարաններում:

Այսպիսով՝ ուսումնասիրության ենթարկված մասնավոր հավաքածուն հայտնաբերվեց և հետազոտման արժանացավ առաջին անգամ: Խնդրո առարկա տպագիր գրքերի լուսաբանումը հնարավորություն է ընձեռում շրջանառության մեջ դնել հայտնի տպագիր միավորներ, այդպես առատացնելով տպագիր գրականության բազմաբնույթ հավաքածուների շարքը՝ համալրելով դրանք ևս տասնչորս օրինակների բացահայտմամբ:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ 1942 – Աբրահամյան, Ա. (1942), *Ժամանակագրութիւն Սփեփաննոսի Օրբէլեանի*, Երևան, «Մատենադարան» հրատ., 38 [Abrahamyan, A. (1942), *Jamanakagrutyun Stepannosi Orbeliani*, Yerevan, "Matenadaran" pbl., 38];

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԲԱԲԱՅԱՆ 1963 – Բաբայան, Ա. (1963), *Հայ գիրքը և տպագրությունը*, Երևան, Հայպետհրատ, 174. [Babayan, A. (1963), *Hay girqy ev tpragrutyuny*, Yerevan, Armenian State Publishing House, 174];

ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ԱԴԱՄՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ և այլք 2007 – Գյուլումյան, Օ. (2007), Ադամյան, Ա., Թադևոսյան, Ս., Սավալյան, Ա., Սողոմոնյան, Մ., Սահակյան, Ա., *Հայ Գիրքը 1901-1920 թվականներին*, հտ. Դ., Երևան, «Գիրք» հրատ., 817, 2 [Gyulumyan, O. (2007), Adamyan, A., Tadevosyan, S., Savalyan, A., Soghomonian, M., Sahakyan, A., *Hay girqy 1901-1920 tvakkannerin*, vol. D., Yerevan, "Girk" Publishing House, 817, 2];

ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021 – Գրիգորյան, Մ., Պետոյան, Ս., Գրիգորյան, Գ., Նազարյան, Գ., Ոսկանյան, Շ., Սուվախչյան, Հ., Գալստյան, Ա. (2021), *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ հայ գրատպության կենտրոն*. Հրատարակությունների մատենագիտություն 1772-1920, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ., 743, 1 չի. էջ [Grigoryan, M., Petoyan, S., Grigoryan, G., Nazaryan, G., Voskanyan, Sh., Suvakhchyan, H., Galstyan, A. (2021), *Mother See of Saint Etchmiadzin, center of Armenian printing. Bibliography of publications 1772-1920*, S. Etchmiadzin, Mother See of Saint Etchmiadzin pbl., 743, 1 p];

ԴԱՎԹՅԱՆ 1967 – Դավթյան, Հ. (1967), *Հայ գիրքը 1801-1850 թվականներին, մատենագիտություն*, Երևան, «Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան» հրատ., 536, 2 [Davtyan, H. (1967), *Armenian book in 1801-1850, bibliography*, Yerevan, "Republican Library after A. F. Myasnikyan" Publishing House, 536, 2];

ԼԵՎՈՆՅԱՆ 1946 – Լևոնյան, Գ. (1946), *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Երևան, ԳԱ հրատ., 255 [Levonyan, G. (1946), *Hay girqy ev tpragrutyan arvesty*, Yerevan, Academy of Sciences, 255];

ԿՈՐԿՈՏՅԱՆ 1964 – Կորկոտյան, Բ. (1964), *Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567-1850 թթ.)*, Երևան, «Ա. Մյասնիկյանի անվան պետական հանրապետական գրադարան» հրատ., 151, 2 [Korkotyan, K. (1964), *Armenian printed book in Constantinople (1567-1850)*, Yerevan, "State Republican Library after Al. Myasnikyan" ed., 151, 2];

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈՐՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1998 – Հակոբյան, Թ., Մելիք-Բախշյան, Ա., Բարսեղյան, Հ. (1998), Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4 (Ն-Վ), Երևան, «Երևանի համալսարանի» հրատ., 810 [Hakobyan, T., Melik-Bakhshyan, S., Barseghyan, H. (1998), *Dictionary of toponymy of Armenia and adjacent territories*, vol. 4 (N-V), Yerevan, "Yerevan University" Publishing House, 810];

ՃԻԶՄԷՃԵԱՆ 1957 – Ճիզմեճեան Պ. վարդ. (1957), *Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, հտ. 2, Հալէպ-Սուրիա, «Անի» տպր., 1460 [Chizmedjian P. rose (1957), *Hayeren lezvi liakatar bararan*, vol. second, Aleppo-Syria, "Ani" print., 1460];

ՄՈՒՐԱԴՅԱՆ 2011 – Մուրադյան, Ա., *Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն (1833-1996 թթ.)* (2011), Երևան, Հեղինակային հրատ., 147 [Muradyan, A., *Erusaghem i hay tpagir grqi matenagitutyun (1833-1996)* (2011), Yerevan, Author's edition, 147];

ՈՍԿԱՆՅԱՆ 1988 – Ոսկանյան, Ն., Կորկոտյան, Բ., Սավալյան, Ա. (1988), *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 864 [Voskanyan N., Korkotyan, Q., Savalyan, A. (1988), *The Armenian book in 1512-1800*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 864];

ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999 – Ոսկանյան, Ն., Սավալյան, Ա., Սողոմոնյան, Մ., Գյուլումյան, Օ., Սահակյան, Ա., Թադևոսյան, Ս. (1999), *Հայ գիրքը 1851-1900 թվականներին*, Երևան, «Գիրք», 860 [Voskanyan, N., Savalyan, A., Soghomonian, M., Gylumyan, O., Sahakyan, A., Tadevosyan, S. (1999), *The Armenian book in 1851-1900*, Yerevan, "Girk", 860];

ՍՏԵՓԱՆՅԱՆ 1973 – Ստեփանյան, Գ. (1973), *Կենսագրական բառարան (Հայ մշակույթի գործիչներ)*, երեք հատորով, հտ. Ա. (Ա-Թ), Երևան, «Հայաստան» հրատ., 382 [Stepanyan, G. (1973), *Kensagrakan bararan (Hay mshakuyti gortsichner)*, in three volumes, vol. A. (A-T), Yerevan, "Hayastan" Publishing House, 382];

ՏԵՐ-ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, ԳԱՆԳՐՈՒՆԻ, ՏՕՆԻԿԵԱՆ 1968 – Տեր-Խաչատուրեան, Ա., Գանգրունի, Հ., Տօնիկեան, Փ., (1968), *Հայոց լեզուի*

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

նոր բառարան, Պէլրոյֆ, Կ. Տօնիկեան եւ որդիք, 924 [Ter-Khachaturian, A., Gangrouni, H., Tonikian, P., (1968), *Hayots lezui nor bararan*, Beirut, “K. Tonikyan ev vordik”, 924];

ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ 2022 – Տէր-Վարդանեան, Գ. (2022), *Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական եւ թնագրագիտական վաստակը. Ինքնակենսագրականը*, Բանբեր Մատենադարանի, հտ. 33, Երևան, «Մատենադարան» հրատ., 67-90 [Ter-Vardanian, G. (2022), *Yovhannes V. Zohrapian's handwriting and ethnography merit. The autobiography*, Banber Matenadaran, vol. 33, Yerevan, "Matenadaran" Publishing House, 67-90];

ՕՐՄԱՆԵԱՆ 1972 – Օրմանեան, Մ. (1979), *Ծիսական բառարան*, Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 195 [Ormanian, M. (1979), *Tsisakan bararan*, Antelias, Metsi Tann Kilikio Katoghikosutyun, 195];

THE PRIVATE COLLECTION OF VALUABLE PRINTED BOOKS SATENIK GRIGORYAN

*Matenadaran, the Mesrop Mashtots
Research Institute of Ancient Manuscripts*

Keywords: Gegharkunik province (RA), Vardadzor village, Mush province, Western Armenia, Tazagyugh, Manukyan family, print books, private collection.

This work deals with the study of a private print collection of fourteen titles owned by an individual. The collection of valuable printed books belongs to the family of Azat Manukyan, a resident of Vardadzor village. After a long journey, it found its final resting place in the Manukyan family. The collection was moved to Vardadzor village in the 1940s, from Tazagyugh, another village in Martuni region (Gegharkunik province, RA). Some of the prints were brought to Tazagyugh in the 1800s. during the deportation period, from Mush province of Western Armenia. Now, a place of worship has been built in the adjacent part of the house for prints. The collection was discovered and studied for the first time. Through these prints, Armenian printed literature was enriched by fourteen more.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՃԵՄԱՐԱՆԸ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԵՋ¹*

ՀՏԴ: 02(479.25)

ՌՈՒԶԱՆՆԱ ԵՂԻԿՅԱՆ

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր

Որպես գրադարանավար, որն աշխատել է տարբեր բնույթի գրադարաններում, իսկ ներկայումս ղեկավարում է Շիրակացու ճեմարանի գրադարանը, բացահայտել եմ մեկ ճշմարտություն. գրադարանի հետնաբեմում անհրաժեշտ է պատրաստել այնպիսի «ուսեստ», որ ոչ միայն բավարարի գրքասերների քաղցը, այլև գրավիչ համով կրկին ու կրկին այցելուներին հրավիրի դեպի իր տարածքը՝ գրադարանային միջավայրը:

Եվ մենք պետք է թույլ տանք այցելուներին, որ նրանք ինքնուրույն ընտրություն կատարեն, քանի որ որոնման գործընթացն ինքնին հետաքրքիր է և ուսանելի: Երբ օգտվողը հնարավորություն է ունենում անձամբ որոնելու կամ ընտրելու գրականությունը, թերթելու գրքերը, ապա մեծանում է հետաքրքրությունը դեպի գիրքը, ընդլայնվում է մարդու մտահորիզոնը:

Յուրաքանչյուր գրքի ընթերցում բազմաթիվ հարցականներ է ծնում, և գիրք կարդալու հաճույքը նաև դրանց պատասխանները որոնելու ընթացքում փոքրիկ հետազոտություններ կատարելու, ան-

¹ «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի տնօրեն Աշոտ Ալիխանյանի «Ոչ թե գրադարանը ճեմարանում, այլ ճեմարանը՝ գրադարանում» կարգախոսը

* Հոդվածը ներկայացվել է 09.10.2024, ընդունվել է տպագրության 24.10.2024:

The article was submitted on 09.10.2024, accepted for publication on 24.10.2024.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

հրաժեշտ պատասխանները հատկացված ժամանակահատվածում փնտրելու և գտնելու մեջ է:

Ճեմարանում գրադարակները բաց և մատչելի են օգտվողների համար, կանոնավոր, թեմատիկ դասավորությամբ: Այստեղ առաջարկվում է մշտապես թարմացվող գիտահանրամատչելի, գիտագեղարվեստական, գիտաֆանտաստիկ գրականություն: Բաց դարակային սպասարկումը նոր երևույթ չէ, բայց այստեղ ամենակարևորը գրքերի ընտրությունն է թիրախային խմբի օգտվողների համար: Անընդհատ պրպտող գրադարանավարը ջերմեռանդորեն աշխատում է, առանց հանձնվելու փորձում է իր գրադարանը լավագույնը դարձնել: Ընթերցողների հարցադրումները բավարարելու մղումը նոր գաղափարներ է ծնում, բացվում են ամենատարբեր հնարավորություններ՝ նպատակին հասնելու համար: Արդյունքում՝ գոհունակ և երախտապարտ ընթերցողներն են:

Մի՞թե այս սկզբունքով չեն աշխատում այսօրվա ձեռնարկատերերը, մի՞թե նրանց ցանկությունը մեկը չէ՝ ավելի շատ հաճախորդների գրավել իրենց կողմը և գոհացնել նրանց: Միայն մեկ տարբերությամբ, որ այստեղ ընթերցող-գիրք-գրադարան կապի մեջ գրադարանավարը փոխանցում է իր անշահախնդիր սերը՝ գրքի ու անհատի մշտական բարեկամությունն առավել սերտ դարձնելու անսպառ ցանկությամբ: Երբ գրադարանավարը հետևում է գրաշուկայի, գրողների, թարգմանիչների, աշխարհի գրադարանների սոցիալական էջերի լրահոսին, դպրոցում ընթացող ծրագրերի նորություններին, բնագավառին առնչվող վեբինարների ակտիվ մասնակից է և տեղեկացված է գրադարանային աշխարհի նորություններին, ապա ամենալավ փորձը տեղայնացնելու ցանկություն է առաջանում: Դեռ ավելին, մտածում է կատարելագործելու ուղղությամբ, որի ժամանակ էլ ծնվում են նոր գաղափարներ և անհրաժեշտ էներգիա՝ նպատակ-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ներն իրագործելու համար: Հնացած և ավանդական թվացող շատ մեթոդներ կարող են նորովի օգտագործվել, երբ գործում է ստեղծագործ միտքը. մանավանդ որ այսօր տեխնոլոգիական հնարամտությունը մեզ գրավիչ առաջարկներ է հղում: Այսպես, թվային գրացուցակում գրքերի կազմը կարող է դառնալ շարժապատկերային (անիմացիոն), լրացված իրականության շնորհիվ թղթային գրքերի էջերի հերոսները վիրտուալ իրականությունից կարող են մեզ ողջունել և այլն: Մեկ ուրիշ օրինակ՝ տեղեկանալով, որ դպրոցը պատրաստվում է նշել Գիտության միջազգային օրը, գրադարանավարը կազմում է խորհրդատու ցանկ՝ ներառելով թե՛ գրադարանում առկա գրքերը, և թե՛ թվային ռեսուրսներ (օրինակ «[Գիտության աշխարհում](#)» թվայնացված ամսագիրը և այլն): Այդպիսի ցանկերը կարող են ստանալ QR կոդեր, որոնք հայտարարության տեսքով հանրահասանելի կլինեն կրթօջախի համայնքին: Ի վերջո, ինչ-որ հիշարժան օրվա առթիվ գրադարանավարը կարող է «գովազդել» թեմային առնչվող գրքեր՝ կազմելով դրանց ազդագրերը (թրիլերը) և տեսանյութերի տեսքով հրապարակել: Այս ստեղծագործ աշխատանքում կարելի է ներգրավել սովորողներին՝ դրանով իսկ նպաստելով գրադարանի հետ կապի ամրապնդմանը: Գրքերի ավանդական ցուցադրությանը զուգահեռ կարելի է պատրաստել նաև թվային ցուցադրություն: Գրքի բովանդակությունից դուրս բերված մի գայթակղիչ նախադասություն, որն ավարտվում է բազմակետերով, հավատացե՛ք, շարժում է հետաքրքրությունը և սովորողին բերում գրադարան՝ այդպիսով հասանելի դարձնելով այն արժեքավոր տեղեկույթը, որը կարծես այնքան աննկատ ու պատահականորեն հայտնվել էր նրա տեսադաշտում: Այսպես օրինակ, երբ Կենդանիների պաշտպանության օրվանն ընդառաջ, ի թիվս ընտրված այլ գրքերի, գրադարանավարս պատրաստեց նաև «Սպիտակ Բիմ, սև ականջ» գրքի ազդագիրը և

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

հասանելի դարձրեց սաներին էլեկտրոնային փոստ միջոցով, հաջորդ առավոտյան միջին տարիքի սովորողները, իրար հերթ չտալով, անհամբեր շտապում էին գրադարան: Ինչ խոսք, անչափ հաճելի է տեսնել այսպիսի իրարանցում և հետաքրքրություն գրքի հանդեպ:

Պետք է ասեմ, որ գրադարանավարիս համակարգչի բրաուզերի և սոցիալական էջերի ներառումներում կան բազմաթիվ թեմատիկ դասակարգված թղթապանակներ, որտեղ պահվում են համացանցային միջավայրում հանդիպած օգտակար հղումները: Եվ անհրաժեշտության դեպքում, առանց ժամանակ կորցնելու, դիմում եմ այդ թղթապանակներին:

Երեխաների գեղագիտական դաստիարակության գործում իր աննկատ դերակատարությունն ունի նաև գրադարանը, ոչ միայն արվեստի ոլորտում եղած հանրամատչելի գրքերի, այլև արվեստի ստեղծագործությունների ներկայացմամբ: Այսպես օրինակ, Շիրակացու ճեմարանի գրադարանի պատին ամրակցված էկրանից հեռարձակվում են ոչ միայն գրքերի թվային ցուցադրությունները, նորություններն ու հիշարժան օրերի լրահոսը, այլև հայ և համաշխարհային արվեստագետների, նկարիչների ստեղծագործությունների նկարները, ինչպես օրինակ Այվազովսկու, Ռեմբրանդտի, Մինաս Ավետիսյանի, Մարտիրոս Սարյանի, Պիկասոյի, Սալվադոր Դալիի և այլոց ստեղծագործությունների ֆոտոնկարների հոլովակները: Գրադարանում կարելի է կազմակերպել ոչ միայն գրքերի ցուցադրություններ, այլև բացել առանձին հոդվածների բովանդակությունը. այսպես օրինակ, «Արվեստագիր» հանդեսում տպագրված «Գրակառույցային ոգեշնչված կերպարվեստ» Դավիթ Պետրոսյանի հոդվածի հետքերով մեր գրադարանում կազմակերպվեց համանուն վերնագրով [ցուցադրությունը](#), ուր ներկայացված էին թե՛ գրքերը, թե՛ դրանց համաժեք ստեղծագործությունների ֆոտոնկարները: Այս հոդ-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

վածը կարելի է շարունակելի դարձնել՝ նույն տրամաբանությամբ ավելացնելով նորանոր գրքեր և նրանց շաղկապված ստեղծագործություններ: Այսպիսով, գրադարանավարը ընթերցողներին նպատակամղում է դեպի գրքերի և նյութերի ընթերցումը՝ օգտագործելով գիրքն օգտվողին հասցնելու լավագույն միջոցները:

Գրադարանավարն, անշուշտ, չի կարող կարդալ իր գրադարանի բոլոր գրքերը, բայց նա կարող է օգտագործել ընթերցողների ռեսուրսը՝ կարդացած գրքերին տրված մեկնաբանությունների տեսքով: Պետք է խոստովանեմ, որ անչափ հաճելի է կարդալ սաների սրտաբուխ մեկնաբանությունները: Հաճախ մենք՝ գրադարանավարներս, վերլուծում ենք մեր ընթերցողների գրքույկների տեղեկատվությունը կարդացած գրքերի վերաբերյալ: Պարզվում է՝ մեր սաները, բացի հանձնարարված գրականությունից, սիրում են կարդալ Պաուլո Կոելյո, Դեն Բրաուն, Ռեմարկ, Կաֆկա, Ստիվեն Քինգ և այլն:

Նախկինում գեղարվեստական գրքերի տիտղոսաթերթերին՝ մատենագիտական նկարագրության մեջ, հիմնականում նշվում էր՝ «դպրոցական միջին կամ բարձր տարիքի համար» կամ էլ «կրտսեր տարիքի համար»: Ներկայում տպագրված գրքերում բացակայում է այդպիսի բնորոշումը՝ գործառույթը թողնելով գրադարանավարին: Թեպետ բոլոր ժամանակներում էլ վիճելի է եղել այն հարցը, թե մանուկ և պատանի ընթերցողը իրավունք ունի՞ մեծերի համար նախատեսված գրականություն կարդալ, թե՞ ոչ: Այս իմաստով ռուս բանաստեղծ Եվտուշենկոն գրում է. «Երեխաների գրքերի ընտրության հարցում մեծերի՝ չափից ավելի խառնվելը, նրանց համար ստեղծում է ջերմոցային վիճակ»²: Այստեղ ծնողների և հոգեբանների կարծիքները երկփեղկվում են, իսկ ահա հետաքրքրասեր ընթերցողը, միև-

² Կոշկակարյան, Մ. (կազմ.) (1984), *Գիտահանրամարչելի գրականության դերը երեխայի կյանքում*, Երևան, 162:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

նույնն է, գտնելու և ընթերցելու է արգելված գիրքը: Ինչևէ, սա բավական լուրջ քննարկում պահանջող է, իսկ մինչ այդ «վերջին խոսքը» մնում է գրադարանավարին:

Ահա այսպես, գրադարանը պետք է մխրճվի կրթական հաստատության ամեն մի աշխատողի, սովորողի տարածք և ամուր հենարան լինի նրանց՝ կրթական կարիքների ապահովման ու բավարարման համար:

Դպրոցական գրադարանը մի կարևոր առաքելություն էլ ունի. դպրոցական գրադարանների IFLA–ի մանիֆեստը հռչակում է. «Գրադարանի աշխատողները աջակցում են գրքերի և տեղեկատվության այլ միջոցների օգտագործումը՝ սկսած վավերագրականից մինչև տպագիր և թվային ֆիլմերը, ինչպես տեղում, այնպես էլ հեռավորության վրա»³: Այլ կերպ ասած՝ գրադարանավարները պետք է օգնեն սովորողներին և աշխատակիցներին տիրապետելու նոր գործիքների՝ տեղեկատվությունը «սահմանելու, ուսումնասիրելու, ծրագրելու, կուտակելու, գնահատելու, կառավարելու և ճիշտ ներկայացնելու»⁴ նպատակով: Չէ՞ որ սովորողին անհրաժեշտ է մի խորհրդատու, որը կսովորեցնի ճիշտ կողմնորոշվել համաշխարհային սարդոստայնից հորդացող ահռելի մեծ տեղեկատվության դաշտում, (որն աճում է ֆանտաստիկ արագությամբ և նույնքան արագ էլ հնանում), գտնել ու գնահատել այդ տեղեկատվությունը՝ վերածելով և գտնելով գիտելիքի և փաստի միջև եղած սահմանաբաժանը:

Շիրակացու ճեմարանի կրտսեր դպրոցի գրադարանում կա հստակ սահմանված գրադարանի ժամ: Այս ժամի ընթացքում

³ IFLA School Library Guidelines 32, Ch. 4

<https://www.ifla.org/wp-content/uploads/2019/05/assets/school-libraries-resource-centers/publications/ifla-school-library-guidelines.pdf> (24.10.2024)

⁴ Bnet, M. (2011), The SCONUL Seven Pillars of Information Literacy

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կրտսեր սովորողները բարձրաձայն, դերային ընթերցելու, բեմականացումների միջոցով ձևավորում են արտահայտիչ և հասկանալով կարդալու, ընկալելու կարողություններ, զարգացնում վերլուծական միտքը: Մշակված է «Ետազոտական հմտություններ» հատուկ դասընթաց, որի ընթացքում սաները ծանոթանում են ակադեմիական ազնվության դրույթներին, հետազոտական աշխատանք կատարելու կարգին, սովորում են վերլուծել տվյալներ, գնահատել աղբյուրները, հետազոտական և անհատական աշխատանքներում օգտագործված գրականության ցանկը և հղումները գրագետ և ճիշտ ներկայացնել: Այսօր ամպային տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս պահպանել հսկայական ծավալով տեղեկատվություն: Եվ պատահական չէ, որ աշխարհի առաջադեմ կազմակերպությունները բացում են իրենց շտեմարանները՝ տեղեկատվությունը հասանելի դարձնելով հանրությանը, այն գիտակցությամբ, որ նախկինում հրապարակված տեղեկատվության օգնությամբ միայն հնարավոր կլինի ստեղծել նոր:

Շիրակացու ճեմարանը անդամակցում է Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիային, օգտվում հասանելի ռեսուրսներից: Մշտապես համագործակցային կապեր ենք փնտրում. մասնավորապես բաժանորդագրություններ ենք ունեցել Britannica առցանց հանրագիտարանին, EBSCO կրթական շտեմարաններին, 2025 թվականից էլ բաժանորդ կդառնանք Cambridge համալսարանական հրատարակչության ամսագրերի ամբողջական հավաքածուին, որը ներառում է գիտության տարբեր ճյուղերի վերաբերյալ բարձր հեղինակություն ունեցող ամսագրեր: Այս տեղեկատվությունը համահավաք ներկայացված է QR-ով, որտեղ ներառված են նաև բաց հասանելիություն ունեցող գիտակրթական հուսալի շտեմարանների հղումներ: Համապատասխան գրականություն ձեռքի տակ չունենալու

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

դեպքում միջգրադարանային բաժնույթի միջոցով պատվիրում և օգտվում ենք Հայաստանի ազգային գրադարանի, ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի գրապահոցներից՝ ապահովելով ճեմարանի անձնակազմին համապատասխան գրականությամբ:

Ժամանակի հետ կատարելագործվում են թվային տեխնոլոգիաները և նոր մարտահրավերներ հղում: Արհեստական բանականության մուտքը շատերն այսօր վախով են ընդունում՝ համարելով մարդկության գոյության դեմ ուղղված վտանգ: Ինչ խոսք, գրադարանավարս արդեն ընդունել է դարի մարտահրավերը, ըստ որում, եթե ծրագրային միջոցների կիրառությունը դժվարություններ է ստեղծում, միևնույն ժամանակ արդյունքում անսահման մեծ հնարավորություններ է տալիս՝ ծանոթացնելով ընթերցողներին գրքերին, գրավիչ ազդագրերի միջոցով առավել դյուրին դարձնում որոնման ճանապարհը:

Հակիրճ ներկայացնենք Շիրակացու ճեմարանի գրադարանի տարածքի բաշխվածությունն՝ ըստ գործառույթների և աշխատանքների բովանդակային կազմակերպումը:

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրն իր գործունեությունը ծավալում է հեղինակային՝ «Շնորհալի երեխաների բացահայտման, նրանց կրթության կազմակերպման և օժտվածության խնդիրների հետազոտության» կրթական ծրագրի հիման վրա, որը, որպես ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի արդյունք, մշակել է Աշոտ Ալիխանյանը⁵:

2013 թվականից սկսած՝ ճեմարանը «Միջազգային բակալավրիատ»-ի երեք ծրագրերով կրթություն է իրականացնում ավագ, միջին, կրտսեր դպրոցներում, ինչպես նաև նախակրթարանում:

⁵ Հեղինակ և հեղինակային իրավունքի իրավատեր գրանցված է հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում (թիվ 7/13, 01.03.2002 թ.):

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Շիրակացու ճեմարանի գրադարանը, որպես բազմաֆունկցիոնալ միջավայր վերակառուցվել է 2018 թ.՝ Շիրակացու զարգացման հիմնադրամի և բազմաթիվ հովանավորների աջակցությամբ: Զուգահեռ գործում է նաև կրտսեր դպրոցի գրադարանը, որից օգտվում են կրտսեր ճեմարանականները:

Մեր գրադարանը ընդհանուր մի սրահ է, որի մի մասը տրամադրել ենք գրադարակներին: Գրքերի ընտրությունը չի սահմանափակվում միայն աճող սերնդի հետաքրքրություններով, այլև ուշադրություն ենք դարձնում ողջ ճեմարանական համայնքի, այդ թվում նաև ուսուցչամանկավարժական անձնակազմի որոշակի ու անորոշ հարցադրումներին: Ընդհանուր սրահում տեղակայված են բաժնային և համընդհանուր, մեթոդական և ուսումնասօժանդակ գրականությունը, դասագրքային հավաքածուները, նոր գրքերը, նվիրատվությունները, գրքեր մանուկներին, խորհուրդ է տալիս մեր ընթերցողը, ստեղծագործում են ճեմարանականները, Bookcrossing ներճեմարանական գրքաշրջանառության անկյունը, սպասարկման հատվածը, բեմական մասը՝ պրոյեկտորով և էկրանով, համակարգչային տարածքը՝ WiFi կապով, մոնիտորից հեռարձակվող գրադարանային լրահույր, աշխատասենյակներն ու անհատական սենյակները: Գրապահոցում տեղադրված է գեղարվեստական գրականությունը: Նաև մեր տարածքը ապակեպատ է, ինչն ապահովում է դրանում տեղի ունեցող իրադարձությունների տեսանելիությունը: Գրադարանը ճեմարանի ամբիոններին օժանդակում է կազմակերպելու և անցկացնելու նշանավոր մարդկանց, հիշարժան տարեթվերին նվիրված զանազան միջոցառումներ, գրքերի քննարկումներ, որոնց հաճախ մասնակցում են գրողներ, գրականագետներ, թարգմանիչներ կամ տվյալ ոլորտի ակնառու ներկայացուցիչներ:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գրադարանի միջավայրը հնարավորություն է տալիս լավագույնս կազմակերպելու և վարելու գրական-երաժշտական դասեր, վիկտորինաներ, բանավեճեր և քննարկումներ, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստումներ, տեղեկատվական գրագիտության և հեղինակային իրավունքի, հետազոտական հմտությունների զարգացմանն ուղղված սեմինար պարապմունքներ: Հաճախելիության ցուցանիշը բարձր է, քանի որ գրադարանը գործում է բաց դարակային սկզբունքով, սպասարկումը կատարվում է նաև էլեկտրոնային փոստի միջոցով: Կարևորում ենք ժամանակ առ ժամանակ գրադարանային ծառայությունների մատուցման վերաբերյալ հարցումների անցկացումն ու դրանց վերլուծությունը՝ հետադարձ կապի միջոցով, ինչպես նաև՝ սպասարկման վայրում մշտադիտարկումը: Դա նպաստում է ընթերցողական պահանջարկի բավարարմանը: Գրադարանի անձնակազմը, թե՛ միջազգային, թե՛ հայաստանյան մասնագիտական շրջանակներում շարունակաբար մասնակցում է վերապատրաստման դասընթացներին, կլոր-սեղան քննարկումներին՝ նաև առցանց ձևաչափով, խստիվ պահպանում է հեղինակային իրավունքի օրենքը, ակտիվ համագործակցում է գրադարանային հանրության հետ նաև միջազգային հարթակներում՝ մշտապես կատարելագործելով և բարձրացնելով սպասարկման որակը:

Գրադարանն ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից է: Երեխաներին դեպի ընթերցանություն մղելու նպատակով կարևոր է գրադարանի տեսքը, հագեցվածությունը, հետաքրքիր, գունեղ, նկարագարդ գրքերով: Ունենք դասագրքային հավաքածուներ, որոնք թե՛ հանրակրթական դասագրքեր են և թե՛ Միջազգային բակալավրիատի կրտսեր, միջին և դիպլոմային ծրագրերով անհրաժեշտ ուսումնական դասագրքերը. դրանք պատվիրում ենք արտերկրյա հրատարակչություններից ու գրախանութներից՝ Քեմբրի-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ջից, Օքսֆորդից, Ֆոլլետտից և այլն: Մյուսը դա համընդհանուր հավաքածուն է, որը ներառում է թեմատիկ բաժնային գրականությունը: Հավաքածուները համալրում ենք ընթերցողական պահանջարկի և ուսումնամանկավարժական հայտերի հիման վրա:

Մեր գրադարանը սաների սիրելի վայրն է ոչ միայն այն առումով, որ ծանոթանում են գրքերի աշխարհին, այլև իրենց իսկ մասնակցությամբ կազմակերպում են միջոցառումներ:

Գրադարանն ամրապնդում է ուսուցիչ-սան-ծնող կապը, ձևավորում նրանց աշխարհընկալումը: Դե իսկ ժամանակակից տեխնիկայով հագեցած և հարմարավետ միջավայրը թելադրում է գրադարանային գործի և աշխատանքների կազմակերպման ինքնօրինակ գործելակերպ՝ ի շահ սովորողների, ուսուցիչների, մանկավարժների կրթական պահանջների բավարարման. այսպիսի միջավայրը այլևս դուրս է ավանդական պատկերացումներից:

2021 թ. մասնակցել ենք «Լավագույն գրադարան» մրցույթին՝ արժանանալով «Հատուկ մրցանակի»: Մեր գրադարանը բնորոշվեց յուրահատուկ ու տարբերվող, կատարած աշխատանքի և ներկայացման ձևաչափով:

2024 թ. մասնակցեցինք ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ «Հայկական գրադարանային ասոցիացիա» հ/կ-ի հայտարարած մրցույթին՝ հաղթող ճանաչվելով «Լավագույն դպրոցական գրադարան» անվանակարգում:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ 2024

*(Հիմնադրման 30-ամյակի առիթով)**

ՀՏԴ: 02:061(479.25)

ՄԱԴԼԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Խնկր Ապոր անվան ազգային մանկական գրադարան

2024 թ. հոբեյանական էր «Հայկական գրադարանային ասոցիացիա» /ՀԳԱ/ հասարակական կազմակերպության համար. լրացավ կազմակերպության հիմնադրման 30 ամյակը:

1994 թ. հոկտեմբերի 7-ին ծնունդ առած կազմակերպության նախաձեռնողները Հայաստանի Հանրապետության խոշոր գրադարանների ներկայացուցիչներն էին: Այն նպատակ ուներ համախմբել հանրապետության գրադարանային աշխատողներին՝ մասնագիտական հարցերի լուծման, գրադարանային գործի բարելավման և զարգացման համար:

Տարիների ընթացքում ասոցիացիան հանդես եկավ մի շարք կարևոր նախաձեռնություններով, որոնք նրան ճանաչում բերեցին: Կազմակերպվեցին կոնֆերանսներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ, քննարկումներ, որոնք առնչվում էին գրադարանային տարբեր խնդիրներին:

Ոլորտն ավելի ակտիվացավ, երբ 2004 թ. հոկտեմբերի 7-ը Հայաստանում ընդունվեց որպես Գրադարանավարի օր: Հետզհետե ընդլայնվող ծրագրերի իրագործման հետ մեկտեղ ավելի սերտ դարձավ համագործակցությունը պետական և հասարակական տարբեր

* Հոդվածը ներկայացվել է 24.11.2024, ընդունվել է տպագրության 19.12.2024:

The article was submitted on 24.11.2024, accepted for publication on 19.12.2024.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

կազմակերպությունների, ՀՀ մարզային և համայնքային գրադարանների հետ: Ընդգծելով ասոցիացիայի անցած 30-ամյա ուղին՝ անդրադառնանք 2024 թ. ձեռքբերումներին:

Տարին մեկնարկեց արդեն ավանդական դարձած «Ազգային գրադարանային շաբաթ - 2024» /ԱԳՇ/ ծրագրով, որն անցկացվեց «Գրադարանը նորարարության հարթակ» կարգախոսով ապրիլի 15-22-ը: Շաբաթվա շրջանակներում անցկացվեց 12 խոշոր միջոցառում՝ կլոր սեղան, գրքի շնորհանդես, վարպետության դաս, դասախոսություն, մասնագիտական և ճանաչողական այցեր ՀՀ մարզերի և Երևանի տարբեր բնույթի գրադարաններ: Թողարկվեց «Լրատու հայկական գրադարանային ասոցիացիայի» էլեկտրոնային հանդեսի 3-րդ համարը /2024 թ. 1-ի համարը/, որի շնորհանդեսն անցկացվեց ԱԳՇ-ի շրջանակներում, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում: Հանդեսի համարներում տեղ են գտել բազմաթիվ մասնագիտական հոդվածներ, որոնց հեղինակները Հայաստանի տարբեր գրադարանների աշխատակիցներն են ու ոլորտի մասնագետները:

Կարևորելով համայնքային գրադարաններում առկա խնդիրները՝ ասոցիացիայի վարչությունը կազմակերպեց կլոր սեղաններն արկում հրատարակիչների և Երևանի համայնքային գրադարանների գրադարանավարների մասնակցությամբ: Քննարկման ընթացքում բարձրացված խնդիրների՝ հատկապես գրադարանային հավաքածուների համալրման և գրադարանավարների վերապատրաստման վերաբերյալ եղան մի շարք առաջարկներ: Արդյունքում՝ ՀԳԱ նախագահ Ռուզան Տոնոյանը համապատասխան գրություն հղեց Երևանի քաղաքապետին՝ ի պատասխան ստանալով դրական արձագանք:

Մասնագիտական կարևոր նշանակություն ունեն «Կլոր սե-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ղան գրադարանավարների համար» սեմինարը՝ Շենգավիթ վարչական շրջանի թիվ 32 գրադարանում, որին մասնակցեցին նաև շրջանի թ. 16, 17 և 18 գրադարանների տնօրեններն ու գրադարանավարները: Հայկական գրադարանային ասոցիացիայի փոխնախագահ, գրադարանագետ-մատենագետ Ռաֆիկ Ղազարյանը ուղղորդեց գրադարանավարներին ճիշտ հիմքերի վրա դնել գրադարանային աշխատանքները: Դրան հաջորդեց Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Համո Սահյանի անվան գրադարանում կայացած մասնագիտական հանդիպումը:

Նման նպատակ էին հետապնդում նաև ասոցիացիայի նախագահ Ռուզան Տոնոյանի և փոխնախագահ Ռաֆիկ Ղազարյանի կատարած այցերը Գառնիի արվեստի, մշակույթի, սպորտի կենտրոնի, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Շուշանիկ Կուրդինյանի անվան հ. 17, 16, 32 համայնքային գրադարաններ: Այցի ընթացքում քննարկեցին մի շարք հարցեր գրադարանների գործունեության, հնարավորությունների, արդի մարտահրավերների շուրջ: Անդրադարձ կատարվեց նաև «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքում կատարված փոփոխություններին, ինչպես նաև ոլորտի զարգացման հեռանկարներին ու նոր հնարավորություններին: ՀԳԱ վարչության անդամ, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի գիտական ղեկավար Տիգրան Զարգարյանի անցկացրած սեմինարները ՀՀ մարզային գրադարաններում /Արարատ, Արմավիր, Վանաձոր/ նվիրված էին արհեստական բանականության թեմային և նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը գրադարաններում:

Որպես գրադարանային ոլորտի զարգացման էական բաղադրիչ համարելով մասնագիտական շարունակական կրթությունը՝ Հայկական գրադարանային ասոցիացիան այս տարի ևս իրական

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Նացրեց «Գրադարանավարների վերապատրաստման դասընթացներ» ծրագիրը: Մայիսի 20-24-ը և հունիս 3-7-ը կայացած դասընթացներին մասնակցեց Արտաշատի և Երևանի համայնքային գրադարանների 24 աշխատակից: Հնգօրյա դասընթացների ընթացքում ոլորտի փորձառու մասնագետները մասնակիցներին փոխանցեցին գրադարանային գործի տարբեր գործառույթների վերաբերյալ համապատասխան գիտելիքներ և գործնական հմտություններ: Մասնակիցներին տրվեցին վկայականներ:

Իր տեսակով առանձնահատուկ և կարևոր նախաձեռնություն էր «Հայկական գրադարանային ասոցիացիա» հասարակական կազմակերպության 2024 թ. հայտարարված մրցույթը՝ «Լավագույն գրադարան» անվանակարգում (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ): Նպատակը գրադարանների հանրայնացումն էր, լավագույն աշխատանքների խրախուսումը, գրադարանի և գրադարանավարի դերի կարևորումը, ընթերցանության խթանմանը միտված նորարարական գաղափարների ներդրումը: Մրցույթն անցկացվեց 6 անվանակարգերում: Մասնակցեց Հայաստանի տարբեր բնույթի 70 գրադարան: Արդյունքներն ամփոփվեցին հոկտեմբերի 7-ին՝ Գրադարանավարի օրը, Խնկո Ապրի անվան ազգային մանկական գրադարանում: Հաղթողներին տրվեցին մրցանակներ, պատվոգրեր, գրքեր: Նման նախաձեռնությունը, հուսանք, ոգևորիչ նշանակություն կունենա և խթան կհանդիսանա՝ աշխատանքները լավագույնս դարձնելու համար:

Ամփոփելով անցնող 2024 թ. կատարված աշխատանքները և գրադարանային ոլորտի արդի խնդիրները՝ «Հայկական գրադարանային ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը նախատեսում է գալիք 2025 թ. իրագործել Հայաստանում գրադարանային գործի զարգացմանը միտված նոր ծրագրեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագրի սյունակ 3

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Մենթորություն: Գրադարանային մենթորությունը՝
որպես մասնագիտական առաջընթացի գործիքակազմ..... 5*

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԶԱՐԳԱՐՅԱՆ

*Ինչպե՞ս կարող են գրադարաններն ապրումակցել իրենց
օգտատերերին և փոխակերպել իրենց թվային փորձառությունը.... 21*

ԳԱՐԵԳԻՆ ՂՈՉԻԿՅԱՆ

*Հեղինակավոր գրառումները՝
որպես գրադարանային գործիք..... 50*

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

*Մանկական գրադարանները
ժամանակակից աշխարհում..... 62*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

*Ընթերցողների սպասարկումը
Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում..... 73*

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Եղիշե Չարենցի անձնական գրադարանը..... 89

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Արժեքավոր տպագիր գրքերի
մասնավոր հավաքածուն..... 103*

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՌՈՒԶԱՆՆԱ ԵՂԻԿՅԱՆ

*Ճեմարանը գրադարանի մեջ.....*125

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՄԱԴԼԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Հայկական գրադարանային ասոցիացիա 2024.....*136

CONTENTS

Editor-in-Chief's Column 3

THEORY AND PRACTICE

ARMINE HOVHANNISYAN

*Mentoring: Library Mentoring
as a toolkit for professional programs..... 5*

21ST CENTURY LIBRARY

TATEVIK ZARGARYAN

*How can libraries empathize with their users
and transform their digital experiences?..... 21*

GAREGIN GHOCHIKYAN

Authoritative records as a library tool..... 50

CHILDREN'S LIBRARIES

NAIRA ATSHEMYAN

Children's libraries in the modern world..... 62

KARINE HOVHANNISYAN

*Circulation Service in the
Khanko Aper National Children's Library 73*

CULTURAL HERITAGE

MAYA GRIGORYAN

The personal library of Yeghishe Charents..... 89

SATENIK GRIGORYAN

The private collection of valuable printed books 103

LIBRARIES OF EDUCATIONAL INSTITUTIONS

RUZANNA EGHIKYAN

The Seminary in the Library..... 125

LIBRARY ASSOCIATION

MADLEN HOVSEPYAN

Armenian Library Association 2024..... 136

Հայերեն բաժնի խմբագիր
Հայերեն բաժնի սրբագրիչ
Անգլերենի խմբագիր և սրբագրիչ՝
Համակարգչային ձևավորում և էջադրում՝

Նելլի Հայրապետյան
Գոհար Սարգսյան
Նունե Շահումյան
Ռուզաննա Թումանյան

Editor of Armenian section
Proofreader for Armenian section
Editor and proofreader of English
Computer design and pagination

Nelly Hayrapetyan
Gohar Sargsyan
Nune Shahumyan
Ruzanna Tumanyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24/6

Address: Marshal Baghramyan ave. 24/6, 0019, Yerevan, Armenia

Ամսագրի պաշտոնական կայքէջը՝
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

Official site of the journal
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

